

## **በዓ ሆሊዬን ረገዳሁ**

*«Նյու Լայֆ Արմենիա» բարեգործական  
հիմնադրամը շնորհակալություն է հայտնում  
Եկեղեցասիրաց եղբայրակցության ղեկավար և  
«Ոչ միայն հյուսն» գրքի գլխավոր խմբագիր  
Համլետ Զաքարյանին՝  
այս գրքի թարգմանության և խմբագրության  
համար:*

*ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ*

# *ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ*

*ԵՐԵՎԱՆ - 2004*

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Ինչո՞ւ, երբ Աստծո վերաբերյալ մի հարց է քննարկվում, ոչ ոք չի բորբոքվում, մինչդեռ, երբ Հիսուսի անունն է հիշատակվում, մարդիկ հաճախ ուզում են ընդհատել այդ խոսակցությունը կամ դժկամում են:

Ինչո՞ւ են մարդիկ այդքան տարակարծիք

Ո՞վ է ՀԻՍՈՒՍԸ

հարցի շուրջ:

Գիրքը լույս է տեսնում հեղինակի  
արտոնությունը և օրհնությունը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Հ.Գ. ԶԱԲԱՐՅԱՆ  
ԽՄԲԱԳԻՐ՝ Վ. ԱՎԱԳՅԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈԽՅԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերախմբագրումը և համակարգչային  
ծառայությունը եկեղեցասիրաց Եղբայրակցություն

**ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ Է**

© «ՆՅՈՒ ԼԱՅՑ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

**ԳԻՐՔԸ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՁԷ**

## ՀՐԱՏԱՐԱԿԶԻ ԿՈՂՄԻՑ

Ութ տարի առաջ Ջոշ Մաք-Դաուելլի «Ոչ միայն Հյուսն» գրքի լույս ընծայումը և տարածումը լուրջ ներդրում էր հայ ջատագովական գրականության վերագարթոնքի մեջ: Ներկայումս, երբ ուսանողների, երիտասարդության նոր սերունդ է երևան եկել, կարծում ենք, որ գիրքը կնպաստի Հիսուս Քրիստոսի մասին ճիշտ գաղափար կազմելուն, Նրան ճանաչելուն և վայելելուն: Ինչպես նաև հետաքրքրություն կառաջացնի Եկեղեցու կողմից մեզ բերած և հասցրած Աստվածաշնչի հանգեպ, որպեսզի այն դառնա մեր ամենօրյա «ՀԱՅԸ»՝ դաստիարակելով մեր մեջ առաքինություն՝ ամեն օր Աստծո խոսքը կարդալու և կարգացածի շուրջը խոկալու:

Այսօր մեր երկիրը ողողված է բազմատեսակ էժանազին, նույնիսկ ծիծաղելի գաղափարների պրոպագանդող ամենատարբեր գրքերով:

Արժեքների փոփոխության այս բարդ ժամանակահատվածում շատ վտանգավոր է կեղծ և արհեստական, նաև շինծու և մեր ազգային ընկալմանը խորթ ուսմունքների տարածումը:

Ավետարանը մեզ ուղղակի խորհուրդ է տալիս՝ «Ամեն բան քննել և միայն բարին ամուր բռնել», կամ՝ «Ամեն հոգու չհավատալ, այլ քննել Աստծուց է, թե՛ ոչ»:

Այս գիրքը հարուստ է համարձակ հարցադրումներով, որոնք հեղինակն անշտապ, մեկ առ մեկ քննում է, քննարկում՝ խուսափելով անհարկի ծայրահեղություններից և չվախենալով առճակատումից: Նպատակը մեկն է՝ ճանաչել ճշմարտությունը, հասկանալ կյանքի իմաստը և ճիշտ ընթացքով մոտենալ Արարչին:

Բազմաթիվ մեծահամբավ գիտնականների գրքերից մեջբերումներով հարուստ այս գիրքը ոչ միայն հեռու է պահում մեզ ծայրահեղ, ֆանատիկ ընկալումներից, այլև ծանոթացնում է հեղինակի գիտական մոտեցման բազմակողմանիությանը և խոհեմ եզրակացություններ անելու համար անհրաժեշտ, բազմազան ու բազմաշերտ հարցերը քննելու կարողությանը:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Այս գրքի շատ օրինակներ ութսունական թվականներին մեր կողմից տարածվում էին գանազան բնակավայրերում, և ի գարմանս մեզ՝ նրանք, ովքեր կարդում էին այն, սկսում էին շատ լուրջ, քննելով կարգալ և սերտել Աստվածաշունչը, մի գիրք, որը գրքերի Գիրքն է և պատմում է մարդու և Աստծո հարաբերությունների, Հիսուս Քրիստոսի կյանքի մասին: Անցած տարիների այս փորձառությունն է մեզ գրդել գիրքը վերահրատարակելու:

Ուրախությամբ ենք նշում, որ հեղինակն անձամբ արտոնել և խրախուսել է այս գրքի թե՛ առաջին և թե՛ երկրորդ հրատարակումը, որը և սիրով ու հավատով, նաև աղոթքով ներկայացնում ենք մեր ժողովրդին: Հարկ է, որ ոչ թե կույր հավատով, այլ լուրջ քննված հավատով սկսենք կարդալ Ավետարանը՝ փոխելով մեր կյանքը, մեր ընթացքը, մեր ընտանեկան և ընկերային հարաբերությունները:

Երկրորդ հրատարակությունն ամբողջությամբ նոր թարգմանություն է՝ ճշտված և խմբագրված: Բնագրում եղած հսկա ցանկը բաց է թողնված, գիրքը չձանրաբեռնելու նկատառումով:

Տաղանդավոր հեղինակի դասախոսությունների այս շարքը սիրով ներկայացնելով մեր ժողովրդին՝ հույս ենք տածում, որ այն կնպաստի ծայրահեղ մտածողությունից ձերբազատվելու և հավասարակշռված շարունակելու մեր կարճ կյանքն այս երկրի վրա և կօգնի ոչ միայն իմաստավորելու մեր ներկան, այլև նախապատրաստվելու հավիտենականություն տեղափոխվելուն:

**Հ. Գ. Զաքարյան**

Հայ Առաքելական Եկեղեցու  
Եկեղեցասիրաց Եղբայրակցություն

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ահա 2000 տարի է, ինչ Հիսուսը հայտնվել է մարդկությանը: Նա ծնվել է չունևոր ընտանիքում, հրեական մի փոքրիկ քաղաքում: Իր ողջ կյանքն անց է կացրել աշխարհի ամենափոքր երկրներից մեկում, այն էլ՝ օտարներից նվաճված: Նա ապրել է երեսուներեք տարի, ընդ որում Իր կյանքի միայն երեք տարիներն է նվիրել մարդկանց ծառայելուն:

Այդ դեպքում ինչո՞ւ են բովանդակ աշխարհում մարդիկ մինչև այսօր հիշում նրան: Մեր օրացույցի յուրաքանչյուր թերթիկ կամ ամեն գրքի տիտղոսաթերթ, ուր նշված է հրատարակության տարեթիվը, հիշեցնում են մեզ, որ Հիսուսն ունեցել է հողագնդի վրա երբեկեցե ապրված ամենանշանակալի կյանքը:

Մի օր հուշակավոր գրող և պատմաբան Հ. Ջ. Ուելսին հարցնում են, թե իր կարծիքով պատմական ո՞ր անձնավորությունն է ամենախոր հետքը թողել մարդկության պատմության մեջ: Նա պատասխանում է, որ՝ եթե չափելու լինենք մարդկային մեծությունը պատմության մասշտաբով, ապա «Հիսուսն, անտարակույս, գրավում է առաջին տեղը»:

Պատմաբան Քենեթ Աքոթ Լատուրեթն ասել է. «Դարերը հաջորդում են իրար, և յուրաքանչյուրն իրենից հետո նորանոր ապացույցներ է թողնում այն մասին, որ պատմության ընթացքի վրա ազդելու իմաստով Հիսուսի կյանքն ամենանշանակալին է մեր մոլորակի վրա երբեկեցե ապրված բոլոր կյանքերից: Դեռ ավելին, այդ ազդեցությունը չի նվազում, այլ դարից դար մեծանում է»:

Էռնեստ Ռենանն արել է հետևյալ գիտողությունը. «Հիսուսը մարդկության պատմության մեջ ամենամեծ կրոնական հանճարն է: Նրա գեղեցկությունը հավերժական է, և Նրա թագավորությունն՝ անվախճան: Նա բացառիկ է բոլոր առումներով. ողջ պատմության մեջ չկա մի անհատ, որին կարելի լիներ դնել Նրա կողքին: Առանց Քրիստոսի անհնար է ըմբռնել մարդկության պատմությունը»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| 1. Ինչո՞վ է նա տարբերվում մյուսներից .....                             | 9  |
| 2. Աստված է, խաբեբա՞, թե՞ խենթ .....                                   | 19 |
| 3. Իսկ գիտությունն ի՞նչ ասենք .....                                    | 27 |
| 4. Աստվածաշունչ.<br>կարելի՞ է այն վստահելի համարել .....               | 31 |
| ՊԱՏՄԱ.- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ .....                                   | 36 |
| ՆԵՐՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ .....                                  | 38 |
| ԱՐՏԱՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ .....                                 | 42 |
| 5. Ո՞վ մեռնելու կգնա սուտ բանի համար .....                             | 45 |
| 6. Սպանված Մեսիա՝ սպանված հույսեր .....                                | 53 |
| 7. Լսե՞լ եք՝ ինչ է պատահել Սողոմոն .....                               | 57 |
| 8. ՔՐԻՍՏՈՍ հարյա՛վ ի մեռելոց.<br>Օրհնյա՛լ է հարությունը ՔՐԻՍՏՈՍԻ ..... | 64 |
| ՀԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ .....  | 65 |
| ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵՉՄԱՆԸ .....   | 65 |
| ԳԵՐԵՉՄԱՆ ԷՒՆ ՇՓՈԹԵԼ .....  | 67 |
| ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾ .....   | 67 |
| ՄԱՐՄԻՆԸ ՓԱԽՑՐԵԼ ԷՒՆ .....  | 68 |
| ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ .....                                   | 69 |
| 9. Ո՞վ է այստեղ իսկական Մեսիան,<br>թող ձեռք բարձրացնի .....            | 72 |
| 10. Մի՞թե այլ ճանապարհ չկա .....                                       | 79 |
| 11. Նա վերափոխեց կյանքս .....  | 83 |
| Անձնանունների ցանկ .....   | 92 |

# 1

## ԻՆՉՈ՞Վ Է ՆԱ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄՅՈՒՄՆԵՐԻՑ

Ոչ այնքան վաղուց, Լոս Անջելոսում մի խումբ մարդկանց հետ գրուցելիս, այս հարցը ավի-

-Ո՞վ էր, ձեր կարծիքով, Հիսուս Քրիստոսը:

-Նա կրոնական մեծ առաջնորդ էր, - պատասխանեցին ինձ:

Համաձայն եմ դրան: Անշուշտ, Հիսուս Քրիստոսը կրոնական մեծ առաջնորդ էր: Սակայն ես համոզված եմ, որ Նա միայն կրոնական մեծ առաջնորդ չէր:

Դարեր շարունակ մարդիկ վիճել են, թե ո՞վ էր, ի վերջո, Հիսուսը: Ինչո՞ւ է այդքան վեճ եղել այդ անձի շուրջը: Ինչո՞ւ է Նրա անունը մարդկանց մեջ անհամեմատ ուժգին անդրադարձ առաջացնում, քան կրոնական մյուս առաջնորդներինը: Ինչո՞ւ, երբ Աստծո վերաբերյալ մի հարց է քննարկվում, ոչ ոք չի բորբոքվում, մինչդեռ, երբ Հիսուսն է հիշատակվում, մարդիկ հաճախ ուզում են ընդհատել այդ խոսակցությունը կամ դժկամում են: Լոնդոնում, երբ Հիսուսի մասին բան էի ուզում պատմել տաքսու մի վարորդի, սա իսկույն խոսքս կտրեց.

-Ես ընդհանրապես չեմ սիրում կրոնի մասին խոսել: Մանավանդ՝ Հիսուսի...

Ինչո՞ւ Բուդդայի, Մահմեդի և Կոնֆուցիոսի անուններն առաջ չեն բերում այդպիսի ցավազին հակազդեցություններ:

Պատճառն այն է, որ միայն Հիսուսն է Իրեն Աստված հայտարարել: Հենց սա է Նրա գլխավոր տարբերությունը մյուսներինը:

Հիսուսին ճանաչող մարդիկ շատ շուտ հասկացան, որ Նա Իրեն համարում է ոչ թե սոսկ մարգարե կամ ուսուցիչ, այլ բացահայտորեն հավակնում է Աստծո ազգակիցը լինելու: Նա պնդում էր, թե միայն Իր մեջ ու միայն Իրենով է ճանապարհն առ Աստված և դեպի մեղքերի թողություն ու փրկություն:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Շատերին թվում է, թե այս բացառիկությունը չափից ավելի է սահմանափակում իրենց, և չեն ուզում հավատալ դրան: Սակայն սովյալ դեպքում բանն այն չէ, թե մենք ուզում ենք կամ չենք ուզում հավատալ: Խնդիրը դեռևս այլ է. Իրեն ո՞վ էր համարում Հիսուսն Ինքը: Ի՞նչ են ասում այս մասին Նոր Կտակարանում ամփոփված նյութերը:

Հաճախ լսում ենք «Քրիստոսի աստվածային էությունը» բառակապակցությունը, այն է, թե՛ Հիսուս Քրիստոսն Աստված է:

Ա. Սթրոգն իր «Համակարգային աստվածաբանություն» մեջ առաջարկում է Աստծո հետևյալ սահմանումը. «Այն անսահման և կատարյալ Հոգի է, Որի մեջ ամենայն գոյ գտնում է իր սկիզբը, շարժիչ ուժը և վերջը»:

Այս սահմանումը հարմար է ցանկացած հավատի համար, այդ թվում նաև մահմեդական և Հրեական կրոնների համար: Թեև ինքն ուսուցանում է, որ Աստված անձ է, և որ տիեզերքը Նա է մտահղացել և ստեղծել: Աստված պահպանում է կյանքը նրա մեջ և ղեկավարում է այն մինչ այսօր:

Քրիստոնեական դավանաբանությունն այդ սահմանմանն ավելացնում է ևս մեկ տարր. «...Եվ Որը մարմնացավ որպես Նազովրեցի Հիսուս»:

Հիսուս Քրիստոսը սովորական անունն չէ: Այն, ավելի ճիշտ, տիտղոս է: «Հիսուս» անունը ծագում է «հեշուս» (կամ Յոշուս) անվան հունական տարբերակից, որը թարգմանաբար նշանակում է «Փրկիչ Յահվե» կամ էլ՝ Տերը Փրկիչ է: Իսկ «Քրիստոս» տիտղոսը վերցված է հունարենից և նշանակում է «Մեսիա» (եբրայերեն՝ «Մաշիա») կամ ուղղակի՝ «օծյալ» (Դանիել 9.26): Այս տիտղոսը՝ «Քրիստոս», միաժամանակ ենթադրում է թագավորական և քահանայական պաշտոն և Հիսուսին հաստատում է որպես թագավորի ու քահանայի՝ ավետված Հին Կտակարանի մարգարեություններով: Այս հաստատումը որոշիչ նշանակություն ունի Հիսուսին ու քրիստոնեությունն իսկապես հասկանալու համար:

Նոր Կտակարանը Քրիստոսին հստակորեն նկարագրում է որպես Աստծո: Այն անունները, որոնցով Նոր Կտակարանի մեջ կոչվում է Քրիստոսը, պատշաճ են միայն Աստծուն:

Օրինակ՝ Հիսուսն անվանվում է Աստված հետևյալ արտահայտություն մեջ. «Ու սպասենք այն երջանիկ հույսին և մեծ Աստծո ու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնվելուն» (Տիտոս 2. 13, Հովհ. 1.1, Եբր. 1.8, Հռոմ. 9.5, Ա. Հովհ. 5.20-21): Սուրբ Գիրքը Նրան օժտում է այնպիսի հատկություններով, որոնք կարող են բնորոշ լինել միայն Աստծուն: Մենք իմանում ենք, որ Հիսուսը կյանքի աղբյուր է (Հովհ. 1.4, 14.6), ամենագոյ է (Մատթ. 28.20, 18. 20), ամենագետ է (Հովհ. 4.16-19, 6.64, Մատթ.

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

17.22-26), ամենակարող է (Հայտն. 1.8, Ղուկ. 4.39-42, 7.14-15, Մատթ. 8. 26-27) և անմահ (Ա. Հովհ. 5.11, 12. 20, Հովհ. 1.4):

Հիսուսն այնպիսի մեծարանքներ ու երկրպագություններ էր ընդունում, որոնք միայն Աստծուն են պատշաճ: Խոսելով Սասանայի հետ՝ Հիսուսն ասում է. «Գրված է՝ Քո Տեր Աստծո՛ւն պիտի երկրպագես և միայն Նրա՛ն պիտի պաշտես» (Մատթ. 4.10): Եվ, այդուհանդերձ, Հիսուսը երկրպագություններ է ընդունել որպես Աստված (Մատթ. 14.33, 28.9), իսկ երբեմն էլ նույնիսկ պահանջել է Աստծուն վայել երկրպագություն (Հովհ. 5.23, Եբր. 1.6, Հայտն. 5.8-14): Հիսուսի հետևորդները մեծ մասամբ մեկ և միակ ճշմարիտ Աստծուն հավատացող ուղղափառ Հրեաներ էին, մինչև ուղնուծուծը միաստվածական, բայց և այնպես Նրան ճանաչեցին որպես մարդեղացած Աստծո:

Տեսականորեն ով-ով, բայց Պողոսը, որը մտադիր էր դառնալ ռաբբունի և համակողմանի կրթություն էր ստացել, պետք է որ մյուսներից ավելի նվազ պատրաստ լիներ ընդունելու Հիսուսի աստվածային էությունը և երկրպագելու նագովրեցի այդ մարդուն՝ կոչելով Աստված: Եվ, սակայն, հենց Պողոսը խոստովանեց այդ՝ ասելով. «Զգո՛ւյշ եղեք ձեր անձերի և ամբողջ Տոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչ կարգեց ձեզ՝ հովվելու Տիրոջ եկեղեցին, որ Նա Իր արյունով փրկագնեց» (Գործք 20.28):

Երբ Քրիստոսը Պետրոսին հարցրեց, թե ո՞վ է Ինքը, Պետրոսը պատասխանեց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Մատթ. 16.16): Հիսուսը ոչ միայն չհերքեց կամ չմերժեց Պետրոսի արած հետևությունը, այլև հաստատեց այն ու մատնացույց արեց տեղեկություն արձայնը. «Երանի՛ է քեզ, Սիմո՛ն, Հովնանի որդի, որովհետև մարմինն ու արյունը չէ, որ հայտնեցին սա, այլ՝ իմ հայրը, որ երկնքում է» (Մատթ. 16.17):

Մարթան, որը լավ էր ճանաչում Հիսուսին, ասաց նրան. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ Դու Քրիստոսն ես, Աստծո Որդին, որ պետք է աշխարհ գայիր» (այսինքն՝ Մեսիան) (Հովհ. 11.27):

Ապա Նաթանայիլը, որը կարծում էր, թե Նագարեթից որևէ լավ բան չի կարող դուրս գալ, Հիսուսի հետ գրուցելիս խոստովանեց. «Դո՛ւ ես Աստծո Որդին, Դո՛ւ ես Իսրայելի Թագավորը» (Հովհ. 1.49):

Երբ քարկոծում էին Ստեփանոսին, նա աղոթում էր ու ասում. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք 7. 58): Եբրայեցիներին հղված ուղերձի հեղինակը Քրիստոսին Աստված է անվանում. «Որդու մասին ասում է. Քո դահը, ո՛վ Աստված, Հավիտյանս Հավիտենից է» (Եբր. 1.8):

Հովհաննես Մկրտիչն ավետեց Հիսուսի գալուստը՝ ասելով. «Եվ Սուրբ

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Հոգին մարմնավոր տեսքով, որպես աղավնի իջավ Նրա վրա. և երկնքից մի ձայն եկավ, որ ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ հաճությունը» (Դուկաս 3.22):

Եվ, ի վերջո, մենք ունենք Թովմասի խոստովանությունը, որին բոլորը գիտեին որպես «անհավատ Թովմաս»: Իր բնավորությամբ նա, թեև, նման էր այժմյան ուսանողներին: Նա ասաց. «Մինչև ձեռքերում մեխերի նշանը չտեսնեմ և մատս մեխերի տեղը չզննեմ ... չեմ հավատա» (Հովհ. 20.25):

Ես լիովին հասկանում եմ նրան: Արտահայտվելով ժամանակակից լեզվով՝ նա ասել է.

- Գիտե՞ք, վերջիվերջո, ամեն օր չէ, որ մարդիկ հաւնում են մեռելներից և իրենց ներկայացնում որպես մարմնացյալ Աստված: Ինձ ապացո՛ւյց է պետք:

Ութ օր անց այն բանից հետո, երբ Թովմասը իր կասկածն էր հայտնել աշակերտներին, «Հիսուսը եկավ, երբ դռները փակ էին, կանգնեց նրանց մեջ և ասաց. Նստեղծություն ձեզ: Հետո Թովմասին ասում է. Մտո՞ղ այստեղ տուր ու տես իմ ձեռքերը. ձեռքդ այստեղ տուր ու դիր իմ կողմի մեջ, և մի՛ հղի՛ր անհավատ, այլ՝ հավատացյալ: Եվ Թովմասը պատասխանեց ու ասաց Նրան. Իմ Տեր և իմ Աստված: Հիսուսն ասում է նրան. Դու հավատացիր, քանի որ տեսար ինձ. երանի՛ր նրանց, որ չեն տեսել ու հավատացել են» (Հովհ. 20.26-29):

Այսինքն՝ Հիսուսն ընդունեց, երբ Իրեն որպես Աստծո գիմեցին: Նա Թովմասին կշտամբեց թերահավատության համար, այլ ոչ թե՛ երկրպագության:

Որևէ քննադատ կարող է առարկել, թե Քրիստոսի մասին այս բոլոր տեղեկությունները գալիս են ուրիշներից, այլ ոչ թե՛ հենց Իրենից: Դասախոսություններիս ժամանակ ուսանողները երբեմն ինձ վեհանձնաբար հայտարարում են, թե Քրիստոսի ժամանակակիցներն էլ Նրան չեն հասկացել ճիշտ այնպես, ինչպես հիմա մենք չենք հասկանում Նրան: Այլ կերպ ասած՝ Քրիստոսն Իրեն Աստված չի համարել:

Ես ոչ մի կասկած չունեմ, որ Հիսուսն Իրեն համարել է Աստված: Իմ այս համոզմունքն ամենաանմիջական կերպով ամրապնդվում է Նոր Կտակարանի տեքստերով: Նմանօրինակ վկայություններ շատ կան, և դրանց նշանակությունը միանգամայն պարզ է:

Մի գործարար երկար ժամանակ ուսումնասիրում էր Սուրբ Գիրքը, որպեսզի իր համար պարզի, թե Քրիստոսն Իրեն Աստված համարե՞լ է, թե՞ ոչ: Եվ մի օր վերջապես ասաց. «Ով կարգա Նոր Կտակարանը և չտեսնի, որ

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Քրիստոսն Իրեն Աստված է Համարել, նա պարզապես կույր է, եթե ոչ՝ ավելի վատ բան: Դա նույն բանն է, ինչ պայծառ օրով փողոցում զբոսնես և ասես, թե արև չես տեսնում»:

Հովհաննեսի Ավետարանում նկարագրված է Հիսուսի և Հրեա կրոնավորների բախումը: Հիսուսը շաբաթ օրով ապաքինեց մի կաղ մարդու և նրան ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ անկողիդ և քայլիր»:

«Եվ հրեաները Հիսուսին հարածում էին, որովհետև այդ բաները շաբաթ օրն էր անում: Իսկ Հիսուսը նրանց պատասխանեց. Իմ հայրը մինչև այժմ գործում է, ես էլ եմ գործում: Եվ հրեաները առավել ևս ուզում էին սպանել Նրան, քանի որ Նա ոչ միայն շաբաթն էր խախտում, այլև Աստծուն Իր Հայրն էր անվանում՝ Իրեն հավասար դարձնելով Աստծուն» (Հովհ. 5.16-18):

Անշուշտ, ինձ կարող են առարկել.

- Սպասի՛ր, Ջոշ, ես էլ կարող եմ ասել. «Իմ հայրը մինչև Հիմա աշխատում է, ես էլ եմ աշխատում»: Ուրեմն՝ ի՞նչ: Դա դեռևս ոչինչ չի ապացուցում:

Ես սրան այսպես կարող եմ պատասխանել: Հետազոտելով ցանկացած նյութ՝ մենք միշտ պետք է հիշենք տվյալ դարաշրջանի լեզուն, մշակույթը և, որ ամենակարևորն է, հաշվի առնենք, թե ում է հասցեագրված այս կամ այն խոսքը: Տվյալ դեպքում բանը հրեական մշակույթի մասին է, և Հիսուսի խոսքն ուղղված է Հրեա կրոնավորներին: Եկեք տեսնենք, թե սրանից 2000 տարի առաջ ինչպե՞ս էին հրեաները հասկանում Հիսուսի խոսքերը՝ սեփական մշակույթի շրջանակներում: «Եվ հրեաներն առավել ևս ուզում էին սպանել Նրան, քանի որ Նա ոչ միայն շաբաթն էր խախտում, այլև Աստծուն Իր Հայրն էր անվանում՝ Իրեն հավասար դարձնելով Աստծուն» (Հովհ. 5.18):

Ի վերջո, ի՞նչն էր այդպիսի ցասումնալի հակազդեցությունն առաջացրել:

Ահա թե ինչը: Հիսուսն ասել էր. «Իմ Հայրը», այլ ոչ թե՝ «Մեր Հայրը», և դեռ ավելացրել էր՝ «մինչև այժմ գործում է»: Դրանով իսկ Նա Իրեն հավասարեցրել էր Աստծուն և Իր գործողություններն Աստծո գործերին համահավասար դասել:

Հրեաներն Աստծուն չէին կոչում «Հայր իմ»: Իսկ եթե երբեմն էլ կոչում էին, ապա ճշտելով՝ «Հայր երկնային»: Իսկ Հիսուսն այդ չարեց: Երբ Նա Աստծո մասին ասաց «Իմ Հայրը», ապա դրա մեջ կար մի դրույթ, որը հրեաները չէին կարող չհասկանալ: Բացի այդ, Հիսուսը նկատի ուներ, թե՛ քանի դեռ Տեր Աստված աշխատում է, Ինքը՝ Նրա Որդին, ևս աշխատելու է:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Հրեա կրոնավորները հիանալի հասկացել էին Նրա խոսքերի իմաստը, որը նշանակում էր, թե Ինքը Աստծո Որդին է: Ուստի նրանց ատելությունը Քրիստոսի հանդեպ ավելի էր սաստկացել: Եթե առաջ նրանք ձգտում էին միայն վնասել Նրան, ապա այժմ ցանկանում էին սպանել:

Քրիստոսը ոչ միայն հավակնում էր հավասարվել Աստծուն, Որին Իր Հայրն էր համարում, այլ պնդում էր, թե Ինքն ու Աստված մի են: Երուսաղեմում, նավակատիքին հրեաները Հիսուսին հարցրին, թե Ինքը Քրիստոս՞ն է: Հիսուսը դրականորեն պատասխանեց հարցին և ավելացրեց. «Ես և Հայրը մի ենք» (Հովհ. 10.30): «Հրեաները դարձյալ քարեր վերցրին, որ նրան քարկոծեն: Հիսուսը նրանց պատասխանեց. Շատ բարի գործեր ցույց տվեցի՝ ձեզ Իմ Հորից, դրանցից ո՞ր գործի համար եք Ինձ քարկոծում: Հրեաները պատասխանեցին Նրան. Բարի գործի համար չէ, որ Քեզ քարկոծում ենք, այլ հայհոյություն համար, և քանի որ մարդ լինելով, Քեզ Աստված ես դարձնում» (Հովհ. 10.31-33):

Միայն զարմանալ կարելի է այդ հակազդեցություններից, որ առաջացրին Հիսուսի խոսքերը. «Ես և Հայրը մի ենք»: Եթե քննենք Ավետարանի հունարեն բնագիրը, ապա ի հայտ կգա մի հետաքրքիր երևույթ: Հետազոտող Ա. Ռոբերտսոնը նշում է, որ հունարեն «մի»-ն չեզոք, այլ ոչ թե արական սեռի բառ է և նշանակում է ոչ այնքան ֆիզիկական միություն կամ նպատակների միասնություն, որքան՝ միասնական էություն կամ բնություն: Նա գրում է. «Հոր և Որդու միջև եղած կապի մասին Քրիստոսի հավաստիացումները այդ հակիրճ նախադասության մեջ հասնում են կիզակետին: Ուստի և այն առաջացնում է փարիսեցիների այդօրինակ ցատումը»:

Պարզ է, որ այդ խոսքը լսած մարդիկ այլևս չէին տարակուսում, թե Հիսուսն Իրեն Աստված է համարում: Լեոն Մորիսը՝ Մելբուռնի Ռիդլիի անվան քոլեջի դեկանը, գրում է. «Հրեա առաջնորդները Հիսուսի խոսքերի մեջ տեսնում էին միայն աստվածահայհոյություն, և նրանք դատ ձեռնարկեցին: Ըստ օրենքի՝ Աստծուն հայհոյելը պետք է պատժվեր քարկոծմամբ (Ղևտ. 24.16): Սակայն նրանք չէին կամենում, որ գործը քննության առնվեր օրինական կարգով: Նրանք մտադիր չէին հարուցել մեղադրանքներ, որոնց հիման վրա իշխանությունները կկարողանային համապատասխան պատիժ որոշել: Զայրույթի մոլուցքով բռնված՝ նրանք յուրացրին՝ իրենց վրա առան թե՛ դատավորի և թե՛ դահճի դերերը»:

Հիսուսին սպառնում էր քարկոծում «աստվածանարություն» համար: Հրեաները, անկասկած, հասկացել էին, թե Նա ինչ նկատի ունի: Սակայն մի պահ, գոնե, մտքներով չանցա՞վ, թե գուցե ճիշտ է ասում:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Հիսուսը միշտ ասում էր, որ Իր ծագումն ու էությունը մի են Աստծո հետ: Նա անվեհեր հայտարարել է. «Եթե դուք Ինձ գիտե՞նայիք, Իմ Հորն էլ կգիտե՞նայիք» (Հովհ. 8:19): «Եվ Ինձ տեսողը Ինձ Ուղարկողին է տեսնում» (Հովհ. 12:45): «Ինձ ատողը նաև Իմ Հորն է ատում» (Հովհ. 15:23): «Որպեսզի բոլորը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը: Ով չի պատվում Որդուն, նա չի պատվում և Հորը, Որն ուղարկել է Նրան» (Հովհ. 5:23) և այլն: Այս բոլոր քաղվածքները համոզիչ կերպով հաստատում են, որ Հիսուսն Իրեն համարել է ոչ թե սովորական մարդ, այլ՝ Աստծուն հավասար էակ: Այն մարդիկ, ովքեր կարծում են, թե Հիսուսը պարզապես ավելի մոտ էր Աստծուն, քան մյուսները, բավականաչափ խորամուկն չեն եղել Նրա՝ վերահիշյալ խոսքերի մեջ (Հովհ. 5:23):

Մի անգամ ստիժ ունեցա դասախոսություն կարդալու Արևմտյան Վիրջինիայի համալսարանի գրականությունից բաժնում: Դասախոսության ժամանակ ինձ ընդհատեց ունկնդիր պրոֆեսորներից մեկը: Նա ասաց.

- Միայն Հովհաննեսի Ավետարանում է Հիսուսն ասում, թե Ինքն Աստված է: Իսկ այն գրվել է մնացած երեքից ուշ: Ամենավաղ՝ Մարկոսի Ավետարանում ոչ մի անգամ չի ասված, որ Հիսուսն Իրեն Աստված է համարել:

Ինձ միանգամից պարզ դարձավ, որ այդ մարդը երեք չի կարդացել Մարկոսի Ավետարանը, կամ եթե կարդացել է, ապա՝ ծայրաստիճան անուշադիր: Ի պատասխան՝ ես բացեցի Մարկոսի Ավետարանի այն տեղը, ուր Հիսուսը ներում է մեղքերը: «Եվ Հիսուսը, տեսնելով նրանց հավատը, անդամալուծին ասաց. Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են» (Մարկոս 2:5, տես նաև Դուկ. 7:48-50): Ըստ հրեական օրենքի՝ այդ կարող էր անել միայն Աստված: Եսային (43:25) ասում է, որ միայն Աստված կարող է ներել մեղքերը: Զուր չէ, որ սույն նախադասությունում դեմ այդպես ընդվզեցին դպիրները. «Այս Ի՞նչ է խոսում, սա հայհոյում է. ո՞վ կարող է մեղքերի թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված»: Հիսուսը նրանց պատասխանում է. «Ո՞րն է ավելի դյուրին. անդամալուծին ասել՝ քո մեղքերը ներված են, թե՞ ասել՝ վե՛ր կաց, ա՛ն մահի՞ճու և դե՛մ՝ քո տունը» (Մարկոս 2:7-9):

Դիմենք Ուեբլիֆի մեկնությունը. «Սույն հարցին պատասխանելն անհնար է: Այս երկու խոսքն էլ դժվար չէ արտասանել, սակայն կատարել թե՛ մեկը և թե՛ մյուսը՝ գորու է միայն Աստված: Դիմակազերծումից վախեցող խարդախ մեկը, անշուշտ, կնախընտրեր առաջին խոսքը: Իսկ Հիսուսն ապաքինում էր Հիվանդներին, որպեսզի բոլորը տեսնեին, որ Ինքն օժտված է այնպիսի հրաշալի իշխանությունով, ինչը թույլ է տալիս վերացնել Հիվանդություն սկզբնապատճառը»: Եվ այս խոսքերի համար

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Նրան ամբաստանեցին աստվածանարգության՝ սրբապղծության մեջ:

Լյուիս Սփերի Ձեյֆերն այդ առիթով գրում է. «Աշխարհիս երեսին ոչ մի կենդանի էակ չունի մեղքեր ներելու ո՛չ իշխանություն և ո՛չ էլ իրավունք: Ոչ ոք չի կարող ներել մեր մեղքերը, բացի Այն Միակից, Որի դեմ ամենքս մեղանչել ենք: Երբ Քրիստոսը ներում էր մեղքերը, – իսկ մենք այս առիթով ոչ մի կասկած չունենք, – Նա շատ ու շատ էր գերազանցում մարդկային հնարավորությունները: Ոչ ոք, բացի Աստծուց, չի կարող մեղքերը ներել, և քանի որ Քրիստոսը ներում էր մեղքերը, ուստի կասկած չի մնում, որ Նա Աստված է»:

Մեղքերի ներման գաղափարը երկար ժամանակ ինձ հանգիստ չէր տալիս, ես ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ այն: Մի օր փրկիտոփայտության ֆակուլտետում դասախոսելիս, երբ արծարծում էի Հիսուսի աստվածային էություն խնդիրը, օրինակ բերեցի Մարկոսի Ավետարանի հիշյալ տողերը: Մի ուսանող ինձ առարկեց, թե Քրիստոսի շնորհած ներումը դեռ չի ապացուցում Նրա աստվածային էությունը: Հիսուսն, իբր, պարզապես ասել է, որ ներում է այդ մարդուն, բայց դա ամենևին էլ չի ապացուցում, որ Նա իրեն Աստված էր հայտարարում: Ես երկար մտածում էի այդ ուսանողի ասածի մասին և հանկարծ գլխի ընկա՝ հասկացա, թե ինչո՞ւ էին զայրացել դպիրները:

Անշուշտ, ցանկացած մարդ ինձ կարող է ասել. «Ես քեզ ներում եմ»:  
Բայց այդ կարող է ասել միայն այն մարդը, որի դեմ մեղանչել եմ: Եվ ընդհակառակը, եթե որևէ մեկը մեղանչել է իմ դեմ, ապա միայն ես կարող եմ ասել. «Քեզ ներում եմ»: Սակայն չէ՞ որ Քրիստոսն այլ իրագրություն մեջ էր. անդամալույծը մեղանչել էր Հայր Աստծո դեմ, և Հիսուսը նրան ասաց. «Քո մեղքերը ներված են»: Այո՛, մենք կարող ենք մեկին ներել, եթե նա մեզ վիրավորի, սակայն Տիրոջ դեմ մեղանչումը ներել կարող է միմիայն Տեր Աստված: Հենց այդ էլ արեց Հիսուսը: Զարմանալի չէ, որ հրեա կղերը զայրացել է, երբ նազովրեցի ինչ-որ հյուսն հանդգնել էր այդպիսի հայտարարություն անել: Հիսուսին տրված՝ մեղքեր ներելու իշխանությունը պերճախոս օրինակն է այն բանի, որ Նա հանդես էր գալիս միայն Աստծուն պատշաճ ձևով:

Մարկոսի Ավետարանում նկարագրվում է Հիսուսի դատը (14.60-64): Այստեղ Հիսուսը հստակորեն արտահայտվում է Իր աստվածային էության մասին. «Ապա քահանայապետը կանգնելով մեջտեղում՝ Հիսուսին հարց տվեց ու ասաց. Ոչինչ չե՞ս պատասխանում, ի՞նչ են վկայում սրանք Քո դեմ: Բայց Նա լուռ էր մնում ու պատասխան չէր տալիս: Քահանայապետը կրկին հարցրեց Նրան ու ասաց. Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնյալ Աստծո

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

Որդին: Հիսուսը ասաց. ես եմ. պիտի տեսնեք մարդու Որդուն՝ Ջորուժյան աջ կողմում նստած և երկնքի ամպերով եկած: Եվ քահանայապետը իր հանդերձները պատռեց և ասաց. էլ ի՞նչ պետք են մեզ վկաներ: Դրա հայհոյությունը լսեցիք. ձեզ ինչպե՞ս է թվում: Եվ ամենքը դատապարտեցին Նրան, թե՛ մահապարտ է»:

Սկզբում Հիսուսը չէր կամենում պատասխանել, և քահանայապետը Նրան երգվել տվեց: Երգման ներքո Հիսուսը ստիպված էր պատասխանել (և ես շատ ուրախ եմ, որ Նա վերջապես պատասխանեց): «Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրհնյալ Աստծո Որդին» հարցին Նա պատասխանեց դրականորեն:

Արդ, ի՞նչ ցուցմունքներ տվեց Քրիստոսը ատյանին: Նախ՝ Նա իրեն անվանեց օրհնյալ Աստծո Որդի, ապա՝ նստած Ջորուժյան աջ կողմում, և երրորդ՝ մարդու Որդի՝ ամպերով եկող: Այս բառերը միանշանակորեն պատկերազարում են Նրան որպես Մեսիայի: Ուստի շատ կարևոր է դրանք միասնաբար քննելը: Ատյանը (հրեական գերագույն դատարանը) հիանալի էր ըմբռնել Հիսուսի խոսքերի իմաստը: Հենց այդ պատճառով էր, որ քահանայապետը պատռեց իր հագուստը և ասաց. «էլ ի՞նչ պետք են մեզ վկաներ»: Հիսուսին դատապարտեցին իր իսկ ասած խոսքի համար:

Իսկ Ռոբերտ Անդերսոնը գրում է. «Ամենահամոզիչ ապացույցը թշնամաբար տրամադրված վկաների ցուցմունքներն են: Հիսուսի թշնամիների գործողություններն անհերքելիորեն հաստատում են այն փաստը, որ Նա իրեն Աստված էր անվանում: Պետք չէ մոռանալ, որ տվյալ դարաշրջանում հրեաները ամենևեին էլ նախնադարյան ու անկիրթ վայրենիներ չէին: Նրանք խորապես կրոնասեր ժողովուրդ էին՝ բարձրագույն մշակույթի տեր: Չէ՞ որ հենց այդ խոսքերի համար ատյանը՝ ազգի գերագույն խորհուրդը, որի մեջ էին կրոնական առավել կարկառուն գործիչները, այդ թվում՝ Գամաղիելը և նրա տարսոնացի աշակերտ Սողոսը, միաձայն մահվան դատապարտեց Հիսուսին»:

Կասկածից վեր էր, որ Հիսուսն այդ ցուցմունքը տվել է սեփական կամքով: Ոչ պակաս պարզ է, որ հրեաները հասկացել էին Նրա ասածը որպես հաստատում, թե ինքն Աստված է: Նրանք կանգնած էին երկընտրանքի առաջ՝ կամ պետք էր Նրա ասածը համարել աստվածանաբզություն, կամ էլ հավատալ, որ Նա Աստված է: Դատավորներն այդ բանը շատ լավ էին հասկանում և դրա համար էլ խաչեցին Հիսուսին, իսկ հետո ծիծաղեցին վրան՝ «Հույսը դրել էր Աստծո վրա... որովհետև ասաց, թե՛ Աստծո Որդի եմ» (Մատթ. 27.43):

Հին Կտակարանի ակնանավոր մասնագետ Հ. Բ. Սուելթը պարզաբանում

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

է, թե ինչու քահանայապետը պատուեց իր հանդերձները. «Օրենքն արգելում էր քահանայապետին իր հագուստները պատուել մասնավոր մանր բախումների ժամանակ (Ղևտ. 10.6, 21.10), սակայն դատավորի պարտականությունը կատարելիս նա հենց այդպես պետք է արտահայտեր իր ստակումը յուրաքանչյուր աստվածանարգութեան առիթով, որի վկան էր եղել: Ձի կարելի չնչել, որ խոտոված դատավորն այդ վճռորոշ պահին խոր թեթևութուն ապրեց: Նա արդեն կարող էր չանհանգստանալ՝ կգտնվե՞ն այլևս վատահելի վկաներ, թ՞ե՛ ոչ. դրա անհրաժեշտությունը վերացել էր, քանի որ կալանյալն ինքը խոստովանել էր իր մեղքը»:

Մենք արդեն տեսանք, որ դա ամենևին էլ սովորական դատ չէր: Իրավաբան էրվին Լինթոնը գրել է. «Սա բացարձակապես եզակի դեպք է, երբ դատարանում քննում են մեղադրյալի ոչ թե արարքները, այլ՝ անձը: Քրիստոսին առաջադրված մեղադրանքը դատարանի առջև Նրա արած խոստովանությունն է (կամ ավելի ճիշտ՝ ցուցմունքը, կամ էլ ավելի ճիշտ՝ արարքը), որի հիման վրա Նա մեղավոր ճանաչվեց: Հարցաքննությունը Հռոմի կուսակալի մոտ, Նրա խաչին գրված գիրը, անցորդների աղաղակները մահապատժի պահին. այս հանգեցնում է միայն մի հարցի՝ ո՞վ է Նա: Ի՞նչ էք մտածում Քրիստոսի մասին: Ո՞ւմ որդին է նա»:

Նյու Յորքի հռչակավոր իրավաբան, դատավոր Գեյնորն ասում է, որ ատյանը Հիսուսին մեղադրել է միայն աստվածանարգութեան համար: Նա գրում է. «Երբ կարդում ես չորս ավետարաններից որևէ մեկը, պարզվում է, որ այսպես կոչված հանցագործությունը, որի համար դատել են Հիսուսին, աստվածանարգությունն է: Նա պնդել է, թե գերբնական իշխանություն ունի, իսկ նման պնդումն արդեն աստվածանարգություն էր» (տե՛ս Հովհ. 10.38):

Մարդուն սովորաբար դատում են նրա արարքի համար: Հիսուսի պարագան այլ է. Նրան դատեցին ո՛վ լինելու համար:

Դատարանում քննված այս մեն մի դրվագն անգամ բավական է, որպեսզի հասկանանք, որ Հիսուսն Ինքն է խոստովանել իր աստվածային էությունը: Նրա դատավորներն այդ խոստովանութեան վկաներն էին: Բացի այդ, Հիսուսի խաչելութեան օրը Նրա թշնամիները հիշում էին, որ Նա Իրեն մարդեղացած Աստված էր հայտարարում: «Նույնպես և քահանայապետերը դպիրների ու ծերերի հետ ծաղրելով ասում էին. Ուրիշներին փրկեց, Ինքն Իրեն չի կարողանում փրկել: Եթե Իսրայելի թագավորն է, թող հիմա խաչից իջնի, և Իրեն կհավատանք: Հույսը դրել էր Աստծո վրա. հիմա թող փրկի Դրան, եթե ուզում է. որովհետև ասաց, թե Աստծո Որդի եմ» (Մատթ. 27.41-43):

# 2

## ԱՍՏՎԱԾ Է, ԽԱԲԵԲԱ՞, ԹԵ՞ ԽՆՆԹ

Արդ՝ Հիսուսը հավատացնում էր, որ Ինքն Աստված է: Նրա իսկ խոսքերը թերահավատների այն պնդումների լավագույն հերքումն են, թե իբր Հիսուսը պարզապես վեհաբարո մարդ էր, կամ էլ՝ շատ խորիմաստ մտքեր հայտնած մարդարե: Երբեմն այս կարծիքը հրամցվում է որպես տրամաբանական և գիտական տեսանկյունից ընդունելի միակ հետևություն, կամ էլ՝ որպես Ավետարանի բանական վերլուծությունյան ակնհերև արդյունք: Ցավն այն է, որ շատերը համաձայնում են այդ կարծիքին և չեն տեսնում, թե որքան սխալ են դրա կողմնակիցների փաստարկները:

Ասենք, որ Հիսուսի համար էլ շատ ու շատ կարևոր էր, թե մարդիկ Իրեն ո՞վ են համարում: Մտաբերեք, թե ինչ էր քարոզում Հիսուսը և ինչ էր ասում Իր մասին: Արդյո՞ք կարելի է Նրա խոսքերից եզրակացնել, թե Նա ընդամենը բարոյական մարդ էր կամ մարդարե: Ո՛չ, ո՛չ և դարձյալ ո՛չ:

Հիսուսը չէր էլ ուզում, որ մարդիկ Իր մասին այդպես կարծեն:

Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, նախկինում ագնոստիկ Ք. Ս. Լյուիսը հրաշալի է վերլուծել այս խնդիրը: Ահա նրա խոսքերը. «Ես ուզում եմ փակել բոլոր այն մարդկանց ճանապարհը, ովքեր հանդես կգան այնպիսի անհեթեթություններով, որպիսիք հաճախ առիթ ենք ունենում լսելու Հիսուսի պարագայում: Ինչպես օրինակ՝ ես պատրաստ եմ Հիսուսին ընդունել որպես կյանքի մեծ ուսուցչի, սակայն չեմ հավատում, որ Նա Աստված է: Հենց այս միտքն է, որ պետք չէ արտահայտել: Կարելի՞՞ բան է կյանքի մեծ ուսուցիչ համարել այն հասարակ մահկանացուին, որն սկսի բարբառել Հիսուսի ասածները: Այն կլիներ կա՛մ խելագար, որն իրեն ձվածեղի տեղ դնող հիվանդից բարվոք չէ, կա՛մ՝ դժոխքի ծնունդ: Երկընտրանքից խուսափելն անկարելի է. կա՛մ այդ մարդը եղել է և է Աստծո Որդի, կա՛մ խելագար, կա՛մ էլ՝ ավելի վատ բան»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Այնուհետև նա ավելացնում է. «Կարելի է Նրան համարել խենթ, որի տեղը հոգեբուժարանն է, կարելի է Նրան մերկացնել որպես դեկ, կարելի է ընկնել Նրա ոտքերն ու պաշտել որպես Տեր Աստծո: Եվ ամենակարևորը, եկեք հանդես չգանք վերամբարձ հիմարությունք, թե Նա իբր կյանքի մեծ ուսուցիչ է եղել, և՛ վերջ: Նա մեզ նման ընտրություն անելու հնարավորություն չի թողել: Ոչ էլ այդպիսի մտադրություն է ունեցել»:

Ֆ. Ջ. Ա. Հորտը, որը Նոր Կտակարանի տեքստերի քննական ուսումնասիրությունը նվիրել է քսանութ տարի, գրում է. «Հիսուսի խոսքերն այնպես են միահյուսված Նրա էությունը, որ կզրկվեն ամենայն իմաստից, եթե դրանք դիտելու լինենք որպես աստվածային պատգամախոսի կամ մարգարեի բարբառած վերացական ճշմարտություններ: Փորձեք Հիսուսին հանել, առանձնացնել իր ասածներից, -չէ՞ որ Նա միշտ իր խոսքի առաջնային, թեպետ բնավ էլ ոչ վերջնական, կիզակետն է, - և դրանք փուչ կդառնան»:

Ահա Յեյլի համալսարանի քրիստոնեություն պատմության հոգակավոր դասախոս Քենեթ Աքոթ Լատտերթի խոսքը. «Հիսուսը մեծ է ոչ միայն իր ուսմունքով, թեպետ դա էլ բավական կլիներ Նրան պատմության մեջ տեղ ապահովելու համար: Գլխավորը Նրա ուսմունքի և Նրա անձի ներդաշնակությունն է: Սա այն դեպքն է, երբ վարդապետությունն ու վարդապետը անբաժանելի են»:

Այնուհետև. «Ավետարանի ամեն մի լրջախոհ ընթերցողի պետք է պարզ լինի, որ Հիսուսն իր ասածը համարել է իրենից անբաժանելի: Նա մեծ ուսուցիչ է եղել, բայց նաև՝ առավել, քան մեծ ուսուցիչը: Նրա ուսուցումներն Աստծո թագավորության, մարդու վարքի և Աստծո մասին ծայրաստիճան կարևոր են, սակայն դրանք չի կարելի դիտել Հիսուսից բաժան. Նա գտնում էր, որ այդ բաժանումը կիմաստագրվեր դրանք»:

Հիսուսն ասում էր, որ Ինքն Աստված է: Որևէ այլ տարբերակ Նա մեզ համար չի թողել: Նրա ասածը կամ ճշմարիտ է, կամ սուտ, ուստի պետք է փորձենք լուծել այս երկսյուրբանությունը: Հիսուսի՝ աշակերտներին տված հարցին (Իսկ դուք իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ ես - Մատթ. 16.15) կարելի է պատասխանել տարբեր կերպ:

Նախ ենթադրենք, թե Նրա պնդումը, որ Ինքն Աստված է, սուտ է: Եթե սուտ է, ապա երկու տարբերակ կա. կամ Նա գիտեր, որ այն սուտ է, կամ չգիտեր:

Այժմ քննենք այդ տարբերակները՝ ընդամին կշռագատելով բոլոր փաստարկները:

**ՎԱՐԿԱԾ ԱՌԱՋԻՆ. ԽԱՐԵՐԱ Է**

Եթե Հիսուսը գիտեր, որ Ինքն Աստված է, բայց պնդում էր, որ է, ուրեմն ստում էր և գիտակցաբար մոլորեցնում Իր Հետևորդներին: Եվ եթե ստախոս էր, ուրեմն նաև կեղծավոր էր, երկերեսանի. էջ<sup>o</sup> որ բոլորին պատվիրում էր ամեն պարագայում ազնիվ լինել: Այդժամ Նրա ամբողջ ուսմունքն ու ողջ կյանքը վերածվում են մի ահռելի խաբեություն:

Ավելին, այդժամ Նա դե էր նաև, քանի որ պատվիրում էր մարդկանց Իրեն վստահել Իրենց Հոգիները: Եթե Նա իրոք էջ<sup>o</sup> կարող արդարացնել այդ հավատը ու գիտեր այդ, ապա իսկապես չարիքի կիզակետն էր Նա: Եվ վերջապես, Նա, այս ամենից բացի, նաև Հիմար պիտի լիներ. էջ<sup>o</sup> որ Նրան խաչեցին աստվածային էություն հավակնություններ ունենալու համար:

Հաճախ են ստում, որ Հիսուսը կյանքի մեծ ուսուցիչ էր: Եկեք դատենք տրամաբանորեն: Այդ ինչպե՞ս կարելի է մեծ ուսուցիչ համարել մի մարդու, որը գիտակցաբար խաբում էր աշակերտներին Իր ուսմունքի հիմնական դրույթներից մեկում՝ իր աստվածային էության հարցում:

Ակամա հանգում ես միակ տրամաբանական հետևությունը՝ Նա ստում էր և ստում էր միտումնաբար: Սակայն Հիսուսի հանդեպ այսօրինակ հայացքը ոչ մի կերպ չի «տեղավորվում» Նրա վերաբերյալ մեր պատկերացումների մեջ. դա անհամատեղելի է Նրա կյանքի և մարդկություն վրա Նրա ուսմունքի ազդեցություն մասին մեր իմացածին: Քանզի ամենուրեք, ուր հռչակվում էր Հիսուսի խոսքը, մարդիկ, ողջ ժողովուրդներ փոխվում էին դեպի լավն ու բարին, գողերը դառնում էին ազնիվ, հարբեցողները թողնում էին խմիչքը, ատելությունը համակված մարդիկ վերածվում էին բարության անոթի, ամբարիշտները դառնում էին արդար:

Անգլիայի խոշորագույն պատմաբաններից մեկը՝ Ուելյամ Լեքին, որը հայտնի է իր կազմակերպված անհանդուրժողականությունը քրիստոնեություն հանդեպ, գրել է. «Քրիստոնեությունը վիճակված էր աշխարհին ներկայացնել մի իդեալական հերոսի, Որը տանուլթ դար շարունակ լուսավորել է մարդկանց սրտերը՝ լցնելով ոգեշունչ սիրով. Որը կարողացավ անբացառ ազդել բոլոր դարաշրջանների, ժողովուրդների, խառնվածքների ու իրավիճակների վրա. Որը ոչ միայն եղավ բարձրագույն տիպարն առաքինության, այլև դրան ձգտելու հզորագույն իմասնը դարձավ: Սրա գործուն կյանքի երեք կարճ տարիների պարզ նկարագրությունն ավելի շատ բան արեց մարդկություն վերածննդի և բարիացման համար, քան բոլոր փիլիսոփաների որոնումներն ու բարոյախոսների թախանձանքները մեկտեղ գումարած»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Պատմաբան Ֆիլիպ Շաֆն ասում է. «Եթե դատարանում Հիսուսի տված պատասխանները ճշմարիտ չեն, ապա դրանք կարող են լինել միայն աստվածանարգություն կամ խելացնորություն: Սակայն առաջին վարկածն իսկույն վերանում է. բավական է հիշել Հիսուսի՝ ողջ մարդկության կողմից ճանաչված բարոյական անաղարտությունն ու ազնվությունը, որոնք դրսևորվել են Նրա յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր արարքի մեջ: Բացառվում է նաև ինքնախաբեությունն այսչափ կարևոր հարցում, այսքան հստակ ու ամեն իմաստով հզոր բանականության պարագայում: Ինչպե՞ս կարող էր սովորական մի մոլեռանդ՝ կրոնամոլ մարդ կամ խենթ, միշտ պահպանել մտքի հստակությունը, անխուռվ անցնել բոլոր ձախորդությունների ու հալածանքների միջով, ինչպես արևը՝ ամպերի, ամեն անգամ տալ ամենաիմաստուն պատասխանները նենգամիտ հարցերին, անվրդով, պարզ գիտակցությամբ կանխատեսել սեփական մահը խաչի վրա, Սուրբ Հոգու հեղումը, Իր Եկեղեցու հիմնադրումը, Երուսաղեմի ավերումը. չէ՞ որ այս բոլոր կանխատեսումներն իրականացան ճշտիվ, մեկ առ մեկ: Այդքան անսովոր, այդքան ներամբողջական, անբասիրորեն հետևողական, այդքան կատարյալ ու մարդկային և, միաժամանակ, մարդկային ցանկացած մեծությունից անչափ վեր կանգնած անձը չի կարող լինել ո՛չ խաբեբա, ո՛չ էլ մարդկային երևակայության պտուղ: Ինչպես որ շատ տարիներ առաջ մեկը հիանալի ասել է, թե՛ այդ դեպքում բանաստեղծն իր հերոսից ավելի մեծ կլիներ: Այլ կերպ ասած՝ Հիսուսին հորինելու համար Հիսուսից էլ մեծ մեկն էր պետք»:

Այնուհետև Շաֆը մի համոզիչ փաստարկ է բերում Քրիստոսին խաբեբա համարելու դեմ. «Օգնության կանչինք տրամաբանությունը, առողջ դատողությանն ու սեփական փորձին և դատենք. ինչպե՞ս կարող էր ինքնակոչը, այսինքն՝ անբարոյական ստախոսն ու եսապաշտը, սկզբից մինչև վերջ իրեն ներկայացնել որպես պատմությունը հայտնի ամենամաքուր և ազնիվ մարդ, այն էլ՝ ամենահամոզիչ ու ամենաբնական ձևով: Ինչպե՞ս կարող էր խաբեբան հղանալ և իրագործել աննախընթաց բարոյական մեծությունը և վեհ մղումներով դրոշմված այդ բարերար ծրագիրը և հանուն դրա զոհաբերել սեփական կյանքը՝ հակառակ Իր ժողովրդի և դարաշրջանի դաժան նախապաշարումներին»: Շաֆն այսպես է մտորում. «Արդյո՞ք հնարավոր է, որ այդպիսի մի անհատականություն, որի միտքը պարզ էր, ինչպես ջինջ երկինքը, կազդուրիչ, ինչպես լեռնային օդը, սուր և հատուկ, ինչպես թուրը, կատարելապես առողջ և կայտառ, միշտ ոգևորող, բայց զուսպ, հակված լիներ այդպիսի բախտորոշ

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

մոլորության, ինչը վտանգավոր կլիներ Նրա իսկ ուսմունքի ու առաքելության համար: Անհեթեթ պատկերացում»:

Եթե Հիսուսը ցանկանում էր, որ մարդիկ հետևեն Իրեն և հավատան, թե Ինքն Աստված է, ինչո՞ւ ընտրեց հատկապես Իսրայելը: Ինչո՞ւ Նա նագովրեցի հյուանի կերպարանքով մարդկանց հայտնվեց այնպիսի մի փոքրիկ երկրում, որի բնակիչները չտեսնված միաբան էին մեկ և անբաժան Աստծուն հավատալու մեջ: Ինչո՞ւ Նա չգնաց Եգիպտոս կամ, որ ավելի լավ էր, Հունաստան, որտեղ մարդիկ հավատում էին բազում աստվածների և թույլատու էին դրանց զանազանակերպ մարմնավորումներին:

Հիսուսի կյանքն ապրած, Նրա ասելիքը բարբառած ու Նրա մահով մեռած մարդը խաբեբա լինել չի կարող:

Է՞լ ինչ տարբերակներ են մեզ մնում:

## ՎԱՐԿԱԾ ԵՐԿՐՈՐԴ. ԽՆՆԹ Է

Եվ այսպես՝ պատկերացնել, որ Հիսուսը ստախոս է, անհնար է: Իսկ եթե Նա իրոք հավատում էր, որ Ինքն Աստված է, բայց սխալվում էր: Չէ՞ որ ամենամանկեղծ մարդիկ էլ են սխալվում:

Պատկերացրեք՝ մի մարդ, որն ապրում է մեկ և միակ Աստծո խտրիվ հավատի հիման վրա կառուցված մշակույթ կրող հասարակության մեջ, հանկարծ հայտարարում է, թե ինքն Աստված է և բոլոր շրջապատողներին էլ համոզում է, որ հավերժության մեջ նրանց վիճակն ու դիրքը կախված են իրեն որպես Աստված ընդունելուց: Սա արդեն ոչ թե պարզապես երևակայություն է, այլ բառիս բուն իմաստով խելագարի գառանցանք: Արդյո՞ք նման է Հիսուս Քրիստոսն այդպիսի խենթի:

Այն մարդուն, որը նախկինում իրեն հայտարարել է Աստված, մեր օրերում կարելի է նրան համեմատել իրեն Նապոլեոն կարծող մի խելագարի հետ: Նա, անշուշտ, մոլորված է, սակայն անկեղծորեն հավատում է իր մոլորությանը: Հավանաբար նրան հոգեբուժարան կտանեն, որպեսզի իրեն կամ ուրիշին մնաս չպատճառի:

Բայց չէ՞ որ Հիսուսը չուներ խելագարությանն անպայման ուղեկցող որևէ շեղում կամ անհավասարակշռություն: Եթե ենթադրելու լինենք, թե Նա խենթ էր, ապա ինչպե՞ս բացատրենք Նրա վարքը՝ միշտ անդորրով և արժանապատվությամբ համակված:

Նույրը և Քույրը բժշկական թեմայով դրած իրենց հոգվածում մտազարին՝ շիզոֆրենիկին նկարագրում են որպես մի մարդու, որն ավելի

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՍ

չատ «այնկողմնային» է՝ այս աշխարհից դուրս, քան այսկողմնային՝ այսաշխարհային: Մտազարն ուզում է հեռանալ, կտրվել իրական աշխարհից: Դե ինչ, ինքդ քեզ Աստված համարելը, անկասկած, փախուստ է իրականությունից: Բայց եթե վերհիշենք այն ամենը, ինչ գիտենք Հիսուսի մասին, շատ դժվար կլինի հավատալ, որ Նա եղել է հոգեկան հիվանդ:

Հենց Նա է, որ արտահայտել է մարդկությունը հայտնի շատ ու շատ խորագույն մտքեր: Նրա ուսմունքը մարդկանց ազատեց հոգևոր ճորտությունից: Քլարք Հ. Փինոքը հետևյալ հարցն է տալիս. «Գուցե Նա տառապում էր մեծագարությունք՝ մեծություն մանկալով, համակված էր սեւեռուն, ցնորական գաղափարներով՝ պարանոյայով, գուցե մտազա՞ր էր և խաբո՞ւմ էր մարդկանց՝ չգիտենալով այդ բանը: Ո՛չ: Նրա ուսմունքի խորությունն ու զորությունը խոսում են միայն առողջ և պայծառ մտքի մասին: Երանի՜ թե ամենքս այդպիսի բանականություն ունենայինք»:

Մի ծանոթ ուսանող ինձ պատմեց, որ Կալիֆոռնիայի համալսարանում դասախոսելիս հոգեբույժ-պրոֆեսորն ասել է բառացիորեն հետևյալը. «Շատ հիվանդների համար ես պարզապես ձեռքս եմ առնում Աստվածաշունչը և կարդում Քրիստոսի խոսքերը. սա ամենալավ բուժումն է»:

Հոգեբույժ Զ. Թ. Ֆիշերը նշում է. «Եթե իրար գումարենք ամենաականավոր հոգեբանների և հոգեբույժների բոլոր ծանրակշիռ հորվածները հոգեկան առողջաբանության հարցերի վերաբերյալ, դրանք մի լավ կրճատենք և ազատենք բառային թեփ ու կճեպից, այսինքն՝ եթե վերցնենք միայն բուն էությունը, և եթե աշխարհիս ամենահանճարեղ բանաստեղծը կարողանա հակիրճ շարահյուսել գիտական իմացության այդ մաքրամաքուր ոսկեհատիկները, դուրս կգա Լեոան քարոզի սոսկ պարզունակ և թերի վերապատմունք, որը ոչ մի բանով չի կարող համեմատվել Հիշյալի հետ: Արդեն երկու հազար տարի է, ինչ քրիստոնյա աշխարհն իր ձեռքում ունի մի խոսք, որի մեջ կան մարդկության խոտվատանջ և անպատասխան հարցերի՝ առանց բացատրության բոլոր պատասխանները: Այն լավատեսությունք, հոգեկան առողջությունք և բավարարվածությունք լեցուն մարդկային արգասավոր կյանքի մի համապարփակ ծրագիր է»:

Ք. Ս. Լյուիսը գրում է. «Պատմաբանի համար անասելի դժվար է գտնել Քրիստոսի կյանքի, ուսմունքի և ազդեցությունից ավելի լավ բացատրություն, քան այն, ինչ տալիս է Հենց քրիստոնեությունը: Ոչ ոք չի կարողացել և չի կարողանա տալ գոհացուցիչ բացատրությունն այն

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

ապշեցնող հակասության, որ կա Նրա բարոյական ուսմունքի խորության ու առողջամտության և Նրա աստվածաբանական ուսմունքը ծնած մեծագարտության միջև, եթե նա իրոք Աստված չլիներ»:

### ՎԱՐԿԱԾ ԵՐՐՈՐԴ. ԱՍՏՎԱԾ Է

Անձամբ ես չեմ կարող հավատալ, որ Հիսուսը խաբեբա էր կամ խենթ: Ուստի մտում է միայն մեկ տարբերակ. նա Քրիստոսն էր, Աստծո Որդին, ինչպես Ինքն էր պնդում:

Այս թեմայի շուրջ ես հաճախ եմ գրուցում հրեական հավատի մարդկանց հետ: Շատ հետաքրքիր է նրանց արձագանքը: Սովորաբար նրանք ասում են, թե Հիսուսը առաքինի ու արդար մարդ էր, կրոնական մտածող ու առաջնորդ, կամ էլ՝ մարգարե: Այդժամ ես պատմում եմ, թե ինչ էր ասում Հիսուսն Իր մասին, և նրանց առաջադրում եմ այն երկընտրանքը, որի մասին խոսել ենք այս գլխում՝ խաբեբա՞, խե՞նթ, թե՞ Աստված: Հարցնում եմ, արդյո՞ք նրանք Քրիստոսին խաբեբա են համարում: Ի պատասխան լսում եմ կտրուկ «Ոչ»-ը:

Հաջորդ հարցն եմ տալիս.

-Իսկ գուցե նա խե՞նթ էր:

Սովորաբար պատասխանում են.

-Իհարկե՞ ո՛չ:

-Հավատո՞ւմ եք, որ նա Աստված է,- սակայն, խոսքս դեռ բերանումս, լսում եմ.

-Ո՛չ, ո՛չ մի դեպքում ...

Խնդրի էությունն այն չէ, թե այդ տարբերակներից որն է մեզ հնարավոր թվում. պարզ է, որ դրանցից յուրաքանչյուրն էլ հնարավոր է: Ավելի շուտ, հարցն այն է, թե ո՞ր տարբերակն է առավել հավանա-կանը:

Ձեր պատասխանն այն հարցին, թե ո՞վ է Հիսուս Քրիստոսը, ձեզ համար չի կարող լուր բանականության մարզանք լինել: Նրան չի կարելի կոչել պարզապես մեծ բարոյախոս և կյանքի ուսուցիչ: Այս տարբերակն ընդունելի չէ:

Երեքից մեկը՝ խաբեբա է, խենթ կամ Աստված: Դուք պետք է ընտրու՞թյուն կատարեք: «Իսկ, - ասում է Հովհաննես ավետարանիչը, - այս գրվեց, որպեսզի դուք հավատաք, որ Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Որդին, և հավատալով կյանք ունենաք Նրա անունով» (Հովհաննես 20.31):

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՍՆ

*Մեր տրամադրությունն առաջ եղած բոլոր ապացույցներն ասում են, որ Հիսուսը Տեր Աստվածն է:*

*Շատերը մերժում են այս հստակ ապացույցները, որովհետև խուսափում են բարոյական հետևանքներից. նրանք վախենում են այն պատասխանատվությունից, որը կձանրանա իրենց ուսերին, եթե Հիսուսին Տեր կոչեն:*

# 3

## ԻՍԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՇՁ ԱՍԵՆՔ

Շատերը Քրիստոսին որպես Աստծո չհավատալը փորձում են արդարացնել հետևյալ պնդումով. «Այն ամենը, ինչ Հնարավոր չէ ապացուցել գիտականորեն, կամ ճիշտ չէ, կամ էլ պարզապես արժանի չէ ուշադրության»: Եվ եթե անկարելի է գիտականորեն ապացուցել Քրիստոսի աստվածային էությունն ու Նրա հարություն փաստը, ապա քսաներորդ դարի մարդիկ, իբր, չափազանց ուայալ են, ուստի չեն կարող Քրիստոսին ընդունել որպես Փրկչի կամ հավատալ Նրա հարությունը:

Փրկիտփայտության կամ պատմության պարապմունքներին ինձ հաճախ մի հարց են տալիս, որը հնչում է որպես մարտահրավեր.

- Իսկ դուք կարո՞ղ եք այդ ապացուցել գիտականորեն:

Սովորաբար ես պատասխանում եմ.

- Բնական գիտությունների մեթոդներով: Ո՛չ: Մի՞թե ես ֆիզիկոս եմ կամ քիմիկոս:

Այդժամ լսարանում հնչում են փոթկոցներ և այսպիսի բացականչություններ.

- Դե էլ ի՞նչ խոսենք այդ մասին... Ի՞նչ է, դուք ուզում եք, որ մենք ամեն ինչին հենց այնպես հավատա՞նք...

Նկատի ունեն, իհարկե, կույր հավատը:

Վերջերս, Բոստոն թոնջելիս, օբանավում գրույցի բռնվեցի կողքիս նստածի հետ: Բացատրում էի նրան, թե ինչու եմ հավատում, որ Քրիստոսը հենց Նա է, Ում տեղը դնում էր Իրեն: Այդ պահին սրահ մտավ օղաչուն: Նա, հավանաբար, լսել էր մեր խոսակցությունը:

- Ձէի ուզե՞նա ձեր վիճակում լինել, - ասաց նա ինձ:

- Ինչո՞ւ, - հետաքրքրվեցի ես:

- Ձէ՞ որ չեք կարող այդ ապացուցել գիտականորեն...

Ապշում եմ, թե որքան է նվազել ժամանակակից մարդու մտածելու կարողությունը: Քսաներորդ դարի մարդիկ, չգիտես ինչու, կարծում են, թե այն ամենը, ինչ Հնարավոր չէ գիտականորեն ապացուցել, ճիշտ չէ:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Բայց հենց այսպե՛ս կարծե՛լը ճիշտ չէ: Եվ, առհասարակ, այնքան էլ հեշտ չէ պատմական դեմքի կամ դեպքի մասին որևէ բան ապացուցելը:

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել այն տարբերությունը, որ գոյություն ունի բնագիտական ապացույցի և այն ապացույցի միջև, որը մենք կոչելու ենք պատմա-իրավաբանական: Փորձեմ պարզաբանել այդ տարբերությունը:

Ի՞նչ ասել է գիտականորեն ապացուցել որևէ փաստ: Դրա համար պետք է խնդրո առարկան՝ իրադարձությունը վերարտադրել այն անձի ներկայությամբ, որը կասկածի տակ է առնում այդ փաստը: Այդ վերարտադրությունն իրականացվում է մշտապես վերահսկելի որոշակի պայմաններում, որոնք հնարավորություն են ընձեռում դիտարկումներ կատարել, տվյալներ արձանագրել և էմպիրիկ եղանակով ստուգել վարկածները:

«Ապացուցման գիտական մեթոդները, դրանց սահմանումների ողջ բազմազանությամբ հանդերձ, հանգեցվում են երևույթների և կատարված փորձի ստուգմանը կամ էլ՝ կրկնական դիտարկումներին» («Բրիտանիկա» հանրագիտարան):

Հարվարդի համալսարանի նախկին ուսկուր, գիտությունների դոկտոր Զեյմա Քոնանտը գրել է. «Գիտությունն այնպիսի պատկերացումների և հայեցողական կառուցվածքների փոխկապակցված շղթա է, որոնք գոյացել են որպես փորձերի ու դիտարկումների արդյունք, և որոնց վրա կարելի է հենվել հետագա փորձերի ու դիտարկումների ժամանակ»:

Ինչպե՞ս են գիտնականները ստուգում այս կամ այն գրույթի արժանահավատությունը: Դրա համար կատարում են այնպիսի գիտափորձեր, որոնք կարելի է վերահսկել: Սրա վրա է հիմնված ժամանակակից բնագիտական մեթոդը:

Օրինակ, ինչ-որ մեկը պնդում է, որ օճառը սուզվում է ջրում: Ես այդ մարդուն տանում եմ խոհանոց, գոլ ջուր եմ լցնում ամանի մեջ և օճառը ջուրն եմ գցում: Բլբլթ-բլբլթ: Դիտարկումը կատարված է, փաստերն արձանագրվել են, և ենթադրությունը ստուգվել է փորձարկմամբ. տվյալ պայմաններում տվյալ օճառը ջրի մեջ չի սուզվում:

Սակայն հետաքրքիրն ահա թե ինչն է: Եթե բնագիտական մեթոդն ապացույցի միակ եղանակը լիներ, ապա դուք ինչպե՞ս կկարողանայիք ապացուցել, որ այսօր ներկա եք եղել առաջին դասին: Կամ՝ որ այսօր ճաշել եք: Չէ՞ որ այդ դեպքերն անհնար է կրկնել վերահսկելի պայմաններում: Ինչպե՞ս վարվենք այս պարագայում:

Ահա այստեղ դուք լիիրավ եք դիմելու այսպես կոչված պատմա-իրա-

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՇԸ

վաբանական մեթոդին: Մեր խնդրո առարկայի դեպքում բավական է ցույց տանք, որ տարակուսանքները որոշակի փաստի նկատմամբ անհիմն են: Այլ կերպ ասած՝ «դատավճիռն» արձակվում է ծանրակշիռ «հանցանշանների» հիման վրա, ինչը նշանակում է, որ կայացված որոշումը հիմնավորված տարակուսանք չի հարուցում: Այն կախված է վկաների ցուցմունքներից:

Գոյություն ունեն երեք տարբեր ցուցմունքներ՝ բանավոր վկայություններ, գրավոր վկայություններ և իրեղեն ապացույցներ (օրինակ՝ ատրճաճակ, փամփուշտի գնդակ, տետր): Օգտագործելով անցյալում տեղի ունեցած դեպքի հետաքննության իրավաբանական մեթոդը՝ կարող եք միանգամայն համոզիչ կերպով ապացուցել, որ այսօր առավոտյան դուք եղել եք դասին, ձեզ տեսել են դասընկերները, ձեր տետրի մեջ գրառումներ կան, ձեզ հիշում է ուսուցիչը:

Բնագիտական մեթոդը կարելի է կիրառել միայն կրկնվող երևույթների ապացուցման համար: Իսկ երբ պետք է որևէ բան ապացուցել կամ հերքել պատմական դեպքի կամ դեպքի վերաբերյալ, բնական գիտություններն այստեղ ոչ մի անելիք չունեն: Եվ այս գիտությունների մեթոդը պիտանի չէ այն հետազոտողին, որը պատասխաններ է որոնում հետևյալ հարցերին՝

- Արդյո՞ք գոյություն է ունեցել Շեքսպիրը:

- Պայքարե՞լ է արդյոք քաղաքացիական իրավունքների համար Մարտին Լյութեր Քինգը:

- Արդյո՞ք Իվան Ահեղը սպանել է իր որդուն:

- Ո՞վ էր Հիսուս Նազովրեցին:

- Արդյո՞ք Հիսուս Քրիստոսը հարություն է առել մեռելներից:

Այս բոլոր հարցերը բնագիտական ապացուցման ոլորտից դուրս են: Մնում է դրանք մտցնել իրավաբանական ապացուցման ասպարեզը:

Այլ կերպ ասած, այն գիտական մեթոդը, որը հիմնված է դիտարկումների, տվյալների գրանցման, վարկածների առաջադրման, եզրակացությունների և փորձառական ստուգումների վրա, չի կարող պատասխան տալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են. «Իսկ կարո՞ղ եք ապացուցել մեռելների հարությունը», կամ՝ «Ինչպե՞ս կապացուցես, որ Հիսուսն Աստծո Որդին է»:

Իսկ երբ մարդիկ դիմում են պատմա-իրավաբանական մեթոդին, ապա ստիպված են լինում ստուգելու վկայությունների արժանահավատությունը:

Գիտե՞ք, թե հատկապես ինչով է գրավում ինձ քրիստոնեությունը: Հենց նրանով, որ այն ինչ-որ կտյր ու խավարամիտ հավատալիք չէ, այլ՝

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

բանական հավատ: Աստվածաշնչում հանդիպում ես հենց այդպիսի հավատի գրեթե բանական հավատի: Հիսուսն ասել է՝ «Կճանաչեք ճշմարտությունը» (Հովհաննես 8.32): Նա չի ասել՝ «Տգետ կմնաք»:

Մի անգամ Քրիստոսին հարցրին. «Օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ»: Հիշո՞ւմ եք, թե Նա ինչ պատասխանեց. «Քո Տեր Աստծուն սիրես ամբողջ սրտով, քո ամբողջ մտքով»: Ինձ թվում է, որ շատ հավատացյալների համար ինդիքը հետևյալն է. նրանց հավատն ապրում է միայն իրենց սրտում, իսկ Քրիստոսի մասին փաստերը նրանց գիտակցությունը չեն համոզում:

Մեզ տրված է Սուրբ Հոգով նորոգված բանականություն, որպեսզի ճանաչենք Տիրոջը, սիրտ, որպեսզի սիրենք նրան, և կամք, որպեսզի ընտրենք Նրան: Տիրոջը փառաբանելու համար, Նրան ըստ կարելիության խորը ճանաչելու համար մենք պետք է ապրենք այս բոլոր երեք չափումների մեջ միաժամանակ: Չգիտեմ դուք ինչպես, բայց իմ սիրտը չի կարող ուրախանալ այն բանով, ինչը մերժել է իմ բանականությունը: Իմ սիրտը և բանականությունը ստեղծված են իրար հետ ներդաշնակ ապրելու համար: Քրիստոսին որպես Փրկչի և Տիրոջ հավատալու համար դեռ ոչ մեկից չի պահանջվել, որ նա սպանի իր միտքը:

Հաջորդ գլուխներում մենք կքննենք, թե որքանով են արժանահավատ Հիսուսի մասին եղած գրավոր ու բանավոր վկայությունները:

# 4

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁ. ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՅՆ ՎԱՏԱՀԵԼԻ ՀԱՄԱՐԵԼ

Նոր Կտակարանը Հիսուսի մասին եղած պատմական տեղեկությունների հիմնական աղբյուրն է: Հենց այդ պատճառով է, որ թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերում բազում փորձեր են արվել և արվում՝ կասկածի տակ դնելու աստվածաշնչյան փաստերի արժանահավատությունը: Այդ փորձերի գրոհը մինչև այժմ էլ չի դադարում, թեև դրանք փաստերի անարժանահավատության ապացույցի պատմական որևէ հիմք չունեն, իսկ նման պնդումներից շատերը հերքվել են հնագիտական հետազոտություններով ու հայտնագործություններով:

Մի ժամանակ ես դասախոսություններ էի կարդում Արիզոնայի Համալսարանում: Բացօթյա բանավեճ-դասախոսությունից հետո ինձ մոտեցավ գրականության մի դասախոս, որն այդ բանավեճին էր բերել իր բոլոր ուսանողներին: Ահա թե ինչ ասաց ինձ.

- Հարգարժան պրոֆեսոր Մաք-Դաուել, ձեր բոլոր պնդումները Քրիստոսի մասին հիմնված են երկրորդ դարի մեն մի փաստաթղթի վրա: Դա պատմական հիմնավորում չէ: Հենց այսօր ես ուսանողներին բացատրում էի, որ Նոր Կտակարանն ուղղակի ոչ մի կերպ չի կարող տալ Քրիստոսի կյանքի ճիշտ նկարագրությունը, չէ՞ որ այն գրվել է Նրանից շատ հետո:

Ես նրան պատասխանեցի.

- Թանկագին գիտնական, ձեր պատկերացումները Նոր Կտակարանի մասին 25 տարվա հնություն ունեն:

Դասախոսի տեսակետը Նոր Կտակարանի արժանահավատության մասին փոխառված էր Աստվածաշնչի գերմանացի քննադատ Ֆ. Բաուերից: Բաուերը ենթադրել է, որ Նոր Կտակարանի մեծ մասը գրվել է երկրորդ դարի վերջից ոչ շուտ: Նոր Կտակարանը նա դիտում էր, ամենից առաջ, որպես ավանդազրույցների ու առասպելների ժողովածու, որոնք ձևավոր-

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

վել էին այն երկարատև ժամանակահատվածում, որը բաժանում էր Հիսուսի կյանքը դրանք թղթին հանձնելու ժամանակվանից:

Սակայն, արդեն 20-րդ դարի սկզբին հնագետների գտածոները հաստատեցին Նոր Կտակարանի ձեռագրերի ճշտությունը:

Վերջերս Հայտնաբերված Հին պապիրուսները (Ջոն Ռայլանդի գտած Ք. Հ. (Քրիստոսից հետո) 130 թ. ձեռագիրը, Չեստեր Բիտտի՝ Ք. Հ. 155թ. պապիրուսները և Ք. Հ. 200 թ. Բողմերյան 2-րդ պապիրուսները) հանդիսացան այն օղակը, որը կապում էր Քրիստոսի կյանքի ժամանակամիջոցն ավելի ուշ չրջանի՝ վաղուց ի վեր Հայտնի ձեռագրերի հետ:

Միլար Բրոուզը (Յեյլի Համալսարան) գրել է. «Նոր Կտակարանի հունարենի համեմատումը նորահայտ պապիրուսների լեզվի հետ, ի թիվս այլոց, ամրապնդեց այն համոզումը, որ Նոր Կտակարանի տեքստերը մեզ են հասել առանց արճատումների»: Այս կարգի Հայտնագործումները բարձրացրեցին գիտնականների վստահությունն Աստվածաշնչի հանդեպ՝ որպես տեղեկությունների աղբյուրի:

Աշխարհահռչակ հնագետ Ուիլյամ Օլբրայթը գրել է. «Այսօր արդեն մենք լիակատար համոզվածությունով կարող ենք պնդել, որ ոչ մի լուրջ հիմք չկա ենթադրելու, թե Նոր Կտակարանի որևէ գիրք գրվել է Քրիստոսի 80 թվականից հետո, այսինքն՝ 130-150 թվականներից երկու լրիվ սերունդ առաջ. մի թվագրում, որն ընդունում են Աստվածաշնչի մերօրյա ամենաարմատական քննադատները»:

Նա իր այդ համոզմունքը Հայտնեց նաև «Քրիստոնեությունն այսօր» ամսագրին տված հարցազրույցի ժամանակ.

«Ես գտնում եմ, որ Նոր Կտակարանի բոլոր գրքերը գրել են մկրտված հրեաները մ. թ. 40-80 թվականներին (չառ հավանական է՝ 50 և 75 թվականների միջև)»:

Հարցրեք ցանկացած հնագետի. «Երբևիցե ապրած հնագետներից ո՞վ է համարվում խոշորագույնը»: Ի պատասխան կլսեք սրը Ուիլյամ Ռամսբի անունը: Նա գերմանական պատմագիտական դպրոցի ներկայացուցիչն էր, որը գտնում էր, թե Գործք Առաքելոցը գրվել է մ. թ. 2-րդ դարի կեսերին, այլ ոչ թե 1-ին դարում, ինչպես այդ հավաստվում է տեքստում: Գործքի քննադատների աշխատությունների ընթերցումը նրան համոզեց այն բանում, որ դրանում նշված դարաշրջանի (50 թ.) փաստերի նկարագրությունը վստահելի չէ, ուստի և արժանի չէ պատմաբանի ուշադրությունը: Այդ իսկ պատճառով, Փոքր Ասիայի պատմությունը նվիրված իր հետազոտություններում նա ոչ մի ուշադրություն չէր դարձնում Նոր Կտակարանին:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Սակայն, վերջիվերջո, աշխատանքի ընթացքում Ռամսին հարկադրված եղավ դիմելու Ղուկասի գրվածքներին: Նա արձանագրեց պատմական մանրամասների անթերի ճշգրտությունը, և հետզհետե նրա վերաբերմունքը Գործքի հանդեպ փոխվեց: Նա ստիպված էր խոստովանելու, որ «Ղուկասն առաջնակարգ պատմաբան է ... Այս հեղինակը պետք է կանգնի մեծագույն պատմաբանների շարքում»:

Հենց փոքրագույն մանրամասնությունների ճշգրտությունն էլ Ռամսին համոզեց, որ Գործքը չէր կարող գրված լինել 2-րդ դարում, որ այն 1-ին դարի կեսերի վավերագիր է:

Մեր ժամանակներում ազատամիտ հետազոտողներից շատերը ստիպված են ընդունել Նոր Կտակարանի ավելի վաղ թվագրումը:

Դոկտոր Ջոն Ռոբինսոնն իր «Նոր Կտակարանի նոր թվագրումը» գրքում հանդել է չափազանց համարձակ հետևությունների: Իր ուսումնասիրությունների ընթացքում նա հանգեց այն եզրակացությունը, որ Նոր Կտակարանը գրվել է Երուսաղեմի անկումից առաջ (Ք. Հ. 70 թ.):

Մեր օրերում, այսպես կոչված «ձևական (ֆորմալ) քննադատություն» ներկայացուցիչները պնդում են, որ Նոր Կտակարանը կազմող նյութերը փոխանցվել են բանավոր՝ մինչև դրանք ավետարանների ձևով գրի առնելը: Թեպետ այդ քննադատները խոստովանում են, որ ժամանակային խզումն անհամեմատ ավելի փոքր է եղել, քան այդ համարել են առաջներում, այսուհանդերձ, նրանք համոզված են, որ զեպքերի ավետարանական նկարագրությունը բանահյուսական ձևեր է առել (ավանդազրույցներ, հեքիաթներ, առասպելներ, առակներ):

Բանահյուսական զարգացման գաղափարի դեմ բերվող ամենահիմնական փաստարկն այն է, որ նյութի բանավոր հաղորդման ժամանակամիջոցը (ինչպես այդ սահմանում են քննադատները) անչափ կարճ էր, ուստի նյութի մեջ չէին հասցնի գոյանալ այն բոլոր փոփոխությունները, որոնք նկատի ունեն սույն քննադատները:

Նոր Կտակարանի գրելուն նախորդած ժամանակամիջոցի կարճատևության մասին ահա թե ինչ է ասում Դորթի քրիշտոմ Աստվածաշունչ դասավանդող Սայմոն Քրիսթմեյքերը. «Բանահյուսության կուտակումը նախնադարյան ժողովուրդների մեջ դարեր ձգվող աստիճանական գործընթաց է: Այն շատ ու շատ սերունդների մասնակցություն է պահանջում: Եթե լսելու լինենք «ձևական քննադատներին», դուրս կգա, որ ավետարանական պատումները և՛ ստեղծվել, և՛ հավաքվել են համարյա մեկ սերնդի օրոք: Ավետարանների առանձին տարրերի ստեղծումը նրանց ձեռքում դառնում է ժամանակի մեջ խտացված ինչ-որ արագաթափ գործընթաց»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՍԱՆ

Դուրբլինի Թագավորական Համալսարանի աստվածաբանությունից բերեմանի պրոֆեսոր Ա. Հ. Մաք-Նիլը հերքում է «ձևական քննադատների» առաջ քաշած բանավոր զարգացման վարկածը: Նա մատնանշում է, որ սույն քննադատները պետք է ուշադրություն դարձնեին Հիսուսի ասածների պահպանման ավանդույթներին: Եթե ուշադիր կարդանք Կորնթացիներին հղված Ա ուղերձի 7.10 - 12.25 տները, ապա պարզ կտեսնենք, որ Հիսուսի խոսքերը խնամքով մտապահվել են, և գոյություն է ունեցել Նրա ասածը գրառելու ավանդույթ:

Հրեական կրոնաուսուցման մեջ ընդունված է, որ աշակերտը ռաբբիի խոսքը հիշի անգիր: Լավ աշակերտը նման է «զմուսված սափորի, որի միջից ոչ մի կաթիլ չի թափվի» (Միշնա, Աբոտ, 2, 8): Ըստ Ք. Ֆ. Բյորնիի տեսությունից («Մեր Տիրոջ բանաստեղծությունը», 1925), Քրիստոսի խոսքերը փոխանցվել են չափածո ձևով՝ տուն առ տուն (արամեերեն), այսպես ավելի հեշտ էր անգիր սովորելը:

Արևմտյան Միջերկրյան Համալսարանի հին դարերի պատմության դասախոս Փոլ Մայերը գրում է. «Այն պնդումը, թե քրիստոնեությունը զատիկ առասպելը դարերի ընթացքում «թուխս նստելով է հանել», կամ որ աղբյուրները գրվել են իրադարձություններից շատ ուշ, պարզապես չի համապատասխանում փաստերին»:

Իսկ Ու. Օլբրայթը գրել է. «Միայն պատմական մեթոդին չտիրապետող, պատմական հեռանկարը չտեսնող արդի հասարակագետները կարող էին հյուսել մտացածին դատողությունների մի այնպիսի սարգոստայն, որով «ձևական (ֆորմալ) քննադատները» պատել են Ավետարանը»:

Օլբրայթի կարծիքով «Քսան կամ հիսուն տարին չափազանց կարճ ժամանակամիջոց է, որպեսզի Հիսուսի ասածի բուն էությունը և, նույնիսկ, կոնկրետ խոսքերը ենթարկվեին որևէ էական աղավաղման»:

Աստվածաշնչի մասին որևիցե մեկի հետ խոսելիս հաճախ հեգնածադրական դիտողություններ են լսում.

- Ինչպե՞ս կարելի է հավատալ Աստվածաշնչին: Չէ՞ որ այն գրվել է ավելի քան 2000 տարի առաջ: Այն խճողված է սխալներով ու հակասություններով:

Նմանատիպ գրուցակիցներին միշտ պատասխանում եմ.

- Ես կարծում եմ, որ կարող եմ վստահել Աստվածաշնչին:

Իսկ հետո նկարագրում եմ այն դեպքը, որը պատահել էր ինձ՝ պատմաբան ուսանողներին դասախոսություն կարդալիս: Այդ դասախոսությունից ժամանակ ես մասնավորապես ասացի, որ Նոր Կտակարանի վավերականության օգտին կարելի է ավելի շատ ապացույցներ բերել, քան

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

անտիկ գրականությունյան ցանկացած տասը ստեղծագործությունների  
Համար միասին վերցրած:

Նրանց դասախոսը նստած էր անկյունում և քմծիծաղ էր տալիս՝  
կարծես ասելով.

- Դե լա՛վ, է՛, վերջ տվեք:

Ես Հարցրի.

- Ինչո՞ւ եք քթի տակ խնդում:

Նա էլ, թե.

- Գիտե՞ք, Նոր Կտակարանի վավերականությունյան մասին պատմաբան-  
ների հետ խոսելը պարզապես լավիրշություն է:

Սեկքս գնում է, երբ մեկը նման «խմաստախոսություն» է ճառում:  
Այդպիսի դեպքերում ես միշտ միևնույն Հարցն եմ տալիս (թեև երբեք  
խելքը գլխին պատասխան չեմ լսել) և սրան էլ տվեցի.

- Ասացեք, խնդրեմ, ա՛յ դուք պատմաբան եք. արդ, ի՞նչ չափանիշեր  
եք կիրառում գրական կամ պատմական երկի նկատմամբ՝ պարզելու  
Համար, թե որքա՞ն է այն ճշմարիտ կամ վավերական:

Ամենաապշեցուցիչն այն էր, որ նա ոչ մի չափանիշ չկարողացավ  
վկայակոչել: Իսկ ես գիտեի, ինչն էլ տեղնուտեղն ասացի:

- Ես գտնում եմ, որ Սուրբ Գրքի վավերականությունն ու արժանահա-  
վատությունը պետք է ստուգել այն նույն չափանիշերով, որոնք կիրառ-  
վում են որևէ այլ պատմական վավերագիր ստուգելու Համար: Ռազմական  
պատմաբան Ք. Մանդերսը նկարագրել և պարզաբանել է պատմագրու-  
թյան երեք հիմնադրույթները, որոնք են՝ պատմա-Համեմատական քննու-  
թյունը, ներքին վկայությունների ստուգումը և արտաքին վկայություն-  
ների ստուգումը:

ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Պատմա-համեմատական քննությունն այն տեքստերի հաջորդականությունների քննությունն է, որոնց միջոցով մեզ է հասել վավերագիրը: Այլ կերպ ասած (հրե մեր տրամադրությունն տակ հունենք բնագիրը)՝ ինչպե՞ս իմանանք, թե որքան են ճշգրիտ մեր ձեռքի տակ եղած պատճենները, քանի՞ ձեռագիր աղբյուր կա, և ի՞նչ ժամանակամիջոց է բաժանում բնագիրը մեզ հայտնի պատճենից:

Հեշտ է գնահատել Նոր Կտակարանի աղբյուրների՝ մեր ունեցած հարստությունը, բավական է, որ այն համեմատենք ցանկացած այլ հին տեքստերի հետ:

Մենք ունենք Թուրքիզիզեսի «Պատմություն» (մ. թ. ա. կամ Ք. Ա. 460-400 թթ.) ընդամենը ութ ձեռագիր, որոնք թվագրում են մոտավորապես 900 թվականով, այսինքն՝ նրա մահվանից 1300 տարի անց:

Նույնքան սակավ են Հերոդոտոսի «Պատմություն» ձեռագրերը: Դրանք էլ են թվագրվում ուշ ժամանակաշրջանով և, այսուհանդերձ, ինչպես Ֆ. Ֆ. Բյուլան է ասում, «Ոչ մի դասական բանասեր կասկածի տակ չի առնի Հերոդոտոսի կամ Թուրքիզիզեսի վավերականությունը սոսկ այն պատճառով, որ նրանց երկերի հայտնի ձեռագրերն իրենց բնագրից բաժանված են 1300 տարով»:

Արիստոտելն իր «Պոետիկան» գրել է մոտավորապես Ք. Ա. 343 թ., իսկ մեզ հայտնի ամենահին պատճենը թվագրված է Ք. Հ. 1100 թվականով: Ժամանակային խզումը գրեթե 1400 տարի է, իսկ ձեռագրերն ընդամենը հինգն են:

«Գաղղիական պատերազմների պատմությունը» Կեսարը գրել է Ք. Ա. 58 և 50 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, և դրա վավերականությունը որոշվում է 1000 տարի հետո արված ինը կամ տասը պատճենների հիման վրա:

Եվ, ընդհակառակը, Նոր Կտակարանի ձեռագրերի առատությունը, համեմատած այդ աշխատությունների հետ, պարզապես ապշեցուցիչ է: Բազմաթիվ այլ ձեռագրեր են գտնվել արդեն այն բանից հետո, երբ հայտնաբերվել էին Քրիստոսի ժամանակների ու երկրորդ դարի միջև ընկած բացը լրացրած վաղագույն պապիրուսները: Այսօր մեզ հայտնի են Նոր Կտակարանի ավելի քան քսան հազար ձեռագրեր: Համեմատության համար նշենք, որ հայտնի է հռչակավոր «Իլիականի» 643 պատճեն. ձեռագիր աղբյուրների առատությունը այն երկրորդն է Նոր Կտակարանից հետո:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Բրիտանական թանգարանի նախկին տնօրեն և գլխավոր մատենագետ Սրբ Ֆրեդերիկ Քենյոնը, որը ձեռագրագիտություն ասպարեզում մրցակից չունի, եզրակացնում է.

«Սկզբնաղբյուրի և մեզ հայտնի ամենավաղ ընդօրինակությունների միջև ընկած ժամանակահատվածն այնքան չնչին է, որ կարելի է այն անտեսել: Այլևս անհիմն են այն կասկածները, թե արդյո՞ք Սուրբ Մատյանը, իր բոլոր էական մասերով, մեզ է հասել այնպես, ինչպես գրվել է: Հաստատում ենք, որ Նոր Կտակարանի գրքերի վավերականությունն ու միասնությունը վերջնականապես ապացուցված են»:

Նոր Կտակարանի հունարենի մասնագետ Ջ. Հարոլդ Գրինլին ավելացնում է. «Քանի որ գիտնականներն ընդունում են անտիկ դասականների երկերը որպես արժանահավատ և վավերական (թեպետ այդ ստեղծագործությունների՝ մեզ հասած վաղագույն պատճեններն արվել են բնագիր երկերից շատ դարեր անց, և պատճենների թիվը շատ քիչ է), ուստի կարելի է հաստատված համարել նաև Նոր Կտակարանի վավերականությունը»:

Նոր Կտակարանի նկատմամբ պատմա-համեմատական քննության կիրառումը հանգեցնում է մեզ հետևյալ համոզիչ եզրակացություններին: Ձեռագիր պատճենների քանակով այն զգալիորեն գերազանցում է անտիկ դարաշրջանի ցանկացած գրական ստեղծագործությանը: Եթե սրան ավելացնենք 100 տարվա տեքստաբանական արդյունավետ հետազոտությունները, ապա համարձակորեն կարելի է պնդել, որ մեր ձեռքի տակ է Նոր Կտակարանի վավերական տեքստը:

ՆԵՐՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Պատմա-համեմատական քննությունը ցույց տվեց միայն մեկ բան. մեր տրամադրությունն առկա եղած տեքստը չի տարբերվում բնագրից: Սակայն մենք դեռ պետք է ստուգենք, թե որքանով կարելի է վստահել գրառված տեղեկություններին: Սա ներքին վկայությունների խնդիրն է, այսինքն՝ երկրորդ չափանիշը, վավերագրի պատմականության երկրորդ ստուգումն ըստ Ք. Սանդերսի համակարգի:

Այս փուլում քննադատը հետևում է Արիստոտելի կանոնին. «Գոյություն ունեցող տարակուսանքները պետք է լուծել հօգուտ վավերագրի, այլ ոչ թե քննադատի ինքնավստահության»:

Այլ կերպ ասած, ըստ Ջոն Ու. Մոնտգոմերիի՝ «Պետք է ականջ դնել հետազոտվող վավերագրերի հավաստումներին. չի կարելի ելնել դրա սխալ կամ կեղծ լինելու նախադրյալից, եթե միայն հեղինակն իրեն չի վարկաբեկել հակասություններով կամ բացահայտված փաստական սխալներով»:

Զիկադոյի համալսարանի պատմության երբեմնի դասախոս դոկտոր Լուի Գոթշալքն իր մեթոդը նկարագրել է պատմական հետազոտություններում լայնորեն օգտագործվող մի ձեռնարկի մեջ: Գոթշալքը կանգ է առնում «Հեղինակի կամ վկայի ճիշտ խոսելու ընդունակության վրա»:  
Այդ «ճշմարտախոսությունը» պատմաբանին օգնում է որոշելու հարցման հավաստությունը, «եթե նույնիսկ այն բովանդակում է բռնադատմամբ կամ կեղծարարության նկատառումով գրված կամ որևէ այլ կողմից խոցելի վավերագրի մեջ, կամ էլ հիմնված է լսած տեղեկությունների վրա, կամ ստացվել է կողմնակալ վկայից»:

Այս «ճիշտ խոսելու» կամ «ճշմարտությունն ասելու ընդունակությունը» սերտորեն կապված է վկայի՝ նկարագրվող անցքերի նկատմամբ ունեցած աշխարհագրական և ժամանակային մերձավորության հետ: Նոր Կտակարանի մեջ ամփոփված Հիսուսի կյանքի և ուսմունքի նկարագրությունները գրի են առել կա՛մ ականատեսները, կա՛մ էլ այն մարդիկ, ովքեր դրանց մասին իմացել են անմիջապես ականատեսներից:

Ղուկաս. «Քանի որ շատերը ձեռնարկեցին շարագրել մեզանում հաստատ իմացված իրողությունների պատմությունը, ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից Մոսքի ականատեսներն ու սպասավորները եղան, ես էլ, որ սկզբից ճշտությամբ հետամուտ էի եղել այդ բոլոր բաներին, հարմար գտա կարգով քեզ գրել, ո՛վ պատվական Թեոփիլոս» (Ղուկ. 1.1-3):

Պետրոս. «Քանի որ մենք ո՛չ թե վարպետությամբ շինված առասպելների հետևից գնալով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գործությունն ու

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

զարուստը ձեզ ցույց տվինք, այլ Նրա մեծափառությանը ականատես լինելով» (Բ Պետ. 1.16):

Հովհաննես. «Այն, որ տեսանք և լսեցինք, ձեզ ենք պատմում, որպեսզի դուք էլ մեզ հաղորդակից լինեք: Իսկ մեր հաղորդակցությունը Հոր հետ է և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ» (Ա Հովհ. 1. 3):

Հովհաննես. «Եվ տեսնողը վկայեց, ու նրա վկայությունը ճշմարիտ է, և նա գիտի, որ ճշմարիտ է ասում, որ դուք հավատաք» (Հովհ. 19.35):

Ղուկաս. «Տիրերիտս կայսեր իշխանությունն տասնհինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Հրեսատանի, և Հերովդեսը՝ չորրորդապետ Գալիլեայի, և նրա եղբայր Փիլիպոսը՝ չորրորդապետ Իսուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդապետ Աբիլենի» (Ղուկ. 3.1):

Նկարագրվող անցքերին այսքան մոտ կանգնած լինելը չափազանց կարևոր տարր է վկայի հավաստումները ստուգելու համար:

Սակայն պատմաբանն ականա գործ է ունենում նաև այնպիսի ականատեսների հետ, ովքեր գիտակցորեն կամ անգիտակցորեն կեղծ տեղեկություններ են հաղորդում այն իրադարձությունների վերաբերյալ, որոնց ժամանակակիցն են եղել և կարող էին ասել ճշմարտությունը:

Նոր Կտակարանում Քրիստոսի մասին գրված պատմությունները սկսեցին ձեռքից ձեռք անցնել դեռևս Նրան տեսած մարդկանց կենդանության ժամանակ: Նրանք, անկասկած, կարող էին հաստատել կամ հերքել այդ պատմությունների ստուգությունը: Ավետարանը քարոզելիս առաքյալները հիմնվում էին (անգամ երբ ականա բախվում էին իրենց կատաղի հակառակորդների հետ) հանրահայտ բաների վրա, երբ Հիսուսի մասին էին խոսում:

Նրանք ոչ միայն ասում էին. «Չէ՞ որ ինքներս ենք տեսել» կամ «Չէ՞ որ ինքներս ենք լսել», այլև փոխում էին գործելակերպը՝ հակառակորդների երեսին ասելով. «Դուք էլ գիտեք ամենը», «Դուք էլ եք այդ տեսել, դուք էլ այդ գիտեք»: Մարդ չի կարող իր հակառակորդներին այդպես ասել, եթե դրանում վստահ չլինի: Բավական է սխալվի ամենաչնչին հարցում, և այդ սխալը կարող է վրան թանկ նստել:

«Ո՛վ իրարայեացի այրեր, լսեցե՛ք այս խոսքերը. Հիսուս Նազովրեցուն՝ այն մարդուն, Որին Աստված ձեզ ներկայացրեց գորություններով ու հրաշքներով և նշաններով, որ Աստված Նրա ձեռքով արեց ձեր մեջ, ինչպես դուք էլ գիտեք» (Գործք 2.22):

«Երբ նա այս պատասխանը տվեց, Փեսոսը բարձր ձայնով ասաց. Ցնորվո՛ւմ ես, Պողո՛ս, շատ կարպացած լինելդ քեզ խելացնորություն է

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

տանում: Իսկ Պողոսն ասաց. Չեմ ցնորվում, ո՛վ պատվական Փեսոսս, այլ զգաստուլթյան և ճշմարտուլթյան խոսքեր եմ արտասանում: Քանզի թագավորը այս բաները գիտե, որի համար էլ Համարձակ եմ խոսում, քանի որ չեմ կարծում, թե սրանցից որևէ բան ծածկված է նրանից, որովհետև մի խուլ անկյունում չէ, որ այս բանը եղել է» (Գործք 26.24-26):

Ահա թե ինչ է ասում Մանչեստերի Համալսարանի քննական աստվածաբանուլթյան և մեկնողական գրականուլթյան պրոֆեսոր Ֆ. Ֆ. Բրյուսը Նոր Կտակարանի՝ որպես պատմական սկզբնաղբյուրի արժեքի մասին. «Առաջին քարոզիչները գործ էին ունենում ոչ միայն բարյացակամ ակնաստեսների հետ. կային նաև այլք, որոնք ամենևին էլ բարեհաճ չէին նրանց Հանդես, թեև քաջ ծանոթ էին Հիսուսի կյանքին ու մահվան հանգամանքներին: Աշակերտներն իրենց պարզապես թույլ չէին տա լինել անստույգ (էլ չենք խոսում փաստերի միտումնավոր աղավաղման մասին), նրանց տեղնուտեղը կղիմակագերծեին հենց այդ բանին սպասողները: Ընդհակառակը, առաջին քարոզների ուժը հենց այն համոզմունքի մեջ էր, որով առաքյալները հենվում էին ունկնդիրների քաջատեղյակուլթյան վրա. նրանք ասում էին ոչ միայն «մենք վկա ենք եղել», այլև՝ «ինչպես դուք էլ գիտեք» (Գործք 2.22): ՉԶ՞ որ, եթե նրանք հանկարծ փաստական որևէ վկայուլթյան մեջ շեղվեին ճշմարտուլթյունից, ապա թշնամաբար տրամադրված վկաների հավանական ներկայուլթյունը միշտ էլ փաստերի ճշգրտման առիթ կտար»:

Լորենս Մաք-Գինլին (Մբ. Պետրոսի քոլեջ), գրավոր վկայուլթյունները քննելիս, այսպես է ասում թշնամաբար տրամադրված վկաների դերի մասին. «Նախ. այն ժամանակ, երբ ամբողջովին ձևավորվել էր ավանդապատումը, տակավին կենդանի էին այդ իրադարձուլթյունների ակնաստեսները: Այդպիսի վկաներից էին նաև կրոնական այս նոր շարժման երդվյալ թշնամիները: Եվ, այսուհանդերձ, ավանդուլթյունը հաստատում է, որ բոլոր հայտնի մեծագործուլթյունների և բացեիբաց քարոզված ուսմունքի մասին պատմուլթյունները տեղի էին ունենում հենց այն ժամանակ, երբ յուրաքանչյուր կեղծ պնդում կարող էր հերքվել և, անշուշտ, կհերքվեր»:

Իսկ Նոր Կտակարանի Հետազոտող Ռոբերտ Գրանտը (Զիկագոյի Համալսարան) եզրակացնում է. «Այն ժամանակ, երբ գրվել էին Համատես\* ավետարանները կամ, Համենայն դեպս, կարելի է ենթադրել, որ դրանք

\* Համատես կամ սինոպտիկ ավետարաններ են Մատթեոսի, Մարկոսի – Ղուկասի ավետարանները, որոնք այդպես են անվանվում շաբաղրանքի նմանությամբ:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

գրվել են հենց այդ ժամանակ, դեռ կենդանի էին ականատեսները, և նրանց վկայությունները չէր կարելի հաշվի չառնել: Սա նշանակում է, որ ավետարանները պետք է դիտել որպես Հիսուսի կյանքի, մահվան և հարություն ապրիսի վավերագրեր, որոնք հիմնականում արժանահավատ են»:

Անտիկ վավերագրերի քննությանն իր ամբողջ կյանքը նվիրած, իրթությամբ հետազոտող պատմաբան Ուելլ Դյուրանտը գրում է. «Ձնայած ավետարանիչների կանխակալությունն ու աստվածաբանական կանխակարծությունը, նրանք գրի են առել նաև շատ այնպիսի բաներ, որոնք պարզապես լուրջյան կմատնեին «պճնագարողները»: Այդպիսիք են՝ Երկնքի Թագավորության մեջ բարձր դիրք գրավելու առաքյալների ձգտումը, նրանց փախուստը Հիսուսի ձերբակալումից հետո. Պետրոսի ուրացումը. Հիսուսի հրաժարվելը Գալիլեայում հրաչքներ գործելուց, ունկնդիրների ենթադրությունները, որ Նա խենթ է. Իր առաքելության նկատմամբ սկզբում ունեցած Նրա անվստահությունը. Նրա խոստովանությունը, որ չգիտի ապագան, դառը զղջման պահերը. Նրա հուսահատ ճիչը խաչի վրա:

Կարգալով այսպիսի դրվագներ՝ ոչ ոք չի կասկածի, որ դրանցում իրական անձ է կանգնած: Ավետարաններում նկարագրված բոլոր հրաչքներից առավել անհավատալի են այն հրաչքը կլիներ, եթե մի քանի հասարակ մարդ ընդամենը մի սերնդի կյանքի ընթացքում կարողանային հորինել այդչափ վառ ու գրավիչ կերպար, այդքան վեհ բարոյագիտություն և մարդկային եղբայրության այդպիսի ոգեշնչող տեսարան: Իշխող վերնախավի երկու դար տևող կոշտ և մարտնչող քննադատությունից հետո բավականին հստակ պատկերացում է մնացել Քրիստոսի կյանքի, բնավորության և ուսմունքի մասին, որոնք ամենագրավիչ էջերն են Արևմուտքի մարդու պատմության մեջ»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

### ԱՐՏԱՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Պատմականության երրորդ չափանիշն արտաքին վկայությունների ստուգումն է: Խնդիրը հետևյալն է. պատմական մյուս նյութերը հաստատո՞ւմ, թե՞ հերքում են հետազոտվող վավերագրերի պարունակած տեղեկությունները: Այսինքն՝ վերլուծվող վավերագրերից բացի ուրիշ ի՞նչ աղբյուրներ կան, որոնք պարունակում են սրանց ճշգրտությունը, արժանահավաստությունն ու իսկությունը հաստատող վկայություններ:

Գոթշաբն ասում է, որ «պատմական և գիտական այլ փաստերին գուգադիպելը կամ համապատասխանելը հաճախ որոշիչ գործոն է մեկ կամ մի քանի վկաների ցուցմունքները ստուգելու խնդրում»:

Հովհաննես առաքյալի երկու բարեկամները հաստատում են Հովհաննեսի պատումի տեղեկությունները: Պատմաբան Եվսեբիոսը հետևյալ մեջբերումներն է անում Հիերապոլիսի եպիսկոպոս Պապիասի (մ. թ. 130 թ.) երկերից. «Ավագը (Հովհաննես առաքյալը) նաև ասում էր. Մարկոսը, լինելով Պետրոսի թարգմանը, ճշտիվ գրի էր առնում այն ամենը, ինչ նա (Պետրոսը) ասում էր՝ Քրիստոսի և՛ խոսքերը, և՛ գործերը, սակայն՝ ոչ հերթականությամբ: Քանզի նա Տիրոջ ո՛չ ունկնդիրն էր եղել, ո՛չ էլ ուղեկիցը: Սակայն հետագայում, ինչպես արգեն ասացի, նա ուղեկցել է Պետրոսին, որն օգտագործում էր Քրիստոսի ուսմունքն ըստ անհրաժեշտության, այլ ոչ թե Տիրոջ ճառերի ժողովածու կազմելու համար: Եվ, ուստի, Մարկոսը սխալներ չգործեց՝ գրի առնելով նրա խոսքերն այնպես, ինչպես որ ասվել էին, քանզի նա միմիայն հետևում էր, որպեսզի բաց չթողներ որևէ բան լրածից և ոչ մի սխալ թույլ չտար»:

Լիոնի եպիսկոպոս Իրենայոսը, որը աշակերտել է ութսունվեց տարի քրիստոնյա ապրած, Հովհաննես առաքյալի աշակերտ, Զմյուռնիայի եպիսկոպոս Պոլիկարպոսին, գրել է.

«Մատթեոսն իր Ավետարանը տարածել է հրեաների (մովսիսական հրեաների) մեջ՝ նրանց մայրենի լեզվով. այդ իսկ ժամանակ Պետրոսը և Պողոսը քարոզել են Ավետարանը Հռոմում և այնտեղ հիմնել եկեղեցի: Նրանց՝ մեղանից հեռանալուց հետո (այսինքն՝ նրանց մահվանից հետո. ըստ արմատացած ավանդության 64 թ., Ներոնի հալածանքների ժամանակ), Մարկոսը՝ Պետրոսի աշակերտն ու թարգմանը, սեփական ձեռքով մեզ հանձնեց Պետրոսի քարոզների գրավոր բովանդակությունը: Ղուկասը՝ Պողոսի ուղեկիցը, գրի առավ Ավետարանն այնպես, ինչպես որ քարոզել էր իր ուսուցիչը: Իսկ հետո Հովհաննեսը՝ Տիրոջ աշակերտը, որը

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

փարվել էր Նրա կրծքին (տե՛ս Հովհ. 13.25 և 21.20), ինքը գրեց իր անվամբ Ավետարանն Ասիայում՝ Եփեսոսի մեջ ապրելիս»:

Հաճախ մեզ ծանրակլիչու արտաքին վկայություններ է ընձեռում Հնագիտությունը: Այն իր լուծման է մուծում Աստվածաշնչի քննական հետազոտման մեջ. իհարկե, ոչ թե աստվածաբուխ ներշնչմամբ ու հայտնությունամբ, այլ այս կամ այն դեպքի նկարագրություն ճշտությունը հաստատելով:

«Հնագիտությունը հաստատել է բազում դրվագներ, որոնք անցյալում մերժվել էին քննադատների կողմից որպես հակապատմական կամ հայտնի փաստերին հակասող», - գրել է Հնագետ Ջոզեֆ Ֆրին:

Մենք արդեն տեսանք, թե ինչպես Հնագիտությունը ստիպեց Ուիլյամ Ռամսիին փոխել իր սկզբնական բացասական կարծիքը Ղուկասի գրածների պատմականության հանդեպ, և թե ինչպես հանգեցրեց նրան այն հետևությունը, որ Գործք Առաքելոցը հույժ ճշտիվ է նկարագրում Փոքր Ասիայի աշխարհագրությունը, Հին պատմությունն ու հասարակական իրավիճակը:

Ֆ. Ֆ. Բրյուսը նշում է. «Մենք լիիրավ կերպով կարող ենք ասել, որ Հնագիտությունը հաստատեց Նոր Կտակարանը: Ղուկասի Ավետարանի այն բոլոր տեղերը, որոնք անցյալում համարվել են սուտ ու սխալ, այժմ կողմնակի (արտաքին) ապացույցների շնորհիվ արժանահավատ են ճանաչվել»:

Անտիկ շրջանի պատմաբան Ա. Շերվին-Ուայթը գրում է. «Գործք Առաքելոցի պատմական ստուգության՝ մեր ձեռքի տակ եղած ապացույցները պետք եղածից շատ են»: Այնուհետև ավելացնում է. «Մեր օրերում նրա պատմական վավերականությունը, անգամ մանրուքներինը, վիճարկելու ամեն մի փորձ բացահայտ անհեթեթություն է: Հին Հռոմի պատմության մասնագետները վաղուց ի վեր այն ընկալում են որպես կասկած չհարուցող աղբյուր»:

Ինքս էլ շատ ժամանակ եմ ծախսել Նոր Կտակարանի ոչ պատմական ու կասկածելի լինելն ապացուցելու համար և, ի վերջո, հանգել եմ այն հետևությունը, որ այն, որպես պատմական վավերագիր, արժանի է ամենայն վստահության: Եթե որևէ մեկը պնդում է, թե Աստվածաշունչն արժանահավատ չէ հենց սույն առումով, ապա նա միաժամանակ պետք է մերժի գրեթե ողջ անտիկ գրականությունը:

Շատ հաճախ մարդիկ որոշակի չափանիշ են կիրառում սովորական՝ «աշխարհիկ» գրականության նկատմամբ և միանգամայն այլ՝ Աստվածաշնչի նկատմամբ: Այդպես չի կարելի: Գրականությունը հետազոտե-

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Այս պետք է օգտվել չափանիշերի միևնույն համակարգից՝ անկախ այն բանից, աշխարհիկ է, թե՛ կրոնական: Եվ այնժամ, համոզված եմ, մենք կկարողանանք ասել, որ Աստվածաշունչն արժանահավատ և վավերական պատմական վկայություն է Հիսուսի մասին:

Ռիչենթ քոլեջի համակարգային աստվածաբանության դասախոս, դոկտոր Քլարք Հ. Փինոքն ասում է. «Ձկա անտիկ շրջանի և ոչ մի վավերագիր, որի շուրջը մենք ունենայինք այդքան շատ տեքստային և պատմական փայլուն վկայություններ և որն ամփոփեր կշռադատված հետևությունների հանգեցնող պատմական տեղեկությունների այսպիսի հոյակապ համահավաք: Ոչ մի ազնիվ մարդ չի կարող հաշվի չառնել այդ կարգի մի աղբյուր: Քրիստոնեության պատմական արժանահավատությունն նկատմամբ թերահավատությունը խարսխված է անզիտակցական (այսինքն՝ հակազերբնական) նախապաշարումների վրա»:

# 5

## Ո՞վ ՄԵՌՆԵԼՈՒ ԿԳՆԱ ՍՈՒՏ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ

Քրիստոնեության գանազան քննադատներ Հաճախ աչքաթող են անում Հիսուսի առաքյալների կյանքում տեղի ունեցած փոփոխությունները: Այդ փոփոխությունները Քրիստոսի ասածների իրավացիության լավագույն ապացույցն են: Քանի որ քրիստոնեական Հավատը պատմական երևույթ է, այն ուսումնասիրելիս ստիպված ենք լինում ծանոթանալու թե՛ գրավոր, թե՛ բանավոր բազում վկայությունների:

Գոյություն ունեն «պատմության» շատ ու շատ սահմանումներ: Իմ կարծիքով՝ «վկայությունների վրա հիմնված անցյալի իմացություն» ամենալավն է: Եվ երբ որևէ մեկն ինձ առարկում է, թե ինքն ամենևին էլ դա լավ սահմանում չի Համարում, Հարց եմ տալիս.

- Դուք Հավատո՞ւմ եք, որ Նապոլեոնն իրոք գոյություն է ունեցել:

Պատասխանը սովորաբար լինում է դրական: Այնուհետև ես շարունակում եմ.

- Իսկ դուք նրան տես՞լ եք:

Նա պատասխանում է.

- Ո՛չ:

- Հապա որտեղի՞ց գիտեք այդ...

Մարդիկ պարզապես վստահում են վկայություններին:

Պատմության սույն սահմանումը շատ կարևոր խնդիր է առաջ բերում: Վկայությունը պետք է լինի արժանահավատ. հակառակ դեպքում ունկնդրի ստացած տեղեկությունը կլինի սխալ: Քրիստոնեությունը պահանջում է վկայությունների վրա հիմնված իմացություն անցյալի մասին, և մենք պետք է տանք հետևյալ հարցը. «Կարելի՞ է վստահել Հիսուսի մասին նախնական բանավոր վկայություններին: Կարո՞ղ ենք համարել, որ դրանք ճշտիվ են Հաղորդել Հիսուսի խոսքերն ու գործերը»:

Կարծում եմ՝ այո՛:

Ես Հավատում եմ առաքյալների վկայություններին, որովհետև

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

տասներկուսից տասնմեկը մարտիրոսացին: Ջոհվեցին, քանզի հավատում էին Քրիստոսի հարուժյանը և այն բանին, որ Նա Աստծո Որդին է: Նրանց խոշտանգում էին, մտրակածեծ անում և, ի վերջո, ենթարկում այդ ժամանակներում հայտնի ամենատանջալի մահապատիժներին:

1. Պետրոսը խաչվել է:
2. Անդրեասը խաչվել է:
3. Մատթեոսը թրատվել է:
4. Հովհաննեսը մահացել է իր մահով:
5. Հակոբոսը՝ Ալփեսոսի որդին, խաչվել է:
6. Փիլիպոսը խաչվել է:
7. Սիմոնը խաչվել է:
8. Թադեոսը նետահարվել է:
9. Հակոբոսը՝ Հիսուսի եղբայրը, քարկոծվել է:
10. Թովմասը նիգակահարվել է:
11. Բարթոլոմեոսը խաչվել է:
12. Հակոբոսը՝ Ջեբեդեոսի որդին, թրատվել է:

Այստեղ գրուցակիրացներս սովորաբար միաբերան առարկում են ինձ.

- է՛, անհաշիվ մարդիկ են մեռնելու գնացել ու կործանվել սուտ բաների համար, դա ոչինչ չի ապացուցում:

Այո՛, անհամար մարդիկ են սուտ բանի համար մեռնելու գնացել, բայց չէ՞ որ նրանք համոզված են եղել, որ դա ճիշտ է: Եվ եթե իրոք հարուժյուն չի եղել (այսինքն՝ եթե դա սուտ է), ուրեմն աշակերտներն իմացել են այդ բանը: Ես չեմ կարող պատկերացնել, որ նրանք խաբված են եղել: Հետևաբար այդ տասնմեկ մարդը ոչ միայն մեռել են հանուն ստի, այլև (որ ամենակարևորն է) իմացել են, որ մեռնում են հանուն ստի: Դժվար է գտնել մարդկություն պատմության մեջ տասնմեկ մարդու, որ ստի համար գիտակցաբար մեռնելու գնացած լինեն:

Առաքյալների ողջ գործը լիովին գնահատելու համար պետք է նկատի առնել մի քանի գործոն: Առաջին. թե՛ գրեթե, թե՛ պատմելիա նրանք հանդես են գալիս որպես իրենց նկարագրած փաստերի ականատեսներ:

Պետրոսն ասել է. «Մենք ոչ թե վարպետորեն շինված առասպելներին հետևելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի գորուժյունն ու գալուստը ձեզ ցույց տվեցինք, այլ Նրա մեծափառությանը ականատես լինելով» (Բ Պետ. 1.16): Առաքյալները, անշուշտ, տարբերել են առասպելներն ու ավանդազրույցներն իրականությունից:

Հովհաննեսը շեշտել է, որ հրեաները գիտեն, քանզի ականատես են եղել, «Կյանքի Բանի մասին, որ ի սկզբանէ էր, որ լսեցինք, Որին մեր

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆ

աչքով տեսանք, Որին նայեցինք ու մեր ձեռքերը շոշափեցին, (և կյանքը հայտնվել էր ու տեսանք և վկայում ենք ու ձեզ պատմում այն հավիտենական կյանքը, որ Հոր մոտ էր ու մեզ հայտնվեց), ինչ որ տեսանք ու լսեցինք՝ ձեզ ենք պատմում, որպեսզի դուք էլ հաղորդակից լինեք: Իսկ մեր հաղորդակցությունը Հոր հետ է և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ» (Ա. Հովհ. 1.1-3):

Ղուկասը, ինչպես արդեն տեսանք, իր Ավետարանում գրել է. «Քանի որ շատերը ձեռնարկեցին շարադրել մեզանում հաստատ իմացված իրողությունների պատմությունը, ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից Սուսի սկանառեսներն ու սպասավորները եղան, ես էլ, որ սկզբից ճշտությամբ հետամուտ էի եղել այդ բոլոր բաներին, հարմար գտա կարգով քեզ գրել» (1.1-3):

Այնուհետև Ղուկասը Գործք Առաքելոցում մատնանշում է Քրիստոսի հարույթունից հետո այն քառասուն օրերը, երբ Նրան տեսել էին աշակերտները. «Առաջին պատմությունը գրի առա... այն ամենի մասին, ինչ Հիսուսն սկսեց անել և սովորեցնել մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով պատվեր տվեց իր ընտրած առաքյալներին և համբարձվեց, որոնց իրենց ցույց տվեց կենդանի, իր չարչարանքներից հետո շատ ապացույցներով, քառասուն օրվա ընթացքում նրանց երևալով և Աստծո թագավորության մասին խոսելով» (1.1-3):

Իսկ Հովհաննեսն էլ իր Ավետարանում գրում է. «Հիսուսն իր աշակերտների առաջ ուրիշ շատ հրաշքներ էլ գործեց. որոնց մասին չի գրված այս գրքում» (20. 30):

Աշակերտների այս վկայությունների գլխավոր բովանդակությունը Հիսուսի հարույթյան պատմությունն է:

Առաքյալներն անձամբ են Նրան կենդանի տեսել մեռելներից հարույթուն առնելուց հետո.

|                |                |                |
|----------------|----------------|----------------|
| Ղուկ. 24.48    | Գործք 4.33     | Ա. Կոր. 15.4-8 |
| Հովհ. 15.27    | Գործք 5.32     | Ա. Հովհ. 1.2   |
| Գործք 1.8      | Գործք 10.39-41 | Գործք 22.15    |
| Գործք 2.24, 32 | Ա. Կոր. 15.15  | Գործք 23.11    |
| Գործք 3.15     | Գործք 13.30-31 | Գործք 26.16    |

Երկրորդ. առաքյալներին էլ պետք էր համոզել, որ Հիսուսն իրոք հարույթուն է առել մեռելներից: Նրանք սկզբում չէին հավատում Նրա հարույթյանը և բացիբլբաց ասում էին այդ: Հավատացին միայն այն բանից հետո, երբ տեսան մի ամբողջ շարք անհերքելի ապացույցներ:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Հիշեք Թովմասին, որն ասաց, թե չի հավատա Քրիստոսի հարուժյանը, մինչև մատով չչոչափի մեխերից առաջացած վերքերը: Շատ տարիներ անց Թովմասը մարտիրոսվեց Քրիստոսի անվան համար: Ինչ է, նա՞ էլ խաբված էր: Նա իր կյանքը տվեց հակառակն ապացուցելու համար:

Հետո էլ Պետրոսը, որ մի քանի անգամ ուրացավ Քրիստոսին, երբ Նրան ատյան էին տարել, իսկ ինքը գավթում էր: Եվ, ի վերջո, հրաժարվեց Քրիստոսից: Սակայն ինչ-որ բան կատարվեց այդ վախկոտի հոգում: Քրիստոսի խաչելությունից և թաղումից մի քանի օր անց Պետրոսը հայտնվեց Երուսաղեմում և, չնայած սպառնացող մահապատժին, իր քարոզներում համարձակորեն ասում էր, որ Հիսուսը Քրիստոսն է և հարուժյուն է առել:

Վերջ ի վերջո Պետրոսին գլխիվայր խաչեցին:

Ինչ է, նա՞ էլ էր խաբված: Ի՞նչ էր կատարվել նրանում: Ի՞նչը ստիպեց նրան դառնալու Հիսուսի գործի անվեհեր ռազմիկը: Ինչո՞ւ նա պատրաստ էր մեռնելու Հիսուսի անվան համար: Մրակ բավարար բացատրությունը, կարծում եմ, գրված է Ա Կորնթացիներին 15.5-ում՝ «Եվ [Հիսուսը] երևաց Կեփասին» (այսինքն՝ Պետրոսին, տես Հովհ. 1.42):

Մարդու՝ իր կամքին հակառակ համոզվելու դասական օրինակ է Հիսուսի եղբայր Հակոբոսի դեպքը (Մատթ. 13.55, Մարկ. 6.3): Թեև նա Տաաներկուտի մեջ չէր (Մատթ. 10.2-4), հետագայում ճանաչվեց առաքյալ (Գաղ. 1.19), ինչպես որ Պողոսը և Բառնաբասը (Գործք 14.13): Քանի դեռ Հիսուսը կենդանի էր, Հակոբոսը չէր հավատում, որ իր եղբայր Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 7.5): Միանգամայն հնարավոր է, որ նա իր եղբայրների ու քույրերի հետ միասին ծիծաղել է Հիսուսի վրա. «Եվ դու ուզում ես, որ մարդիկ հավատա՞ն քեզ: Ավելի լավ կլինի գնաս Երուսաղեմ և այնտեղ ցուցադրես քո հնարքները»:

Երևի Հակոբոսն իր ողջ ընտանիքի համար ամոթալի է համարել, որ Հիսուսը չըջում էր բազմությունք չըջապատված և շատերի մոտ ծիծաղ առաջացնում ամեն չափ ու սահման անցնող իր հավակնություններով («Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ՝ Ինձնով» – Հովհ. 14.6. «Ես խաղողի վազն եմ, դուք՝ ճյուղերը» – Հովհ. 15.5. «Ես եմ բարի Հովիվը... և իմինները ճանաչում են Ինձ» – Հովհ. 10.14): Իսկ ի՞նչ կմտածեիք դո՛ւք, եթե ձեր եղբայրը սկսեր նման բաներ ասել:

Սակայն Հակոբոսն հանկարծ փոխվեց: Հիսուսի խաչելությունից և թաղումից հետո, նա սկսեց քարոզել Երուսաղեմում: Հակոբոսն ասում էր, որ Հիսուսը մեռել է մարդկանց մեղքերի համար, որ Նա հարուժյուն է առել

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

և կենդանի է: Ի վերջո Հակոբոսը դարձավ Երուսաղեմի եկեղեցու առաջնորդներից մեկը և գրեց իր «Ընդհանրական թուղթը», որն սկսվում է «Հակոբոսը՝ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի ծառան» բառերով:

Նա մարտիրոսվել է: Ըստ Հովսեփոս Փլավիոսի՝ նրան քարկոծեցին Անանիա քահանայապետի հրամանով: Ինչ է, Հակոբոսն է՞լ էր խաբված: Ո՛չ, միակ ճշմարտացի բացատրությունը, ըստ իս, Պողոսի՝ կորնթացիներին հղած առաջին ուղերձի սույն տողն է. «Հետո երևաց Հակոբոսին» (15.7):

Եթե հարուժյուն չի եղել, ուրեմն առաքյալներն իմացել են, որ այն սուտ է: Դուրս է գալիս, որ նրանք պարզապես պաշտպանում էին ինչ-որ խաբեություն:

Դժվար է համատեղել նման ենթադրությունն ու այն ամենը, ինչ գիտենք այդ մարդկանց բարոյական նկարագրի մասին: Հենց նրանք էին, որ դատապարտում էին սուտը և չեչտում, թե որքան կարևոր է ազնիվ լինելը: Նրանք ձգտում էին բացել ճշմարտությունը մարդկանց առջև:

Պատմաբան Էդվարդ Գիբոնն իր «Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը» նշանավոր գրքում ասում է. «Առաջին քրիստոնյաների մաքրամաքուր (թեպետև խիստ) բարոյականությունը քրիստոնեությունից արագ տարածման հինգ պատճառներից մեկն է եղել»:

Նոթինգհամի Սբ. Հովհաննես քոլեջի ռեկտոր Մայքլ Գրինն ասում է. «Հարություն հավատը խաչված քարոզչի բարոյաբաված հետևորդներին դարձրեց վաղ շրջանի եկեղեցու անվիճելի վկաներ և մարտիրոսներ: Հենց այդ հավատն էր, որ Հիսուսի հետևորդներին տարբերում էր մյուս հրեաներից, և նրանց միաբան խումբ դարձրեց: Նրանց կարելի էր բանտ նստեցնել, խոչտանգել, սակայն անկարելի էր ստիպել հրաժարվելու այն հավատից, թե՛ «Նա հարուժյուն առավ երրորդ օրը»:

Երրորդ գործոնն առաքյալների վարքագծում կատարված կտրուկ փոփոխությունն է. նրանք իսկույն համարձակություն առան այն բանից հետո, երբ համոզվեցին, որ իրենց ուսուցիչը հարուժյուն է առել: Սա էլ միանգամայն անհավանական է դարձնում այն ենթադրությունը, թե այս ամենը լուկ խաբեություն է եղել:

Նրանք մեկենիմեկ, համարյա մի գիշերվա մեջ, դարձան անվիճելի: Պետրոսը, որը մի քանի օր առաջ ուրացել էր Քրիստոսին, մահվան սպառնալիքի տակ լինելով, ամբողջ ձայնով հայտարարեց, որ Հիսուսը հարուժյուն է առել և ողջ է: Իշխանությունները ձեռքակալեցին Քրիստոսի հետևորդներին և դանահարեցին, սակայն նրանք շուտով նորից ելան Երուսաղեմի փողոցները՝ բացելու բաց պատմելով Հիսուսի մասին (Գործք 5.40-42): Բարեկամները հաստատում էին նրանց կենսունակու-

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

թյունը, իսկ թշնամիները՝ արիությունը: Եվ նրանք քարոզում էին ոչ թե ինչ-որ ծայրագավառում, այլ՝ հենց Երուսաղեմում:

Հիսուսի հետևորդները չէին գնա մահվան և խոշտանգումների, եթե համոզված չլինեին Նրա հարությունը: Այն միաբանությունը, որով նրանք քարոզում էին նվիրական ուսմունքը, նրանց քաջարի գործելակերպը պարզապես ապացուցիչ էին: Միաբանության հասնելը մարդկանց որևէ խմբի մեջ առհասարակ շատ դժվար է, բայց նրանք բոլորակամ հաստատում էին հարություն ճշմարտությունը: Եթե նրանք խաբեբաներ էին, ապա շատ դժվար է բացատրել, թե ինչու նրանցից գոնե մեկը «չկոտրվեց» տանջաքննությունների ժամանակ:

Ֆրանսիացի գիտնական և փիլիսոփա Պասկալը գրում է. «Այն ենթադրությունը, թե առաքյալները խարդախ մարդիկ էին, պարզապես անհեթեթ է: Փորձենք հասցնել սույն մեղադրանքը տրամաբանական ավարտի, պատկերացնենք, թե Հիսուս Քրիստոսի մահապատժից հետո այդ տասներկու մարդիկ հանդիպել են իրար և պայմանավորվել հորինելու և հաստատելու Նրա հարության պատմությունը: Դա կնշանակի թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական հիմքերի խախտում: Մարդու հոգին զարմանալիորեն անկայուն է և փոփոխական. այն հեշտությամբ կարելի է սասանել խոստումներով, գայթակղել նյութական խայծերով: Եթե նրանցից գեթ մեկը ենթարկվեր այդ ուժեղ գայթակղություններին կամ պարզապես չզիմանար բանտի և խոշտանգումների ավելի ուժեղ փաստարկներին, նրանք բոլորն էլ կտապավենին»:

«Այդ ինչպե՞ս եղավ, որ նրանք բոլորը, գրեթե մեկ օրվա մեջ, դարձան անկոտրում խանդավառների մի խումբ, որը մարտահրավեր նետեց թշնամիներին, նրանց լիտիությունը, ծաղրուծանակին, անվերջանալի փորձություններին, բանտարկությունը և անգամ մահվանը՝ բոլոր երեք աշխարհամասերում, ուր քարոզում էին Հիսուսի խոսքը և հարությունը», - հարցնում է Մայքլ Գրինը:

Ահա թե ինչպես է մի անհայտ հեղինակ նկարագրում առաքյալների կյանքում կատարված փոփոխությունները. «Խնաջերության օրը նրանք համակված էին մորմոքով, իսկ շաբաթվա առաջին օրը՝ ուրախությամբ: Խնաջերության օրը նրանք կորցրել էին հույսը, իսկ շաբաթվա առաջին օրը նրանց սրտերը լի էին հույսով և վստահությամբ: Երբ նրանք առաջին անգամ լսեցին հարության մասին, կասկածանք հայտնեցին, դժվար էր նրանց տարհամոզել, սակայն, երբ անձամբ հավաստիացան, դրանից հետո այլևս չէին կասկածում: Ուրեմն՝ ինչո՞վ կարելի է բացատրել այս մարդկանց մեջ տեղի ունեցած այդպիսի շնորհակցից փոփոխությունները»:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

այդքան կարճ ժամանակամիջոցում: Մարմնի անհետացումը գերեզմանից ինքնին չէր կարող այդպես փոխել նրանց բնավորությունը և զորացնել նրանց:

Երեք օրն անչափ կարճ ժամկետ է նրանց վրա այդպիսի ազդեցություն ունեցած ավանդազրույցի առաջացման համար: Ավանդազրույցների ձևավորման համար երկար ժամանակ է պետք: Սուլյն հոգեբանական փաստը պահանջում է սպառելի բացատրություն: Մտածեք այդ վկաների, տղամարդկանց և կանանց բնավորության մասին, ովքեր աշխարհին տվեցին երբեմնից ստեղծված ամենաբարձր բարոյագիտական ուսմունքը: Անգամ հակառակորդների վկայությամբ՝ նրանք անձնական կյանքում էլ հավատարիմ էին դրան: Փորձեք պատկերացնել հոգեբանորեն անհեթեթ հետևյալ տարբերակը. գլխովին ջախջախված վախկոտների փոքր խումբը մի գեղեցիկ օր հավաքվում է ինչ-որ խցում և մի քանի օր անց այնպիսի կուռ ջոկատ է դառնում, որին անհնար է ընկճել ու լռեցնել որևէ հարածանքով: Կատարյալ անմտություն է այդ արմատական փոփոխությունը բացատրել ընդամենը մի խղճուկ կեղծիքով, որը նրանք փորձում էին փաթաթել աշխարհի վզին»:

Քենեթ Սքոթ Լատուերթը գրում է. «Հարուստի և աշակերտների վրա Սուրբ Հոգու իջնելու հետևանքները հսկայական նշանակություն ունեցան: Վհատված և հիասթափված մարդիկ, որոնք տրամուլթյամբ էին հիշում, թե ինչ հույսեր ունեին, որ Հիսուսը Նա է, Ով պետք է փրկի Իսրայելը, դարձան ոգեշունչ վկաներ»:

Փոլ Լիթլը հարց է տալիս. «Արդ, ովքե՞ր են այդ մարդիկ, որոնց շնորհիվ փոխվեց հասարակության բարոյական կեցվածքը, անգերազանցելի խաբեբանե՞ր, թե՞ մոլորյալ խենթեր: Այս տարբերակներից յուրաքանչյուրին հավատարմ ավելի դժվար է, քան հարուստի փաստին, ընդ որում չկա թե՛ մեկ, թե՛ մյուս տարբերակի օգտին որևէ, անգամ աննշան, ապացույց»:

Առաքյալների անհողողը համոզվածությունը, - ընդհուպ մինչև մահվան օրը, - հեշտ բացատրություն չունի: «Բրիտանիկա» հանրագիտարանի տվյալներով՝ Որոգինեսը (185-263 թթ. քրիստոնեական աստվածաբան էր) հաղորդում է, որ Պետրոսին գլխիվայր են խաչել: Ահա թե ինչպես է Պետրոսի մահը նկարագրում Հերբերտ Ուորքմանը. «Ինչպես որ կանխասել էր մեր Տերը [Հովհ. 21.18], Պետրոսի գոտին կապեցին և Ավրելիոսի ճանապարհով մահապատժի տարան Վատիկան ըլրի վրայի Ներոնի այգիների մոտ գտնվող վայրը, ուր դաժան մահապատժի էին ենթարկվել նրա բազմաթիվ եղբայրները: Պետրոսի խնդրանքով նրան խաչեցին գլխիվայր, որովհետև իրեն անարժան համարեց Տիրոջ նման տառապել»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՍԱՆ

Հարույժ Մաթիւնգլին իր պատմական աշխատութեան մեջ գրում է. «Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս առաքյալներն արյամբ են ստորագրել իրենց վկայութիւնները»:

Տերտուլիանոսը գրել է. «Ոչ ոք չի կամենա մեռնել, եթէ վստահ չէ իր իրավացիութեանը»:

Հարվարդի իրավաբանութեան պրոֆեսոր Սայմոն Գրինլիֆը, որը երկար տարիներ ուսուցանել է ուսանողներին, թէ ինչպէս պետք է վկաներից ցուցմունքներ ստանալ և որոշել դրանց ճշմարտացիութիւնը, հանգում է հետևյալ եզրակացութեանը. «Պատերազմների պատմութեան բոլոր տարեգրութիւններում չես գտնի գաղափարին այդքան հերոսաբար հավատարիմ մնալու, համբերութեան և աներեր արիութեան օրինակ: Նրանք բոլոր հնարավոր առիթներն ունենին՝ մանրագնին վերանայելու իրենց հավատի հիմունքները և մեծ փաստերի ու ճշմարտութիւնների վկայութիւնները, որ իրենք էին պաշտպանել»:

Առաքյալները սեփական մահով ապացուցեցին իրենց ասածների իսկութիւնը: Ես համոզված եմ. նրանց խոսքերին ես ավելի շատ կարող եմ հավատալ, քան իմ ժամանակակիցների մեծամասնութեան խոսքերին, որոնք ոչ թէ չեն գնա մահվան, այլ փողոցն անգամ չեն անցնի հանուն այն ամենի, ինչին հավատում են:



## ՄՊԱՆՎԱԾ ՄԵՍԻԱ՝ ՄՊԱՆՎԱԾ ՀՈՒՅՍԵՐ

Արդար գործի համար շատերն են մեռնելու գնացել: Հիշենք Սան Դիեգոյի այն ուսանողին, որն ինքն իրեն այրեց՝ բողոքելով վիետնամական պատերազմի դեմ: Վաթնուենական թվականներին շատ բուրգայականներ ինքնակիզում էին կատարում համաշխարհային հասարակայնության ուշադրությունը Հարավարևելյան Ասիայի վրա բեռնելու համար:

Առաքյալները հուսահատվել էին՝ կարծելով, թե իրենց գործը խորտակվել է խաչի վրա: Նրանք հավատում էին, որ Հիսուսը Մեսիան է, և հավատները չէր գալիս, որ Նա կարող է մեռնել: Նրանք համոզված էին, որ Հիսուսը հիմնելու է Աստծո Թագավորությունը և կառավարելու է Իսրայելի ժողովրդին:

Որպեսզի հասկանանք առաքյալների վերաբերմունքը Հիսուսի հանդեպ, իմանանք, թե ինչո՞ւ էր նրանց համար անըմբռնելի, խելքից դուրս մի բան խաչի վրա դամված Հիսուսը, պետք է մեզ համար պարզենք Քրիստոսի ժամանակ Մեսիայի մասին եղած պատկերացումները:

Հիսուսի կյանքն ու ուսմունքն անլուծելի հակասության մեջ էին մեսիականության մասին հրեական բոլոր տեսությունների հետ: Հրեաներին մանկուց ներշնչում էին, որ երբ Մեսիան գա, Նա կլինի մի արքայական ու հաղթական քաղաքական առաջնորդ: Նա կազատագրի հրեաներին գերությունից և կվերականգնի Իսրայելի վաղեմի փառքը: Տառապող Մեսիան «բացարձակապես խորթ էր մեսիականության մասին հրեական ըմբռնումներին»:

Ե. Ֆ. Աբոթն այսպես է նկարագրում Քրիստոսի դարաշրջանը. «Դա աննախընթաց հուզումների ժամանակաշրջան էր: Կրոնական առաջնորդները զեփարությանը էին զսպում ժողովրդի խռովքը. ամենուրեք ամենքն սպասում էին խոստացյալ Ազատարարի գալուտյանը: Սպասումի այդ զգացումն անտարակույս ուժգնացել էր երկրի պատմության մոտանցյալ իրադարձություններով:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Հրեաների մի ամբողջ սերունդ արդեն ապրել էր Հոռոմեացիների իշխանության տակ, որոնք ամեն կերպ ոտնահարում էին նրանց ազատությունը: Հոռոմեացիների ճնշումը վերակենդանացնում և ամրապնդում էր Հայրենասիրական տրամադրությունները: Հրաշալի փրկություն և այն բերող Մեսիա-արքայի մասին հինավուրց երազանքն այդ ճգնաժամային շրջանում նոր իմաստ էր ստանում, թեև նրանում, ըստ էության, ոչ մի նոր բան չկար: Ավետարաններում նկարագրված մտքերի խոռվությունը նախորդել էր սպասումի երկար ժամանակաշրջան: Ժողովրդի մեծամասնության համար Մեսիան նույնն էր, ինչ շատ տարիներ առաջ Նա Եսայու և նրա ժամանակակիցների համար էր. Դավթի Որդին, որը հաղթանակ և ծաղկում էր բերելու հրեա ժողովրդին: Ավետարանի լույսի ներքո միանգամայն պարզ է դառնում, որ Մեսիայի մասին ժողովրդի մեջ տարածված պատկերացումներն առաջին հերթին կրում էին ազգային և քաղաքական բնույթ»:

Հրեա գիտնական Ջոզեֆ Կլաուները գրում է. «Մեսիան զնայով դառնում էր ոչ միայն քաղաքական ականավոր ղեկավար, այլ՝ բարոյական բացառիկ հատկանիշներով օժտված մի մարդ»:

Ջակոբ Գարթնհուսն այսպես է նկարագրում այն տրամադրությունները, որ ուներ հրեաների մեծամասնությունը Քրիստոսի դարաշրջանում. «Հրեաներն սպասում էին Մեսիային, որն ազատելու էր իրենց Հոռոմեացիների լծից: Մեսիական հույսերն առաջին հերթին կառուցվում էին ազգային ազատագրության վրա»:

«Հրեական հանրագիտարանը» նշում է, որ հրեաները «փափագում էին տեսնել խոստացյալ Դավթի տնից եղող Ազատարարին, որը կազատագրեր նրանց օտարերկրյա ասելի բռնակալների լծից, վերջ կտար Հոռոմեացիների սրբապիղծ տիրապետությանը և կհաստատեր իր թագավորությունը՝ խաղաղ ու արդար»:

Այդ ժամանակաշրջանում հրեաներն իրենց հույսերն ամբողջությամբ կապել էին խոստացյալ Մեսիայի գաղափարի հետ: Առաքյալները հավատում էին Մեսիային ճիշտ այնպես, ինչպես նրանց շրջապատող մարդիկ: Ինչպես գրել է Միլար Բեռտոլդը՝ «Հիսուսն այն աստիճան նման չէր հրեաների պատկերացրած Դավթի Որդուն, որ անգամ Նրա իսկ աշակերտները մեծագույն դժվարություններ էին կապում Մեսիայի գաղափարը Հիսուսի հետ»:

Հիսուսի մոայլ խոսքերը գալիք խաչելության մասին աշակերտների մեջ բնավ էլ խանդավառություն չէին առաջացնում (Լուկ. 9:22): Ինչպես նկատում է Ա. Բ. Բրյուսը, «Թվում էր, որ դեռ Հույս կա, որ Նա չափազանց

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

մուսյլ է դիտում ստեղծված իրավիճակը, որ Նրա մտավախություններն անհիմն դուրս կգան: Խաչված Քրիստոսն առաքյալների համար միայն խայտառակություն էր նշանակում. դրանում անլուծելի հակասություն կար, և Հրեաների մեծ մասն այդպես էլ այդ համոզմանը մնաց նույնիսկ Տիրոջ երկինք համբարձվելուց հետո»:

Նախկինում Օքսֆորդի համալսարանի դասախոս, «Յոթնամյանից թարգմանություն» մասնագետ Ալֆրեդ Էդերսհայմն իրավացի էր, երբ ասում էր. «Քրիստոսի մասին մեր իմացած բոլոր բաների մեջ ամենաաներևակայելին այն ժամանակն է, երբ Նա եկավ մարդկանց մոտ»:

Նոր Կտակարանով կարելի է հետևել առաքյալներին՝ Քրիստոսի նկատմամբ ունեցած վերաբերմունքին, նրանք սպասում էին հաղթական Մեսիային: Այն բանից հետո, երբ Հիսուսն աշակերտներին ասաց, թե Ինքը պետք է գնա Երուսաղեմ և այնտեղ չարչարվի, Հակոբոսն ու Հովհաննեսը խնդրեցին Նրան խոստանալ, որ Իր թագավորության մեջ իրենք կնստեին Նրա աջ և ձախ կողմերում (Մարկ. 10.32-38): Ինչպիսի՞ Մեսիայի մասին էին մտածում նրանք այդ պահին: Տառապո՞ղ, խաչվա՞ծ Մեսիայի. ո՞չ, քաղաքական առաջնորդի: Հիսուսը պատասխանեց, որ նրանք չեն հասկացել Իր ասածը և չգիտեն, թե ինչ են խնդրում:

Երբ Հիսուսը կանխասեց Իր չարչարանքներն ու խաչելությունը, տասներկու առաքյալները չկարողացան հասկանալ, թե Նա ինչ նկատի ունի (Դուկ. 18.31-34): Ծագումն ու դաստիարակությունը նրանց ենթադրել էին տալիս, որ իրենց լավ կյանք է սպասում: Բայց եղավ Գողգոթան: Բոլոր Հույսերը, թե Հիսուսը կդառնա իրենց Մեսիան, փշրվեցին: Հուսաբեկ առաքյալները ցրվեցին իրենց տները: Այդ բոլոր տարիները գուր էին անցել:

Ֆուլլերի Աստվածաբանությունյան սեմինարիայի Նոր Կտակարանի դասախոս Ջորջ Էլզոն Լեդը գրում է. «Հենց դրա համար էլ աշակերտները լքեցին Նրան, երբ Նրան ձեռքադրեցին: Նրանք այնքան էին հավատում հաղթական Մեսիային՝ բոլոր թշնամիներին նվաճողին, որ երբ տեսան Նրան գետնին ընկած, մտրակի հարվածներից արնածոր, որպես Պիղատոսի իշխանության ներքո գտնվող անօգնական մի գերու, որին տանում են մահապատժի, գամում են խաչին, - ուր և Նա մահանում է ամենասովորական հանցագործի պես, - նրանց մեսիական բոլոր Հույսերն առ Քրիստոս հողմացիր եղան: Հոգեբանությունից դիտենք, որ մենք լսում ենք լուր այն, ինչ սպասում ենք լսել: Գալիք չարչարանքների ու մահվան մասին Հիսուսի կանխասությունները լսելի չեղան: Չնայած Նրա նախազգուշացումներին՝ աշակերտները միանգամայն անպատրաստ էին»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Սակայն մի քանի շաբաթ անց, մի կողմ թողած իրենց առաջվա տարակուսանքները, աշակերտները վերադարձան Երուսաղեմ և սկսեցին փառաբանել Հիսուսին որպես Փրկչի և Աստծո, որպես Հրեաների Մեսիայի: Միակ համոզիչ բացատրությունը, որ կարող եմ գտնել, տրված է կորնթացիներին հղված առաջին ուղերձի մեջ (15. 5). «Եվ երևաց [Նա]... հետո Տասներկուսին»: Դրանից բացի էլ ի՞նչը կարող էր ուժ տալ վհատություն մեջ ընկած աշակերտներին, որոնք գորացած՝ գնացին քարոզելու ժողովրդի մեջ, կրեցին չարչարանքներ և մեռան խաչված Մեսիայի համար: Ուրեմն Նա իրոք՝ «Իրեն ցույց տվեց կենդանի, Իր չարչարանքներից հետո շատ ապացույցներով, քառասուն օրվա ընթացքում նրանց երևալով և Աստծո Թագավորության մասին խոսելով» (Գործք 1.3):

Այո, շատերն են մահվան գնացել արդար գործի համար, բայց առաքյալների առաջ Արդարը զոհվել էր խաչի վրա: Միայն հարությունը և Քրիստոսի հետ հանդիպումներն էին, որ համոզեցին Նրա հետևորդներին, թե Նա իրոք Մեսիան է: Նրանք այդ վկայեցին ոչ միայն շրթունքներով ու կյանքով, այլև՝ իրենց մահով:



## ԼՍԵՆ ԵՔ՝ ԻՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ ՍՈՂՈՍԻՆ

Իմ բարեկամ Ջեքը, ինչպես և ես, Հաճախ ենք ելույթներ ունենում Համալսարաններում: Եվ ահա մի օր նրան անակնկալ էր սպասում: Ուսանողները որոշել էին նրա դեմ հրապարակային բանավեճ կազմակերպել՝ Համալսարանական աթեիստի մասնակցությունը:

Նրա հակառակորդը փիլիսոփայության դասախոս էր, պրոֆեսոր, շատ պերճախոս և քրիստոնեության հանդեպ շատ թշնամաբար տրամադրված մի անձնավորություն:

Ջեքը խոսեց առաջինը: Նա մանրամասնորեն պատմեց Քրիստոսի հարություն ապացույցների ու Պողոսի դարձի մասին, վերջում էլ պատմեց իր վկայությունը, թե ինչպես է Քրիստոսը փոխել իր կյանքը, երբ սովորում էր Համալսարանում:

Երբ նա ավարտեց, ամբիոն բարձրացավ վերոհիշյալ պրոֆեսորը: Նա շատ նյարդայնացած էր: Չկարողանալով հերքել ո՛չ հարության օգտին բերված վկայությունները, ո՛չ էլ Ջեքի պատմածն իր կյանքի մասին, նա կառչեց Պողոս առաքյալի անսպասելի դարձի պատմությունից: Շատ խոսեց այն մասին, թե «մարդիկ երբեմն այնքան են տարվում այն բանով, որի դեմ պայքարում են, որ վերջում դառնում են դրա կողմնակիցները»:

Այդտեղ բարեկամս ժպտաց.

–Ուրեմն շա՛տ զգուշ պիտի լինեք, թե չէ այսպես որ գնաք՝ դուք էլ քրիստոնյա կդառնաք...

Սողոս անունով տարսոնացի (Կիլիկիա) մի հրեա երիտասարդ քրիստոնեության ոխերիմ թշնամին էր: Նրա՝ Պողոս առաքյալ դառնալու պատմությունը քրիստոնեության օգտին խոսող առավել տպավորիչ վկայություններից է:

Սողոսը կրոնական գործիչ էր, հրեության մուլեռանդ հետևորդ: Տարսոնում ապրած տարիները նրան Հնարավորություն էին տվել ծանոթանալու մարդկային իմացության ամենավերջին նվաճումներին. այն Համալսարան ունեցող քաղաք էր, ճանաչված՝ իր ստոիկ փիլիսոփաներով

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

և մշակույթով: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնը բարձր է գնահատել այդ քաղաքը լուսավորության ու փիլիսոփայության հանդեպ ունեցած հետաքրքրության համար:

Պողոսը, ինչպես և նրա հայրը, Հռոմի քաղաքացիություն ունենր, ինչը բացառիկ արտոնություն էր: Նա քաջածանոթ էր հելլենական մշակույթին և մտքին, հրաշալի տիրապետում էր հունարենին և դրսևորում դիալեկտիկայից օգտվելու հմտություն, մեծբերումներ էր անում սակավաճանաչ բանաստեղծներից ու փիլիսոփաներից:

Գործք 17.28 - «Որովհետև Նրանով ենք ապրում և շարժվում և կանք (Էպիմենիդես), ինչպես ձեր բանաստեղծներից մի քանիսն էլ ասել են. Քանցի մենք նրա զարմից էլ ենք» (Արատես, Կլեանթես):

Ա. Կորնթացիներին 15.33 - «Մի՛ խաբվեք. չար ընկերակցությունն ապականում է լավ բարքերը» [Մենանդրոս]:

Տիտոսին 1.12 - «Նրանցից մեկը՝ իրենց իսկ մարգարեն, ասաց. Կրետացիք միշտ ստախոս են, չար գազաններ, դատարկապորտներ» (Էպիմենիդես):

Պողոսը հրեական կրթություն էր ստացել փարիսեցիների խստականոն ուսմունքի ավանդույթի ոգով: Մոտ տասնչորս տարեկան էր, երբ նրան ուղարկեցին աշակերտելու Գամաղիելին, որը համարվում էր ժամանակի խոշորագույն ուսրբին (նա Հիլլելին թող էր գալիս): Պողոսն ասում էր, որ ինքը ոչ միայն փարիսեցի է, այլև՝ փարիսեցու որդի (Գործք 23.6): Նա իրավունք ուներ պարծենալու իր անցյալով. «Իմ հայրենի ավանդությունների խիստ նախանձախնդիր լինելով՝ իմ ազգի շատ հասակակիցներից ավելի առաջագեմ էի հրեություն մեջ» (Գաղ. 1.14):

Պողոսի դարձը հասկանալու համար պետք է ըմբռնել նրա հակաքրիստոնեական դիրքի պատճառը: Այդ նրա նվիրվածությունն էր հրեության օրենքին: Հենց սույն նվիրվածությունն էլ այն բանի հիմքն ու խթանն էր, որ նա այդպես կատաղիորեն ժխտում էր Քրիստոսին ու վաղ շրջանի եկեղեցին:

Ըստ Ժակ Դյուպոնի՝ «Պողոսին քրիստոնեության մեջ վիրավորում էր ոչ թե Քրիստոսի մեսիական կոչման հաստատումը, այլ՝ այն, որ Հիսուսին Փրկչի դեր էր վերագրվում, ինչն ի չիք էր դարձնում փրկության մեջ օրենքի դերը: Պողոսն այդքան թշնամաբար էր տրամադրված քրիստոնեության նկատմամբ նախ և առաջ իր այն համոզմունքի պատճառով, թե՛ փրկության ուղին օրենքի մեջ է»:

«Բրիտանիկա» հանրագիտարանն ասում է, որ իրեն քրիստոնյա կոչած հրեական նոր աղանդը ցավազին դիպավ Պողոսի հրեական դատարար-

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

կուլթյան և ռաբբունական կրթության բուն էությանը: Եվ այդ աղանդի ոչնչացումը դարձավ նրա ուխտյալ նպատակը (Գաղ. 1.13): Նա ձեռնամուխ եղավ բոլոր քրիստոնյաներին ոչնչացնելու գործին (Գործք 26.9-11). «Եկեղեցուն շատ վնաս էր տալիս» (Գործք 8.3). Դամասկոս մեկնեց այնպիսի նամակներ առած, որոնք նրան լիազորում էին բռնել Հիսուսի Հետևորդներին և կապկպած Երուսաղեմ բերել դատաստանի առաջ կանգնեցնելու համար:

Սակայն ճանապարհին բան պատահեց...

«Սողոսը տակավին Տիրոջ աշակերտների դեմ սպառնալիք ու մահ փչելով՝ գնաց քահանայապետի մոտ և նրանից Դամասկոսի ժողովարաններին ուղղված նամակներ ինդրեց, որպեսզի, եթե այդ [Քրիստոսի] ճանապարհին Հետևողներ գտնի, տղամարդ թե կին, կապած Երուսաղեմ բերի: Եվ գնալիս, երբ Դամասկոսին մոտեցավ, Հանկարծ նրա շուրջբոլորը երկնքից մի լույս փայլատակեց: Եվ նա, գետին ընկնելով, մի ձայն լսեց, որն ասում էր.

- Սավո՛ւղ, Սավո՛ւղ, [Սողո՛ս, Սողո՛ս] ինչո՞ւ ես հալածում ե՛նձ:

Եվ նա ասաց.

- Ո՞վ ես Դու, Տե՛ր:

Եվ Տերն ասաց.

- Ես Հիսուսն եմ, Որին դու հալածում ես... Վե՛ր կաց և մտի՛ր քաղաք, ու քեզ կապի, թե ինչ պետք է անես:

Իսկ նրան ուղեկցող մարդիկ ապշած կանգնել էին, միայն ձայնն էին լսում, բայց ոչ մեկին չէին տեսնում: Սողոսը գետնից վեր կացավ և բաց աչքերով ոչ մեկին չէր տեսնում: Ուստի նրա ձեռքից բռնած մտցրին Դամասկոս: Երեք օր մնաց առանց տեսնելու. ո՛չ կերպով, ո՛չ էլ խմեց:

Անանիա անունով մի աշակերտ կար Դամասկոսում: Տերը նրան տեսիլքի մեջ ասաց.

- Անանիա՛:

Նա էլ ասաց.

- Տեր, ահա այստեղ եմ:

Տերն ասաց նրան.

- Վե՛ր կաց և գնա՛ այն փողոցը, որ Ուղիղ է կոչվում, և Հուզալի տանը Հարցրու Սողոս անունով տարսոնացուն: Նա հիմա աղոթում է, և տեսիլքի մեջ տեսավ Անանիա անունով մի մարդու՝ իր մոտ մտած ու ձեռքը իր վրա դրած, որպեսզի տեսնի» (Գործք 9.1-12):

Հետևյալից Հասկանալի է դառնում, թե ինչու էին քրիստոնյաները վախենում Պողոսից:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

«Անանիան պատասխանեց.

- Տե՛ր, շատերից լսեցի այդ մարդու մասին, թե որքան չարիքներ է արել քո սրբերին՝ Երուսաղեմում. և այստեղ էլ քահանայապետերից իշխանություն ունի կապելու նրանց, ովքեր Քո անունն են կանչում:

Տերն ասաց նրան.

- Գնա՛ դու, որովհետև նա ինձ համար ընտրյալ անոթ է՝ իմ անունը տանելու **Հեթանոսների\*** ու թագավորների և Իսրայելի որդիների առաջ: Քանզի ես նրան ցույց եմ տալու, որ պետք է իմ անվան համար չարչարանք կրի:

Անանիան գնաց ու մտավ այն տունը և ձեռքերը նրա վրա դնելով՝ ասաց.

- Սավո՛ւղ [Սողո՛ւ] եղբայր, Տերն ինձ ուղարկեց, այն Հիսուսը, Որը ճանապարհին քեզ երևաց, երբ գալիս էիր, որպեսզի տեսնես և Սուրբ Հոգով լցվես:

Մեկից նրա աչքերից թեփերի պես բաներ ընկան, և նա իսկույն տեսավ, վեր կացավ ու մկրտվեց: Ապա կերակուր ուտելով՝ ուժը վրան եկավ» (Գործք 9.13-19):

Պողոսը գրել է. «Չէ՞ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսին աչքովս տեսա» (Ա Կորնթ. 9.1): Նա գտնում էր, որ Քրիստոսի երևալն իրեն համարժեք է Քրիստոսի՝ հարությունից անմիջապես հետո առաքյալներին երևալուն. «Բողոքից հետո... ինձ էլ երևաց» (Ա Կորնթ. 15.8):

Պողոսը հենց այնպես չտեսավ Հիսուսին. այդ տեսիլքը հիմնովին շրջեց նրա ողջ կյանքը: Նա քարոզում էր Ավետարանը ոչ թե իր ընտրությունից, այլ՝ անհրաժեշտաբար. «Եթե ես Ավետարանը քարոզեմ, այդ ինձ համար պարծանք չէ, իմ պարտականությունն է» (Ա Կորնթ. 9.16):

Ընդ որում նկատեք. Հանդիպումը Հիսուսի հետ և Պողոսի հետագա դարձը կատարվեցին նրա համար միանգամայն անսպասելի կերպով. «Հանկարծ երկնքից մի մեծ լույս փայլատակեց շուրջս» (Գործք 22.6): Պողոսը գաղափար իսկ չուներ, թե այդ ում աստվածային ձայնն է կանչում իրեն երկնքից: Եվ երբ ձայնն ասաց, թե Նազովրեցի Հիսուսն է, նա սարսուռաց՝ ապշելով այդ լուրից:

Թեև ուղջ չիմանանք էլ Դամասկոսի ճանապարհին Պողոսին պատահած դեպքի ժամանակագրական և հոգեբանական բոլոր մանրամասները, բայց մենք հաստատ գիտենք, որ այն արմատապես փոխեց նրա ողջ կյանքը:

Նախ և առաջ՝ հիմնովին փոխվեց Պողոսի բնավորությունը: «Բրիտանիկա» հանրագիտարանը նրան, նախքան դարձը, նկարագրում է որպես

\* Հեթանոս – հրեաները այդպես էին անվանում ոչ հրեաներին:

անհանդուրժող, անողոք, անհաշտ կրոնական մոլեռանդի, վատ բնավորության տեր ամբարտապան մարդու: Դարձից հետո նա դառնում է հանդուրժող, բարի, զոհաբերության պատրաստ, անաշահախնդիր:

Քենեթ Աքոթ Լատուրեթն ասում է. «Նախկին բոլոր պատկերացումները չըջած կրոնական խոր ապրումը նոր իմաստ հաղորդեց Պողոսի կյանքին՝ նյարդային և անուշազբավ այդ մարդուն դարձնելով ամենաազդեցիկ քարոզիչը»:

Երկրորդ՝ փոխվեց Հիսուսի հետևորդների հետ Պողոսի հարաբերությունների բնույթը: Նա աշակերտների հետ մի քանի օր անցկացրեց Դամասկոսում (Գործք 9.19): Եվ մենք գիտենք, որ երբ Պողոսն եկավ աշակերտների մոտ, վերջիններս բարեկամության ձեռք մեկնեցին նրան:

Երրորդ՝ փոխվեցին Պողոսի հայացքները: Չկորցնելով սերն իր հրեական ժառանգության նկատմամբ՝ նա կատաղի հակառակորդից դարձավ քրիստոնեական հավատի վճռական ջատագով: «Եվ անմիջապես ժողովարաններում սկսեց քարոզել Հիսուսին, որ Նա՛ է Աստծո Որդին» (Գործք 9.20): Փոխվեցին Պողոսի մտավոր համոզմունքները: Սեփական փորձն ստիպեց նրան ընդունել, որ Հիսուսը Մեսիան էր՝ չնայած ճշացող հակասությունը՝ փարիսեցիների մեսիական գաղափարներին: Քրիստոսի մասին նոր պատկերացումը նշանակում էր նրա աշխարհայացքի լիակատար հեղաշրջում:

Ժակ Դյուլպոնը նշում է, որ այն բանից հետո, երբ Պողոսը «ողջ կրքով ժխտում էր, որ խաչված մարդը կարող է Մեսիա լինել, նա հավատաց, որ Հիսուսն իրոք Մեսիան էր, և ի հետևանք այդ նոր հավատի՝ արմատապես փոխվեցին նրա մեսիական գաղափարները»:

Այժմ նա կարողացավ հասկանալ խաչի վրա Քրիստոսի մահը, որն իրեն առաջ թվում էր Տիրոջ անեծք և մարդկային կյանքի՝ խղճահարության արժանի վախճան, իրականում այն մի գործողություն էր, որով Աստված Քրիստոսի միջոցով հաշտվեց աշխարհի հետ: Պողոսը վերջապես հասկացավ, որ Քրիստոսը խաչելությունից մեր տեղն անեծք (Գաղ. 3.13) և մեր փոխարեն մեղավոր (Բ Կորնթ. 5.21) դարձավ: Քրիստոսի մահը պարտություն չէր, այլ՝ մեծ հաղթանակ, քանզի այն հաղթահարվեց հարուժյամբ: Խաչը դադարեց «գայթակղության քար» լինելուց՝ դառնալով Աստվածային մեսիական քավության բուն էությունը: Պողոսի քարոզչական ելույթները կարելի է հանգեցնել նրա հետևյալ խոսքերին. «Պետք էր, որ Քրիստոսը չարչարվեր ու մեռնեիրից հարություն առնելու... Այն Հիսուսը, Որին ես ձեզ եմ քարոզում, Քրիստոսն է» (Գործք 17.3):

Չորրորդ՝ փոխվեց նրա գործունեության իմաստը: Նա հեթանոսներին

ատողից դարձավ հեթանոսների առաքյալ: Հրեական հավատի մոլեռանդից պիետարանիչ դարձավ: Հրեա և փարիսեցի Պողոսը վերից էր նայում հեթանոսներին՝ նրանց համարելով ընտրյալ ժողովրդի (հրեաների) համեմատությամբ ցածր ցեղ: Դամասկոսի դեպքը նրան դարձրեց համոզված առաքյալ, որն իր կյանքը նվիրեց հեթանոսներին օգնելու գործին: Իրեն հայտնված Քրիստոսի մեջ Պողոսը տեսավ բոլոր ազգերի ու ժողովուրդների Փրկչին: Ուղղափառ փարիսեցուց, որի խնդիրը հրեության խստիվ պահպանումն էր, Նա դարձավ քարոզիչը քրիստոնեություն (քրիստոնյաներ) կոչվող նոր աղանդի, որի դեմ առաջ կատաղիորեն պայքարում էր: Նա այնքան էր փոխվել, որ «բոլոր լսողները մեծապես զարմացել էին և ասում էին. Սա չէ՞, որ Երուսաղեմում մեռցնում էր այս (Հիսուս) անունը կանչողներին. այստեղ էլ այն բանի համար էր եկել, որ նրանց կապած տանի քահանայապետերի մոտ» (Գործք 9.21):

Պատմաբան Ֆիլիպ Շաֆը շեշտում է, որ «Պողոսի դարձը չըջադարձային է ոչ միայն նրա անձնական կյանքում. այն կարևոր դարաշրջան է նշանավորում ողջ առաքելական եկեղեցու պատմության, հետևաբար և՛ մարդկության պատմության մեջ: Այդ իրադարձությունը, իր հետևանքներով հանդերձ, կարելի է համեմատել միայն Պենտեկոստի՝ Հիսուսներորդ օրվա հրաշքի հետ: Այն ապահովեց քրիստոնեության համաշխարհային հաղթանակը»:

Մի օր Հյուստոնի համալսարանում ճաշելիս՝ նստած էի մի ուսանողի կողքին: Սկսեցինք գրուցել քրիստոնեության մասին, նա հայտարարեց, որ Քրիստոսի գոյության և քրիստոնեության մասին ոչ մի պատմական ապացույց չկա: Նա ապագա պատմաբան էր, և նրա գրքերի մեջ Հռոմի պատմության դասագիրք տեսա: Ուսանողը խոստովանեց, որ գրքում մի գլուխ կա Պողոս առաքյալի և քրիստոնեության մասին: Նա կարդաց այդ գլուխը և զարմացավ, որ այն սկսվում է տարսոնացի Սողոսի կյանքի պատմությունից և վերձանում Պողոս առաքյալի կյանքի նկարագրություն: Նախավերջին պարբերության մեջ ասված էր, որ, իբր, պարզ չէ, թե ինչ է կատարվել արանքում: Այդժամ ես բացեցի Գործքը և բացատրեցի նրան, որ Քրիստոսն իր հարությունից հետո երևացել է Պողոսին: Ուսանողը համաձայնեց, որ դա Պողոսի՝ քրիստոնեության դառնալու առավել տրամաբանական բացատրությունն է: Իսկ հետո, որոշ ժամանակ անց, ինքն էլ հավատաց Քրիստոսին որպես իր Փրկչի:

Էլիաս էնդրյունն ասում է. «Փարիսեցիներից փարիսեցու այս արմատական փոխակերպության մեջ շատերը տեսան ճշմարտության և գործության առավել համոզիչ ապացույցը մի կրոնի, որին նա դարձել էր,

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

ինչպես նաև Քրիստոսի անձի արժեքի ու դերի»:

Աբերդինի Համալսարանի պրոֆեսոր Արչիբալդ Մաք-Բրայդը Պողոսի մասին գրել է. «Նրա սիրանքների կողքին... խամրում են Ալեքսանդր Մակեդոնացու և Նապոլեոնի Հաղթանակները»:

Կղեմեան ասում է, որ Պողոսը «յոթ անգամ տառապել է շղթաների մեջ, քարոզել Ավետարանն Արևելքում և Արևմուտքում, Հասել Արևմուտքի օվկիանոսի ափ և մարտիրոսվել իշխանավորների ձեռքով»:

Պողոսն անխոնջ կրկնում էր, որ կենդանի, հարուժյուն առած Հիսուսն է վերափոխել իր կյանքը: Նա այնքան էր համոզված, որ Քրիստոսը հարուժյուն է առել մեռելներից, որ ինքն էլ մեռավ հավատի համար:

Օքսֆորդի Համալսարանի երկու պրոֆեսորներ՝ Ջիլբերթ Ուեսթը և Լորդ Լիթլտոնը, իրենց առաջ խնդիր էին դրել ավերել քրիստոնեական հավատի հիմքերը: Ուեսթը ցանկանում էր ապացուցել հարուժյան դադարի ստույգությունը, իսկ Լիթլտոնը մտադիր էր ցույց տալու, որ տարտնացի Սողոսը դարձի չէր եկել՝ չէր դարձել քրիստոնյա:

Նրանք երկուսն էլ հանդեպին ճիշտ հակառակ հետևությունների և դարձան Հիսուսի համոզված հետևորդներ: Լորդ Լիթլտոնը գրում է. «Ուշադիր հետազոտողի համար լուկ Պողոսի դարձն ու առաքելական ծառայությունը բավարար ապացույցն են այն բանի, որ քրիստոնեությունն Աստվածային հայտնություն է»:

Վերջում նա գրում է, որ եթե Պողոսի քսանամյա տառապանքները և ծառայությունը Քրիստոսին իրոք տեղի են ունեցել, ապա նրա դարձն առ քրիստոնեություն նույնպես իրողություն է, քանզի նրա արած ամեն բանը սկսվել է այդ անակնկալ փոփոխությունից: Եվ եթե նա իրոք դարձել է դեպի քրիստոնեություն, ուրեմն Հիսուս Քրիստոսն էլ հարուժյուն է առել մեռելներից. չէ՞ որ, ինչ էլ ասեր կամ աներ Պողոսը, միշտ կապում էր այն պահի հետ, երբ տեսել էր հարուցյալ Քրիստոսին:



**ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՅ.  
ՕՐՀՆՅԱՂ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՔՐԻՍՏՈՍԻ**

*Ուրուգվայում մի ուսանող ինձ հարցրեց.*

*- Պրոֆեսոր Մաք-Դաուել, ինչո՞ւ դուք չեք կարող հրաժարվել քրիստոնեությունից:*

*Ես պատասխանեցի նրան.*

*- Մի շատ պարզ պատճառով: Ես չեմ կարողանում որևէ այլ պատասխան գտնել մարդկային պատմության մեծագույն իրադարձության՝ Հիսուս Քրիստոսի հարույթյան հարցին:*

*Ես 700-ից ավելի ժամ եմ նվիրել այդ հարցի ուսումնասիրմանը, ամենամանրագնին կերպով հետազոտել եմ դրա ակունքները և եկել հետևյալ եզրակացությանը. Հիսուս Քրիստոսի հարույթունը կա՛մ մարդկության վզին երբևէ փաթաթված ամենաչարամիտ, ամենադաժան ու նենգամիտ կեղծիքներից մեկն է, կա՛մ էլ ամենակարևոր փաստը մարդկության ողջ պատմության ընթացքում:*

*Հարույթյան մասին վեճը «Արդյո՞ք քրիստոնեությունն իրական հիմքեր ունի» հարցը հայեցողական ոլորտից տեղափոխում է պատմության ոլորտ:*

*Քրիստոնեությունը պատմականորեն ընդունելի հիմք ունի՞: Բավականաչափ ապացույցներ ունե՞նք հարույթյանը հիմնավորված կերպով հավատալու համար:*

*Ահա մի քանի փաստ, որոնք էական են սույն խնդրի համար. հրեա մարգարե Նազովրեցի Հիսուսը, Որը պնդում էր, թե Ինքը Հին Կտակարանի մարգարեություններում կանխասված Քրիստոսն է, կալանավորվեց ու դատվեց որպես քաղաքական հանցագործ և խաչվեց: Նրա մահվանից և թաղումից երեք օր անց մի քանի կին, գալով գերեզման, տեսան, որ մարմինն անհետացել է: Հիսուսի աշակերտները պնդում էին, որ Աստված Նրան հարույթուն է տվել, և որ, մինչև երկինք համբարձվելը, Նա բազմիցս երևացել է իրենց:*

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Այս հիմքի վրա ծագած քրիստոնեությունը տարածվեց ողջ Հռոմեական կայսրության մեջ և բազում դարեր մեծապես ազդեց պատմության ընթացքի վրա:

Եվ այսպես, հարց. Հիսուսն իրո՞ք Հարություն է առել:

### ՀԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Ըստ հրեական թաղման ծեսի՝ Հիսուսի մարմինը փաթաթել էին կտավի մեջ: Մարմինն ու կտավը պատել էին մոտ 100 լիտր (3Ճ կգ) անուշահոտ նյութերի մածուցիկ խառնուրդով (Հովհ. 19.39-40):

Մարմինը քարե գերեզմանի՝ քարայրի մեջ դնելուց հետո (Մատթ. 27.60), մուտքը փակվեց մի հսկա քարով (մոտ երկու տոննա), որը շարժում էին լծակների համակարգի օգնությամբ: Հսկելու համար մուտքի մոտ կանգնեցվել էին իրենց կարգապահության հայտնի Հռոմեացի զինվորներ: Խստորեն պատժվելու վախը ստիպում էր «անթերի կատարել զինվորական պարտքը՝ հատկապես գիշերային հերթափոխերի ժամանակ»: Պահակախումբը կնքել էր գերեզմանի մուտքը Հռոմեական կնիքով՝ Հռոմի հզորության ու իշխանության խորհրդանիշով: Ով փորձեր շարժել քարը՝ անխուսափելիորեն կվնասեր կնիքը և իր հանդեպ կհարուցեր Հռոմի օրենքի բարկությունը:

Այսուհանդերձ, գերեզմանը թափուր էր:

### ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հիսուսի աշակերտներն ասում էին, որ Նա Հարություն է առել: Պնդում էին, որ Նա երևացել է իրենց քառասուն օր շարունակ՝ իր կենդանի լինելը ցույց տալով «չատ ապացույցներով», որը երբեմն թարգմանվում է՝ բազում ստույգ ապացույցներով (Գործք 1.3):

Պողոս առաքյալն ասում է, որ Հիսուսը նաև երևացել է միանգամից իր ավելի քան 500 Հետևորդներին: Պողոսի օրոք նրանց մեծ մասը տակավին կենդանի էր և կարող էր հաստատել նրա ասածը (Ա Կորնթ. 15.3-8):

Ու. Մ. Ռամսին գրում է. «Ես հավատում եմ Հարությանը նաև այն բանի համար, որ առանց դրա հնարավոր չէ բացատրել մի շարք փաստեր: Դատարկ գերեզմանը չափազանց աղմկահարույց փաստ է, ուստի և այն չի կարելի ժխտել»:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Պատու Ալթհաուսը նշում է, որ «ոչ ոք ոչ մի դեպքում, թեկուզ մի օր կամ մեկ ժամ անգամ չէր հավատա հարության մասին պատմություններին, եթե գերեզմանից մարմնի բացակայությունը հաստատված չլիներ որպես բոլորին հայտնի փաստ»: Իսկ Լ. Մայերը հանգել է հետևյալ եզրակացությունը. «Եթե մենք մանրագնին ու անաչառ կերպով կշռադատելու լինենք եղած բոլոր վկայությունները, ապա, պատմական հետազոտությունների բոլոր կանոնների համաձայն, կարող ենք հանգել հետևյալ համոզիչ հետևությունը. այն գերեզմանը, որտեղ դրել էին Հիսուսի մարմինը, այդ առավոտ իրոք դատարկ է եղել: Մինչև օրս չի գտնվել (ո՛չ գրական աղբյուրների, ո՛չ վիճաբանությունների և ո՛չ էլ հնագիտության մեջ) այս հետևությունը հերքող վկայության գեթ մի ակնարկ»:

Արդ, ի՞նչ բացատրություն տաս դատարկ գերեզմանի փաստին: Գուցե ինչ-որ բնական պատճառ է եղել:

Հիմնվելով պատմական անհերքելի ապացույցների վրա՝ քրիստոնյաները համարում են, որ Աստծուց բխած գերբնական ուժն է Հիսուսին մարմնապես հարություն տվել ժամանակի և տարածություն մեջ: Իհարկե, ոմանք դժվար հավատան սրան: Սակայն չհավատալ, նշանակում է՝ դեմ առնել ավելի դժվարալույծ խնդիրների:

Մեծ նշանակություն ունի գերեզմանի վիճակը հարությունից հետո: Հռոմեական կնիքը խախտված էր. այդ նշանակում էր (ձեռք տվողի համար) անհապաղ մահապատիժ՝ գլխիվայր խաչելով: Հսկա քարը ոչ թե սոսկ տեղաշարժվել էր, այլ գանգվածեղ գերեզմանից մի կողմ էր դրվել. կարծես այն բարձրացրել էին և տարել իր տեղից բավականին հեռու: Պահակախումբը փախել էր:

Պատմաբան Ջաստինի աշխատության մեջ թվարկվում են այն տասնութ գանցանքները, որոնց համար պահակախմբի զինվորները ենթակա էին մահապատի: Դրանց մեջ նախատեսված է այն դեպքը, երբ ժամապահը քնում է իր պահակակետում կամ ինքնակամ լքում է այն:

Գերեզման եկած կանայք այն տեսնում են թափուր: Նրանք խուճապահար վերադառնում են և կանչում տղամարդկանց: Պետրոսն ու Հովհաննեսը վազում են գերեզման: Հովհաննեսն առաջինն է հասնում, բայց չի համարձակվում մտնել: Նա ներս է նայում և այնտեղ տեսնում մարմնի ձևը մասամբ պահպանած, սակայն դատարկ պատանքը: Մարմինը լքել էր այն և գնացել դեպի նոր գոյություն:

Եկեք շիտակն ասենք. այդ տեսարանն ո՞ւմ ասես որ չէր դարձնի հավատացյալ, գոնե՝ առժամանակ:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Հարուժյունը բնական պատճառներով բացատրող բոլոր տեսուժյունները թույլ են ու անհամոզիչ. դրանք, ի վերջո, միայն ամրապնդում են Հարուժյան հավատը:

### ԳԵՐԵՁՄԱՆ ԷԻՆ ՇՓՈԹԵԼ

Կիրսոպ Լեյբի տեսուժյան համաձայն՝ մարմնի անհետացումը առաջինը նկատած կանայք պարզապես չփոթել էին գերեզմանը: Բայց այդ դեպքում նրանց հետևից վազած աշակերտներն էլ պետք է մի ուրիշ գերեզմանի մոտենային:

Սակայն մենք կարող ենք վստահ լինել, որ հրեական իշխանուժյունները, որոնց պահանջով գերեզմանի մոտ պահակախումբ էր կանգնեցվել (հենց մարմնի հափշտակուժյունը կանխելու նպատակով), հաստատ չէին չփոթի տեղը: Չէր չփոթի նաև տեղում եղած պահակախումբը:

Եթե աշակերտներն իրոք ընկել էին մեկ այլ գերեզման, ապա հրեական իշխանուժյուններն անմիջապես կհանեին մարմինն իսկական գերեզմանից, որով և ընդմիջտ վերջ կտրվեր Հարուժյան մասին տարածվող բոլոր լուրերին:

Ըստ բանական բացատրուժյան մեկ այլ տարբերակի՝ Հարուժյունից հետո Քրիստոսի հայտնվելը պարզապես տեսիլք, այսինքն՝ պատրանք է եղել: Սակայն այդ վարկածը հակասում է տեսազգայական պատրանքները կառավարող հոգեբանական օրենքներին: Այն ոչ մի կերպ չի կապվում ո՛չ պատմական իրադրուժյան, ո՛չ էլ առաքյալների հոգեվիճակի հետ:

Եվ բացի այդ, որտե՞ղ էր, ի վերջո, իսկական մարմինը, և ինչո՞ւ այն ոչ ոք չէր տեսել:

### ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾ

Այս վարկածը լայնորեն տարածված է եղել մի քանի դար առաջ, և ցայսօր էլ դրան բավականին հաճախ են անդրադառնում: Դրա կողմնակիցները ասում են, թե Հիսուսն իրականում չի մեռել, այլ պարզապես ուշագնաց է եղել ուժասպառուժյունից ու արյան կորստից: Բոլորը կարծել են, թե մեռել է, բայց նա հետո ուշքի է եկել, իսկ աշակերտներն էլ մտածել են, թե Հարուժյուն է առել մեռելներից:

Սկեպտիկ Դեյվիդ Ֆրիդրիխ Շտրաուսը, որն ինքն էլ չի հավատում

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Հարուժեցանք, այսպես է արտահայտվում «ուշաթափուլեցյան վարկածի» մասին. «Ձի կարող պատահել, որ գերեզմանից փախցված կիսամեռ մարդը, որը թուլուլթյունից հացիվ ոտքի վրա է կանգնել (որին շտապ բուժօգնություն էր անհրաժեշտ) և մարմնական տառապանքների իշխանություն տակ է եղել, հանկարծ իր աշակերտների վրա թողներ մահվանը Հաղթողի և Կյանքի Տիրոջ տպավորություն: Ձէ՞ որ հենց այդ տպավորությունն է դարձել նրանց ապագա բոլոր քարոզների հիմքը: Նման վերակենդանացումը կարող էր միայն թուլացնել այն տպավորությունը, որ Նա թողել էր նրանց վրա Իր կյանքով ու մահով: Լավագույն դեպքում այն կարող էր որոշ եղբերգական երանգ տալ, սակայն ոչ մի կերպ չէր կարող աշակերտների վիշտը վերածել խանդավառության, ինչպես նաև ուսուցչի Հանդեպ նրանց հարգանքը հասցնել կրոնական պաշտամունքի»:

## ՄԱՐՄԻՆԸ ՓԱԽՑՐԵԼ ԷԻՆ

Գոյություն ունի նաև մի այլ վարկած, թե աշակերտները մարմինը փախցրել են պահակների քնած ժամանակ (Մատթ. 28.1-15):

Աշակերտների վհատությունն ու վախկոտությունը հզոր կրավաններ են այս վարկածի դեմ: Այդ ինչպե՞ս հանկարծ նրանք դարձան այն աստիճան քաջ ու վճռական, որ մի դասակ գինվորների քթի տակից փախցրին մարմինը: Նրանց հոգեվիճակն այնպիսին չէր, որ նման բան ձեռնարկեին:

Ջ.Ն. Անդերսոնը, որը եղել է Լոնդոնի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկանը, Արևելքի և Աֆրիկայի ինստիտուտի արևելյան օրենքի ու իրավունքի բաժնի ղեկավարը, Լոնդոնի Համալսարանին առընթեր Իրավունքի ինստիտուտի տնօրենը, ահա հետևյալն է ասում այս վարկածի մասին (ըստ որի, իբր, աշակերտներն են փախցրել Քրիստոսի մարմինը). «Դա կհակասեր նրանց մասին մեր իմացած ամեն ինչին՝ նրանց բարոյական սկզբունքներին ու ողջ կենսաձևին: Բացի դրանից, սույն վարկածը նրանց ապշեցուցիչ վերափոխությունը բացատրելու ակնարկ անգամ չի անում, թե՛ ինչպե՞ս եղավ, որ ընկճված և հուսահատ փախչողները հանկարծ այնպիսի վկաներ դարձան, որոնց արիությունը չէր կարող բեկել ոչ մի չարչարանք»:

Նվյա մի վարկած, թե՛ հրեական կամ Հռոմեական իշխանություններն են վերցրել մարմինը գերեզմանից: Սակայն սա ավելի համոզիչ չէ մարմինը

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

աշակերտներին կողմից գողացված լինելու վարկածից: Եթե իշխանութիւնները տարած լինեին մարմինը կամ գոնե իմանային, թե որտեղ է այն, ապա ինչո՞ւ Հանդես չեկան իրենց համար շահեկան պարզաբանմամբ, երբ աշակերտներն սկսեցին քարոզել Հիսուսի հարուժիւունը: Ինչո՞ւ նրանք չհայտնեցին, թե որտեղ է մարմինը: Ինչո՞ւ չհաննեցին դիակը, չգրին սայլի վրա ու ման չտվին Երուսաղեմով մեկ: Ձէ՞ որ դա միանգամայն վերջ կտար քրիստոնեութեանը:

Դոկտոր Ջոն Ուորվիկ Մոնտգոմերին այս առթիւլ ասում է. «Եվ միանգամայն անհավատալի է, որ առաջին քրիստոնյաները կարողանային այդպիսի կեղծիք մոգոնել և դա քարոզել այն մարդկանց մեջ, ովքեր հեշտ ու հանգիստ կարող էին հերքել այն՝ պարզապես ցուցադրելով Հիսուսի մարմինը»:

## ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ

Հոռոմի պատմութեան հանրահայտ եռհատորյակի հեղինակ, Օքսֆորդի համալսարանի նոր պատմութեան ամբիոնի աշխատակից, պրոֆեսոր Թոմաս Առնոլդը շատ լավ էր հասկանում վկայութիւնների կարևորութիւնը պատմական փաստերի ճշտման գործում: Նա գրել է. «Երկար տարիներ ես ուսումնասիրել եմ այլևայլ դարաշրջանների պատմութիւնը, հետազոտել ու կշռադատել եմ այդ դարաշրջանների մասին գրած հեղինակների վկայութիւնները: Ինձ հայտնի չէ որեւէ այլ փաստ մարդկութեան պատմութեան մեջ, որն անկանխակալ հետազոտողի աչքում հաստատուելի ավելի համոզիչ կամ սպառիչ վկայութիւններով, քան այն մեծ նշանը, որն Աստուծոյ տուել է մեզ՝ ցույց տալու համար, որ Քրիստոսը մեռավ և մեռելներից հարութիւն առավ»:

Անգլիացի գիտնական Բրուք Յոս Ուեստքոթը գրել է. «Հանրագումարի բերելով բոլոր վկայութիւնները՝ չափազանցութիւն չի լինի, եթե ասենք, որ պատմութեան մեջ ոչ մի իրադարձութիւն այնպես ամբողջականորեն ու բազմազանորեն չի վկայվել, ինչպես Քրիստոսի հարութիւնը: Եվ միայն կանխակալ ու չհիմնավորված համոզմունքը, թե դա սուտ ու շինծու բան է, կարող է հետազոտողին դրդել անլիարժեք համարելու առկա ապացույցները»:

Դոկտոր Սայմոն Գրինլիֆը եղել է Ամերիկայի խոշորագույն իրավաբաններից մեկը: Նա Հարվարդի համալսարանի իրավագիտութեան պրոֆեսոր էր. նույն համալսարանի սկանդինավյան իրավունքի պրո-

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Ֆեետրի պաշտոնում փոխարինել էր դատավոր Զոգեֆ Սթորիին: Սրա մասին է, որ Հ. Նոթար Հանրահայտ «Ամերիկյան կենսագրությունների բառարանում» գրում է. «Հարվարդի Համալսարանը Միացյալ Նահանգների Համանման ուսումնական Հաստատությունների մեջ բարձրանալու և այսպիսի կարկառուն դիրքի Հասնելու Համար պարտական է Սթորիի և Գրինլիֆի ջանքերին»:

Հարվարդում իրավագիտության պրոֆեսոր եղած ժամանակ Գրինլիֆը գրել է մի գիրք՝ նվիրված Քրիստոսի Հարություն մասին առաքյալների ցուցմունքների իրավաբանական արժեքին: Նա անտրամաբանական է Համարում այն ենթադրությունը, որ առաքյալները «կարող էին այդչափ Համառորեն պաշտպանել իրենց քարոզած ճշմարտությունները, եթե Հիսուսը իրոք մեռելներից Հարություն առած չլիներ, և այդ փաստն ավելի ակնառու չհնչեր, քան որևէ մի այլ փաստ»: Գրինլիֆը Հանգել էր այն հետևությունը, որ Քրիստոսի Հարությունը պատմության մեջ ամենաանտարակրակների իրադարձություններից է, եթե ելնելու լինենք անգամ սովորական դատարաններում գործող իրավաբանական վկայությունների գնահատման կանոններից:

Մեկ այլ իրավաբան՝ Ֆրանկ Մորիսոնը, որոշել էր հերքել Հարության մասին եղած վկայությունները: Նա չէր ժխտում, որ Հիսուսն ապրել է թերևս մարդուն երբևիցի տրված ամենազեղեցիկ կյանքը: Բայց երբ բանը Հասնում էր Հարությանը, նա սկսում էր պնդել, թե դա առասպել է, որով ինչ-որ մեկը հետագայում ճոխացրել է Հիսուսի իրական պատմությունը:

Նա ուզեցել է գրել Հիսուսի կյանքի վերջին մի քանի օրվա պատմությունը: Անշուշտ, նա այնտեղ Հարությունն առհասարակ հիշատակելու մտադրություն չի ունեցել: Վստահ է եղել, որ Հիսուսի կենսագրության նկատմամբ բանական և խելամիտ մոտեցումը պարզապես օրակարգից կհաներ Հարության խնդիրը:

Սակայն, երբ պրոֆեսիոնալ իրավաբանի տեսակետից է ծանոթանում բոլոր փաստերին, նա փոխում է իր կարծիքը: Վերջն այն է լինում, որ նստում գրում է մեծ աղմուկ Հանած «Ո՞վ է, վերջապես, տեղաշարժել քարը» գիրքը: Առաջին գլուխը կոչվում է «Գիրք, որը չէի ուզում գրել», իսկ մյուս գլուխներում նա վճռականապես պաշտպանում է Քրիստոսի Հարության օգտին եղած վկայությունները:

Իսկ Զորջ Էլզոն Լեդը Հանգել է հետևյալ եզրակացությունը. «Այս բոլոր պատմական փաստերի միակ բանական բացատրությունն այն է, որ Աստված Հիսուսին Հարություն է տվել մարմնով»:

Հիսուս Քրիստոսին Հավատացողն այսօր կարող է 100 տոկոսով

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

վստահ լինել, ինչպես վստահ էին առաջին քրիստոնյաները, որ իր հավատը հիմնված է ոչ թե առասպելների ու ավանդազրույցների, այլ՝ ամբահաստատ պատմական փաստի վրա. այն է՝ Քրիստոսը հարուժյուն է առել մեռելներից, և գերեզմանը թափուր է եղել:

Եվ, որ ամենակարևորն է, յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ այսօր կարող է վայելել հարուցյալ Քրիստոսի գորուծյունն իր անձնական կյանքում: Նախ և առաջ՝ նա գիտի, որ իր մեղքերին թողություն է տրված (Ա Կորնթ. 15.3): Այնուհետև՝ իր համար ապահովված են հավիտենական կյանքն ու հարուժյունը (Ա Կորնթ. 15.19-26): Եվ վերջապես՝ ազատվելու է անխմատ և ունայն կյանքի ճիրաններից ու կարող է նոր մարդ դառնալ Հիսուս Քրիստոսով (Հովհ. 10.10, Բ Կորնթ. 5.17):

Ի՞նչ է ձեր կարծիքն այս մասին: Ի՞նչ եզրակացություն եք հանդում: Ի՞նչ եք մտածում թափուր գերեզմանի վերաբերյալ:

Անգլիայի նախկին գերագույն դատավոր լորդ Դարլինգը, իրավաբանի տեսանկյունից ուսումնասիրելով գոյություն ունեցող բոլոր տվյալները, եզրակացրել է. «Մեր ձեռքի տակ այնքան դրական և բացասական, ուղղակի և անուղղակի, անվիճելի վկայություններ կան, որ ցանկացած ողջամիտ դատարանի վճիռը կարող է լինել միայն մեկը՝ հարուժյուն պատմությունը ճշմարտություն է»:

Քրիստոս հարյալ ի մեռելոց:

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

# 9

## Ո՞վ է ԱՅՍՏԵՂ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՍԻԱՆ, ԹՈՂ ԶԵՌՔ ԲԱՐՁՐԱՑՆԻ

Հիսուան ունեւ բազմաթիւ ու բազմազան ապացույցներ, որոնք հաստատում էին Նրա՝ Մեսիա՝ Աստծո Որդի լինելը: Այս գլխում մենք կարծարժենք դրանցից միայն մեկը, այն է՝ Նրա կյանքում մարգարեութունների կատարվելը:

Զրուցակիցներին ցույց տալու համար, որ ինքը Մեսիան է, Հիսուսը մշտապես հիշեցնում էր Հին Կտակարանի մարգարեութունները:

Ահա գաղտացիների հղված ուղերձը (4.4). «Բայց երբ ժամանակը լրացավ, Աստված ուղարկեց Իր Որդուն, Որը ծնվեց կնոջից ու մտավ օրենքի տակ»: Սա վկայութունն է այն բանի, որ Հիսուս Քրիստոսով կատարվել են մարգարեութունները:

«Եվ սկսած Մովսեսից ու բոլոր մարգարեներից՝ մեկնում էր նրանց այն ամենը, ինչ որ Իր մասին գրված էր բոլոր Գրքերում» (Ղուկ. 24.27): Հիսուան ասաց նրանց. «Սրանք են այն խոսքերը, որ ասացի ձեզ, երբ ձեզ հետ էի, թե՛ պետք է կատարվի այն ամենը, ինչ Իմ մասին գրված է Մովսեսի օրենքում և մարգարեների ու սաղմոսների մեջ (Ղուկ. 24.44):

Նա ասել է. «Եթե դուք հավատայիք Մովսեսին, Ինձ էլ կհավատայիք, քանի որ նա իմ մասին է գրել» (Հովհ. 5.46): Այնուհետև՝ «Աբրահամը՝ ձեր հայրը, ցնձաց, որ պիտի տեսներ Իմ օրը. ու տեսավ և ուրախացավ» (Հովհ. 8.56):

Առաքյալները, այդ թվում նաև Նոր Կտակարանը գրողները, միշտ մասնանշել են կատարված մարգարեութունները, երբ իրենց պետք է եղել ապացուցել, որ Հիսուան իսկապես Աստծո Որդին է, Մեսիան, Փրկիչը: «Աստված, ինչ որ նախապես Իր բոլոր մարգարեների բերանով հայտնել էր Քրիստոսի չարչարվելու մասին, այդպես էլ կատարեց» (Գործք 3.18):

«Պողոսն էլ, իր սովորութեան համաձայն, մտավ նրանց մոտ և երեք շաբաթ օր նրանց հետ խոսեց Գրքերից (այսինքն՝ Հին Կտակարանի գրքերից) բացատրելով ու ապացուցելով, որ Քրիստոսը պիտի չարչարվեր

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

ու մեռելներից հարուժյուն առնել, և ասում էր. Այն Հիսուսը, որ ձեզ եմ քարոզում, Քրիստոսն է» (Գործք 17.2-3):

«Քանզի նախ ձեզ ավանդեցի այն, ինչը ես էլ ընդունեցի. թե՛ Քրիստոսը մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և այլ կերպ ասած՝ Քրիստոսի մահը կանխաձայնված էր Հին Կտակարանի մեջ, որը գրվել էր երկրի վրա Նրա հայտնվելուց շատ ու շատ առաջ՝ և թաղվեց ու հարուժյուն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի» (Ա Կոր. 15.3-4):

Հին Կտակարանի մեջ կա շուրջ 60 խոշոր մեսիական մարգարեություն և մոտ 270 վկայություն, որոնք կատարվեցին մեկ մարդով՝ Հիսուս Քրիստոսով: Օգտակար է քննել Քրիստոսով իրականացած այդ բոլոր կանխաասցությունները՝ որպես Նրա «անձնագիր»:

Հավանաբար երբեք մտքներովդ չի անցել, թե ինչ կարևոր նշանակություն ունեն ձեր անձնագրի ճշգրիտ տվյալները, չէ՞ որ հենց այդ մանրուքներն են ձեզ զատում մեր մոլորակի վրա ապրող չորս միլիարդ մարդկանցից:

## ՊԱՏՄԱԿԱՆ «ԱՆՁՆԱԳԻՐ»

Աստված ավելի հանգամանորեն պատմության մեջ այնպիսի նշաններ է գծել, որոնք Նրա Որդուն՝ Մեսիային՝ մարդկության Փրկչին գատում են երկրի վրա երբեկից ապրած, ապրող և ապրելիք մարդկանցից: Այդ նշանների մանրամասները գրված են Հին Կտակարանում: Սույն վավերագիրն ստեղծվել է 1000 տարվա ընթացքում և պարունակում է Նրա գալստյան վերաբերյալ ավելի քան 300 վկայություն: Ըստ հավանականությունների տեսության՝ 10157-ից կա միայն մեկ հնարավորություն (շանա), որ թեկուզ քառասունութ այդպիսի մարգարեություններ կարող են կատարվել մեկ մարդու վերաբերյալ:

Աստծո տված ցուցումներով (նշաններով) մարդուն գատորոշելու ինդիքը բարդանում է նաև այն պատճառով, որ Մեսիայի վերաբերյալ բոլոր մարգարեություններն արվել են մարդկությանը Նրա հայտնվելուց առնվազն 400 տարի առաջ:

Այստեղ, իհարկե, ոմանք կարող են առարկել՝ ասելով, թե, իբր, այդ մարգարեությունները գրվել են Քրիստոսից հետո և պարզապես հարմարեցվել են այնպես, որ դրանք համընկնեն Նրա կյանքի դրվագներին: Այդ առարկությունն առաջին հայացքից կարող է թվալ հիմնավորված, եթե միայն չիմանայինք, որ դեռևս մ.թ.ա. 200-150 թթ. Հին Կտակարանի

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

եբրայերեն տեքստը թարգմանվել է հունարեն: Այս հունարեն թարգմանությունն ապացուցում է, որ տվյալ մարգարեությունների գրառման ժամանակը և Քրիստոսով գրանց իրականացումը իրարից բաժանված են առնվազն երկու դարով:

Հարկավ, միայն իսկական Մեսիայի նշանները կարող էին համընկնել Աստծո մատնացույց արած նշաններին: Հայտնի է մոտ քառասուն դեպք, երբ մարդիկ պնդել են, թե իրենք հրեական Մեսիաներ են: Բայց նրանցից միայն մեկը՝ Հիսուս Քրիստոսն էր հիմնվում իրականացած մարգարեությունների վրա, և միայն Նրա պարագայում են ապացույցները համոզիչ:

Արդ, ի՞նչ մանրամասներ են դրանք: Ի՞նչ իրադարձություններ պիտի նախորդեին կամ համընկնեին Աստծո Որդու գալստյանը:

Նախ՝ մեզ անհրաժեշտ է անդրադառնալ Մինդոց գրքի 3.15-ին, որն առաջին մեսիական մարգարեությունն է: Ամբողջ Ս. Գրքում միայն մի մարդ է ծնվում «կնոջ սերնդից», իսկ մնացյալները տղամարդուց են սերում: Այստեղ ասվում է այն մարդու մասին, որն աշխարհ է գալու և կործանելու է աստանայի գործերը. «Նա քո (օձի) գլուխը պիտի ջախջախի»:

Մինդոց գրքում (9 և 10 գլուխներում) Աստված այնուհետև ավելի որոշակի է դարձնում նշանները: Նոյն ուներ երեք որդի՝ Սեմը, Հաբեթը և Քամը: Այժմ գոյություն ունեցող ազգերից ու ժողովուրդներից յուրաքանչյուրը սերվել է այդ երեք եղբայրներից որևէ մեկից: Բայց իր այդ արտահայտությամբ Աստված, ըստ էության, վերացնում է Մեսիայի ծննդյան հնարավորությունն այդ ժողովուրդներից երկու երրորդի մեջ: Մեսիան գալու է Սեմի հետնորդներից:

Այնուհետև, մոտենալով Ք.Ա. 2000 թվականին՝ մենք տեսնում ենք, որ Աստված քաղզեացիների Ուր քաղաքից կանչել է Աբրահամ անունով մի մարդու: Սրա հետ խոսելիս Աստված ավելի որոշակի է արտահայտվում, ասելով, որ Մեսիան նրա հետնորդներից մեկն է լինելու (Մն. 12, 17, 22), և աշխարհի բոլոր ազգերն օրհնվելու են Աբրահամի սերնդով: Երբ Աբրահամն ունեցավ երկու որդի՝ Իսմայելին ու Իսահակին, Աստված ընտրեց երկրորդ որդուն՝ Իսահակին, և դրանով էլ՝ ավելի նեղացրեց շրջանը (Մինդոց 17.21): Իսահակն ունեցավ երկու որդի՝ Հակոբին ու Եսավին: Եվ Աստված ընտրեց Հակոբի սերունդը (Մինդոց 28,35. 10-12, Թվոց 24.17): Հակոբն ունեցավ տասներկու որդի, որոնցից էլ սերվեցին Իսրայելի տասներկու ցեղերը: Աստված մերժեց տասներկուսից տասնմեկին և ընտրեց Հուդայի սերունդը: Հուդայի բոլոր շառավիղներից Աստծո ընտրությունն ընկավ Հեսսեից եկող ճյուղի վրա (Եսայի 11.1-5): Շրջանը գնալով նեղանում է...

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

Հեսսեն ունեցավ ութ որդի: Բայց Բ Թագավորաց գրքում (7.12-16) և Երեմիայի մարգարեության մեջ (23.5) Աստված մերժում է Հեսսեի ութ սերունդներից յոթին. մենք իմանում ենք, որ Աստծո Դեսպանը լինելու է ոչ միայն կնոջ սերնդից, ոչ միայն Սեմի Հետնորդը, ոչ միայն Հրեաների միջից, ոչ միայն Իսահակի, Հակոբի, Հուդայի Հետնորդը, այլև՝ այն, որ լինելու է Դավթի տնից:

Մ.թ.ա. 1012 թ. թվագրվող մարգարեության մաս (Սաղմ. 22.7-19, Ջաք. 12.10, Հմմտ. Գաղ. 3.13) կանխավում է, որ Նրա ձեռքերն ու ոտքերը ծակելու են (այսինքն՝ Նրան խաչելու են): Այս նկարագրությունն արվել է Հռոմեացիների կողմից՝ խաչելությունն առաջին անգամ գործադրվելուց 800 տարի առաջ:

Եսային (7.14) ավելացնում է, որ Նա ծնվելու է կույսից, բնական ծնունդ՝ անբնական Հղիացումից, մի բան, որը մարդկային Հնարավորությունների ու Հասկացողության սահմաններից դուրս է:

Եսայու մի քանի մարգարեություններում (8.14, 28.16, 49.6, 50.6, 52, 53, 60.3) և սաղմոսներում (21.8-9, 117.22) նկարագրվում են այն Հասարակական միջնորդն ու արձագանքը, որ սպասում են Աստծո Դեսպանին: Նրա Հարազատ ժողովուրդը՝ Հրեաները, մերժելու են Նրան, իսկ Հեթանոսները Հավատալու են:

Դեսպանից առաջ գալու է Նրա նախակարապետը (Եսայի 40.3, Մաղ. 3.1)՝ Տիրոջ ճանապարհը պատրաստող՝ անապատում կանչողի ձայնը՝ Հովհաննես Մկրտիչը:

## ԵՐԵՍՈՒՆ ԱՐԾԱԹԱԴՐԱՄ

Անհրաժեշտ է նշել նաև այն յոթ մարգարեությունները, որոնք ավելի որոշակի են դարձնում գալիք դրաման (Ջաք. 11.11-13, Սաղ. 40, Համեմատել Եր. 32.6-15 և Մատթ. 27.3-10):

Աստված մատնանշում է, որ Մեսիային՝

- 1) մատնելու են,
- 2) մատնելու է Իր բարեկամը,
- 3) երեսուն դրամի Համար,
- 4) դրամներն արծաթից են լինելու,
- 5) դրանք նետվելու են Հատակին,
- 6) տաճարի Հատակին,

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

7) և դրանցով գնվելու է մի բրուտի ագարակ:

Աշխարհիս բոլոր քաղաքներից Աստված Բեթղեհեմն ընտրեց որպես Մեսիայի ծննդավայր (Միք. 5.2), որի բնակչության թիվը 1000 մարդուց էլ պակաս էր:

Այնուհետև, մի շարք մարգարեություններում Նա ցույց է տվել նույնիսկ Իր Դեսպանի գալստյան ժամանակամիջոցը: Օրինակ՝ Մաղաքիայի գրքում (3.1) և Հին Կտակարանի չորս այլ տեղերում ասված է, որ Մեսիան գալու է Երուսաղեմի տաճարի կանգուն եղած ժամանակ: Այս մարգարեությունը Հսկայական նշանակություն ունի, քանզի տաճարն ավերվել է մ.թ. 70 թ. և առ այսօր չի վերականգնվել:

Ճշգրիտ ծագումնաբանությունը, ծննդյան վայրը, ժամանակը և Հանգամանքները, մարդկանց արձագանքը, մատնությունը, մահապատժի տեսակը... Այս ամենը լրիկ չնչին մասն են այն «անձնագրի» պարունակած Հարյուրավոր տվյալների, որով կարելի է ճանաչել Աստծո Որդուն՝ Մեսիային՝ մարդկության Փրկչին:

## ԳՈՒՑԵ ԱՅՍ ԱՄԵՆԸ ՍՈՍԿ ԶՈՒԳԱԴԻՊՈՒԹՅՈՒՆ Է

«Ի՞նչ կա որ, որոշ մարգարեություններ իրականացել են Զ. Քենեդիի, Մ. Լ. Քինգի, Գ. Ա. Նասերի և այլոց վերաբերմամբ», - ասում է ընդգիմախոսը:

Այո, Հավանաբար կարելի է երկու-երեք մարդ գտնել, որոնց կյանքում իրագործված լինեն մի քանի մարգարեություններ, բայց ոչ երեք՝ բոլոր 60 գլխավոր և 270 մասնավոր մարգարեությունները: Ի դեպ, եթե ձեզ Հաջողվի գտնել Հիսուսից բացի, կենդանի թե մեռած, որևէ մեկին, որի կյանքում իրականացած լինեն Ֆրեդ Զոն Մելդաուի «Մեսիան երկու Կտակարաններում» գրքում թվարկված Մեսիայի մասին մարգարեությունների գոնե կեսը, ապա ամերիկյան «Քրիստիան Վիկտորի Փաբլիչինգ Բոմպանի» Հրատարակչությունը (ք. Դենվեր, Կոլորադոյի նահանգ) պատրաստ է պարգևատրել ձեզ 1000 դոլարով:

Պետք է Սթոների «Գիտությունն է խոսում» գրքի նախաբանում Ամերիկյան գիտական ընկերության քարտուղար Հ. Հարոլդ Հարցելը գրում է. «Գիտությունն է խոսում» գրքի ձեռագիրը մանրագնին կերպով ուսումնասիրվել է Ամերիկյան գիտական ընկերության անդամներից կազմված կոմիտեի և նույն ընկերության գործադիր կոմիտեի կողմից: Երկու կոմիտեների անդամներն էլ Հանգել են այն եզրակացությունը, որ

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

այդ գիրքն ամբողջությամբ վերցրած արժանահավատ և ճշգրիտ է իր պարունակած գիտական նյութով: Գրքում կատարված մաթեմատիկական վերլուծությունը հիմնված է Հավանականությունների տեսություն՝ որևէ առարկություն չհարուցող սկզբունքների վրա, և պրոֆեսոր Սթոներն այդ սկզբունքները կիրառել է պատշաճ ու համոզիչ կերպով»:

Հավանականությունների ներքոբերյալ օրինակները վերցված են այդ գրքից՝ ցույց տալու համար, որ հավանականությունների տեսությունը բացառում է գուգադիպություն հնարավորությունը տվյալ դեպքում:

Սթոներն ասում է, որ, կիրառելով հավանականությունների տեսությունն արդի մեթոդները յոթ մարգարեությունների վերաբերմամբ, «մենք ստանում ենք հետևյալ արդյունքը. այն բանի հավանականությունը, որ եթե որևէ մարդ կարողանար ապրել մինչև օրս և իրականացնել բոլոր այդ յոթ մարգարեությունները, հավասար է 1 10<sup>27</sup>»: Սա նշանակում է 1 շանս 100.000.000.000.000.000.000 հնարավորից: Այդ թվի մասին մեզ պատկերացում տալու համար Սթոները բերում է հետևյալ օրինակը. «Դիցուք վերցնում ենք 10<sup>27</sup> արծաթե դրամ և դրանք սփռում Տեքսասի տարածքով մեկ: Դրանք ողջ նահանգը կծածկեն 60 սմ հաստությամբ շերտով: Ապա դրամներից մեկի վրա նշան ենք անում, որից հետո ողջ տարածքի դրամները մի լավ խառնում ենք: Այնուհետև կապում ենք որևէ մարդու աչքերը և նրան ասում, որ կարող է գնալ ցանկացած ուղղությամբ, բայց պետք է գտնի այդ արծաթադրամը և ասի, որ ձեռքինը հենց նշան արած դրամն է: Արդ՝ որքա՞ն է դա հնարավոր:

Ուրեմն, եթե հեղինակներն այդ յոթ մարգարեությունները գրեին՝ ելնելով սոսկ իրենց մասնավոր նկատառումներից, այդ մարգարեությունները ճիշտ նույնքան (վերը նշվածի չափ) շանս կունենային միևնույն մարդու կյանքում իրականանալու համար՝ դրանք գրելու պահից մինչև մեր օրերը:

Այսպիսով՝ կա՛մ այդ մարգարեություններն Աստծո հայտնություններ էին, կա՛մ էլ մարգարեները դրանք գրել են՝ ելնելով պատմություն ընթացքի մասին սեփական պատկերացումներից: Այս պարագայում դրանց իրականացման հավանականությունը եղել է 1-ը 10<sup>27</sup>-ի դիմաց, բայց, այնուհանդերձ, դրանք բոլորն իրականացել են Քրիստոսով:

Սույն յոթ մարգարեությունների՝ մեկ անձով իրականանալը փաստում է, որ մարգարեությունները գրվել են աստվածային ներշնչմամբ:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՍԱՆ

### ԵՎՍ ՄԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Այս առարկությունն իմաստն այն է, թե Հիսուսը գիտակցաբար է ձգտել իրականացնել Հին Կտակարանի մարգարեությունները:

Այն համոզիչ է թվում միայն առաջին հայացքից:

Բանն այն է, որ Մեսիայի գալստյան բազմաթիվ մանրամասնություններ, ինչպես որ գրված են եղել մարգարեություններում, բացարձակապես ենթակա չեն մարդկային վերահսկողությանը:

Օրինակ՝ ծննդյան վայրը: Մի<sup>6</sup>թե հնարավոր է երևակայել, որ Հիսուսն էջի վրա նստած Մարիամի արգանդի միջից ասի՝ «Մայրիկ, չե՞նք հասցնի...»: Երբ Հերովդեսը քահանայապետերին ու դպիրներին հարցրեց. «Քրիստոսը որտե՞ղ պիտի ծնվի», նրանք պատասխանեցին. «Հրեաստանի Բեթղեհեմում, որովհետև այսպես է գրված մարգարեի ձեռքով» (Մատթ. 2.4-5):

Նրա գալստյան ժամանակը, ծննդյան հանգամանքները, Հուդայի մատուցությունը և դրա գինը, մահապատժի տեսակը, մարդկանց արձագանքը՝ ծաղրանքը, վրան թքելը, Նրա հագուստի վրա վիճակ գցելը, Նրա հագուստը չպատռելը և այլն:

Մարգարեությունների կեան այնպիսին էր, որ Նա ոչ մի կերպ չէր կարող ազդել դրանց իրականացման վրա: Նա չէր կարող Իր կամքով ծնվել «կնոջ սերնդից, Սեմի և Աբրահամի հետնորդներից» և այլն: Ուստի և զարմանալի չէ, որ Հիսուսը և առաքյալները կատարված մարգարեություններն օգտագործեցին իբրև այն բանի ապացույց, որ Ինքը Մեսիան է:

Իսկ Աստծո ինչի՞ն էին պետք այդ բարդությունները:

Իմ կարծիքով Նա ցանկացել է, որ Հիսուս Քրիստոսը մարդկանց մոտ գալու ժամանակ ունենար բոլոր ապացույցները:

Սակայն ամենակարևորն այն է, որ Հիսուսն եկավ մարդկային կյանքը վերափոխելու համար: Միայն Նրանով են կատարվել Հին Կտակարանի հարյուրավոր այն մարգարեությունները, որոնց մեջ խոսվում է Նրա գալստյան մասին: Եվ միայն Նա կարող է իրականացնել մեծագույն մարգարեությունը նրանց համար, ովքեր կընդունեն այն, որն է՝ նոր կյանքի խոստումը:

«Ձեզ նոր սիրտ պիտի տամ ու ձեր մեջ նոր հոգի պիտի դնեմ... Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է: Հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Եզեկ. 36.25-27, Բ Կոր. 5.17):

# 10

## ՄԻՔԹԵ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ՉԿԱ

Վերջերս Տեքսասի համալսարանում մի ուսանող հարց տվեց ինձ.

- Իսկ ինչո՞ւ է Հիսուսը Աստծուն մոտենալու միակ ճանապարհը:

Դրանից առաջ ես պատմել էի, որ Հիսուսը պնդում էր, թե ինքն է միակ ճանապարհն առ Աստված, որ Սուրբ Գրքերի ու առաքյալների վկայությունները հավաստի են, և որ մենք բավականաչափ ապացույցներ ունենք Հիսուսի՝ որպես Փրկչի և Աստծո հանդեպ հավատը հիմնավորելու համար:

Եվ այս ամենից հետո՝ դարձյալ. «Ինչո՞ւ Հիսուսը: Մի՞թե Աստծո մոտ տանող այլ ճանապարհ չկա: Իսկ Բուդդա՞ն, Մուհամմե՞դը: Մի՞թե բավական չէ, որ մարդը պարզապես բարեպաշտ կյանք վարի: Եթե Աստված այդքան սիրառատ է, մի՞թե չի ցանկանա բոլոր մարդկանց ընդունել այնպես, ինչպես որ կան»:

Մի գործարար ինձ ասաց.

- Շատ բարի, դուք ապացուցեցիք, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է: Բայց մի՞թե Հիսուսից բացի այլ ճանապարհ չկա առ Աստված:

Այս երկու արձագանքները միանգամայն բնորոշ են մեր ժամանակակիցներին: Ինձ հաճախ հարցնում են, թե ինչո՞ւ մարդը Աստծուն մոտենալու և մեղքերի թողություն ստանալու համար Հիսուսին պետք է հավատա որպես Քրիստոսի (Օծյալի) և Տիրոջ: Ես էլ պատասխանում եմ, որ շատերը չեն հասկանում Աստծո էությունը, և բերում եմ ստորև շարադրվող փաստարկները:

Սովորաբար մարդիկ հարցը ձևակերպում են հետևյալ կերպ. «Ինչպե՞ս կարող է սիրող Աստվածը թույլ տալ, որ մարդն ընկնի դժոխք»: Իսկ ես կհարցնեի. «Ինչպե՞ս կարող է սուրբ, արդար և ճշմարիտ Աստված իր մոտ թողնել մեղավորին»:

Աստծո էությունը և բնավորությունը սխալ ըմբռնումը հաճախ է դրված եղել աստվածաբանական ու բարոյագիտական անվերջանալի խնդիրների հիմքում: Շատերը դուրսով են ընկալում, որ Աստված ամենքին է սիրում, ասկայն սրանից առաջ չեն գնում:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Բանն այն է, որ Նա միայն սիրող Աստված չէ: Ձէ՞ որ Նա նաև արդար, ճշմարիտ ու սուրբ Աստված է:

Ըստ էություն՝ մենք Աստծուն ճանաչում ենք նրա Հատկանիշների միջոցով: Մակայն Հատկանիշն Աստծո մաս չէ: Մի ժամանակ ես կարծում էի, որ եթե վերցնենք Աստծո բոլոր Հատկությունները՝ սրբությունը, սերը, արդարությունը, ճշմարտությունը, և դրանք իրար գումարենք, ապա ստացված գումարը Հենց Աստված կլինի: Դա ճիշտ չէ: Հատկությունն Աստծո մաս չէ, այլ՝ մի բան, որ Հատուկ է Աստծուն:

Օրինակ՝ «Աստված սեր է» ասելով մենք նկատի չունենք, որ սերն Աստծո մասն է: Մենք նկատի ունենք այն, որ սերն Աստծուն բնորոշ Հատկություն է: Երբ Աստված սիրում է, ապա դա պարզապես Նրա բնական դրսևորումն է:

Գոյություն ունի մի խնդիր, որն առաջացել է մարդկության՝ մեղքի մեջ ընկնելու հետևանքով: Անցյալ Հավիտենականում Աստված որոշեց ստեղծել տղամարդուն և կնոջը: Աստվածաշնչում ես տեսնում եմ այն բանի վկայությունը, որ Աստված տղամարդուն և կնոջը ստեղծեց, որպեսզի նրանց բաժնեկից դարձնի իր սիրուն ու փառքին: Բայց երբ Ադամն ու Եվան ըմբոստացան և գնացին իրենց ճանապարհով, մարդկությունը ճանաչեց մեղքը: Այդ պահից մարդիկ դարձան մեղավոր, այսինքն՝ կտրվեցին Աստծուց: Աստված ընկալ հույժ դժվարին կացություն մեջ: Նա ստեղծել էր տղամարդուն և կնոջը, որ նրանք բաժնեկից լինեն իր փառքին, իսկ նրանք չանսացին Նրա խորհրդին ու հրամանին և ընտրեցին մեղքի ճամփան: Բայց Աստված չքեց մարդուն և նրա կողմը դարձավ սիրով, որպեսզի փրկի:

Բայց քանի որ Նա ոչ միայն սիրող, այլ նաև սուրբ, արդար և ճշմարիտ Աստված է, ապա Նրա բուն էությունը պահանջում է վերացնել ցանկացած մեղավորի: Աստվածաշնչում գրված է. «Քանզի մեղքի վարձը մահն է»: Այնպես որ, եթե կարելի է ասել, Աստծո առջև խնդիր ծառայալ: Եվ ահա սուրբ Երրորդությունը՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված, որոշում է. Հիսուսը՝ Որդի Աստվածը, մարդկային մարմին է առնելու՝ մարդեղանալու է: Նա դառնալու է Աստվածամարդ: Սա գրված է Հովհաննեսի Ավետարանում (1.14). «Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»: Իսկ Փրկիչներին Հղված ուղերձում (2.7) ասվում է, որ Հիսուս Քրիստոսը «Իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով...»:

Հիսուսն Աստվածամարդ էր: Նա մարդ էր, ասես երբեք Աստված չէր եղել, և միաժամանակ Աստված էր, ասես երբեք մարդ չէր եղել: Իր իսկ

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

ընտրությունյամբ Նա ապրել է անմեղ կյանքով՝ լիովին ենթարկվելով Հորը: «Մեղքի վարձը մահն է» աստվածաշնչյան ասույթը կիրառելի չէր Նրա նկատմամբ: Եվ քանի որ Նա ոչ միայն մահկանացու մարդ էր, այլ նաև՝ անմահ Աստված, ուստի ունեւր աշխարհի մեղքերն իր վրա վերցնելու անսահման կարողություն:

Երբ մոտ 2000 տարի առաջ Նա խաչը ելավ, Աստծո սուրբ, ճշմարիտ և արդար բարկությունը թափվեց իր իսկ Որդու վրա: Եվ երբ Հիսուսն ասաց. «Կատարված է», Աստծո ճշմարիտ և արդար էությունը լիովին բավարարվեց:

Հիսուսի մահը որոշ իմաստով Աստծուն հնարավորություն տվեց սիրով վերաբերվել մարդկության հանդեպ և չոչնչացնել մեղավորներին, որովհետև խաչի վրա Հիսուսի մահով բավարարվել էր Աստծո արդարադատ էությունը:

Ես հաճախ մարդկանց հարց եմ տալիս. «Ո՞ւմ համար մեռավ Հիսուսը»: Սովորաբար պատասխանում են. «Ինձ համար», կամ՝ «Մարդկության համար»: Բայց ես ասում եմ. «Այո, այդ ամենը ճիշտ է, բայց է՞լ ում համար»: Ի պատասխան լսում եմ. «Դե, չգիտեմ»: Այդժամ ես եմ պատասխանում. «Հայր Աստծո համար»:

Այո՛, Քրիստոսը մեռավ ոչ միայն մեզ համար, այլ նաև՝ Հոր: Հոռոմեացիներին հղված ուղերձի երրորդ գլխում այդ մասին գրված է՝ «քավություն», այսինքն՝ պահանջի գոհացում: Եվ երբ Հիսուսը խաչի վրա մեռավ, ապա մեռավ ոչ միայն մեզ համար. Նա մեռավ, որպեսզի բավարարի Աստծո բուն էության սուրբ և արդար պահանջները:

Տարիներ առաջ Կալիֆոռնիայում մի դեպք էր պատահել, որն օգնում է հասկանալու, թե ինչ կերպ է Հիսուսի մահը լուծել Աստծո առջև ծառայած խնդիրը՝ ինչպե՞ս արձագանքել մարդկության մեղավորությունը: Ոստիկանությունը բռնել էր մի ջահել կնոջ՝ մեքենա վարելիս արագությունը գերազանցելու համար: Նրա դեմ գործ էր հարուցվել: Եվ երբ դատավորը հարցրել էր, թե նա իրեն մեղավոր ճանաչո՞ւմ է, կինն ասել էր, որ ճանաչում է: Դատավորն իջեցրել էր իր մուրճը և նրան որպես պատիժ նշանակել 100 դրոյր տուգանք կամ տասն օրվա բանտարկություն: Իսկ հետո անսպասելի բան էր տեղի ունեցել. դատավորը վեր էր կացել, հանել էր իր պատմուճանը, իջել դատապարտյալի մոտ և անձամբ վճարել տուգանքը: Իսկ ի՞նչ էր պատահել: Պարզապես դատավորն այդ կնոջ հայրն էր: Նա սիրում էր իր դստերը, սակայն արդարամիտ դատավոր էր: Դուստրը խախտել էր օրենքը, և նա չէր կարող ասել. «Ես քեզ պնքա՞ն եմ սիրում, որ ներում եմ: Դու ազատ ես»: Եթե նա այդպես վարվեր, վատ

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՍՆ

դատավոր կլիներ: Նա հովանավորած կլիներ օրենքը խախտողին: Սակայն նա այնքան է սիրել դատերը, որ հանել է դատավորական պատմուճանը, թողել իր տեղը և, արդեն որպես հայր, նրա փոխարեն վճարել տուգանքը:

Այս դեպքն ինչ-որ չափով պարզաբանում է, թե Աստված ինչ է արել մեզ համար Հիտուս Քրիստոսի միջոցով: Մենք մեղանչել ենք: Աստվածաշնչում գրված է. «Մեղքի վարձը մահն է»: Եվ Աստված որքան էլ մեզ սիրեր, Նա պետք է զարկեր Իր դատավարական մուրճը և ասեր. «Մա՛հ»: Քանզի Նա ճշմարիտ Աստված է, արդար Աստված: Սակայն, լինելով սիրող Աստված, նա մեզ այնպես սիրեց, որ Իր գահից իջավ Հիտուս Քրիստոս մարդու կերպարանքով և վճարեց մեր փոխարեն. վճարեց խաչի վրա իր մահով:

Այստեղ շատերը հարց են տալիս. «Իսկ ինչո՞ւ Աստված չէր կարող ներել հենց այնպես»: Իսկ մի խոշոր միավորման տնօրեն էլ ասաց. «Իմ ենթակամները հաճախ են զանցանքներ կատարում, օրինակ՝ մի բան են կոտորում, և ես նրանց միշտ ներում եմ: Ուրեմն, ձեր ասելով, ի՞նչ է դուրս գալիս, ես կարող եմ ներել, իսկ Աստված՝ ո՞չ»:

Մարդիկ չեն կարողանում հասկանալ, որ յուրաքանչյուր ներում կապված է հատուցման հետ: Օրինակ՝ իմ աղջիկը տանը լամպ է կոտրել: Ես՝ սիրող և ներողամիտ հայրս, նրան գիրկս եմ առնում, հանգստացնում եմ և ասում.

- Մի՛ լար, քաղցրիկս: Հայրիկը սիրում և ներում է քեզ:

Այդտեղ գրուցակիցս սովորաբար միջամտում է.

- Տեսնո՞ւմ եք, Աստված էլ պիտի այդպես վարվի:

Այդժամ հարց եմ տալիս.

- Իսկ ո՞վ է վճարում լամպի համար...


Ձէ՞ որ վճարողը ես եմ: Ներումը միշտ իր գինն ունի: Օրինակ՝ ինչ-որ մեկը ձեզ վիրավորում է ուրիշների ներկայությամբ, իսկ դուք հետո վեհանձնորեն ասում եք. «Ես ձեզ ներում եմ»: Ո՞վ է վճարում վիրավորանքի համար: Դո՛ւք:

Ճիշտ այդպես էլ Աստված վարվեց: Նա ասաց.

Ես ձեզ ներում եմ:

Եվ Ինքն էլ վճարեց այդ ներման համար:

Վճարեց խաչ բարձրանալով:



## ՆԱ ՎԵՐԱՓՈՒՆԵՑ ԿՅԱՆՔՍ

Հիսուս Քրիստոսը կենդանի է: Իմ ապրելն ու գործելն արդեն ապացույցն են այն բանի, որ Հիսուս Քրիստոսը Հարուժվում է առեկ մեռելներից:

Թուժմա Աքվիլնացին գրել է. «Ամեն Հոգու մեջ ապրում է երջանկության և իմաստի ձգտումը»: Երբ պատանի էի, ուզում էի երջանիկ լինել: Ես ուզում էի լինել աշխարհի ամենաերջանիկ մարդկանցից մեկը: Բացի այդ, ուզում էի, որ իմ կյանքն իմաստավորված լինի: Փնտրում էի պատասխանը հետևյալ հարցերի. «Ո՞վ եմ ես: Ինչո՞ւ եմ աշխարհ եկել: Ո՞ւր է տանում ինձ կյանքի ճանապարհը»:

Դրանից բացի, ես ուզում էի լինել ազատ: Ուզում էի լինել աշխարհի ամենաազատ մարդկանցից մեկը: Ինձ Համար ազատություն ասածը չի նշանակում ուզածս տեղը գնալու և ցանկացածս անելու Հնարավորություն: Դա կարող է անել ամեն ոք (չատերն այդպես էլ անում են):

Ազատությունն այն բանն անելու կարողությունն է, ինչը քո պարտքն ես Համարում: Շատերը գիտեն իրենց անելիքը, բայց անելու կամքի ուժ չունեն: Նրանք ապրում են զանազան կապանքների մեջ:

Եվ այսպես, ես սկսեցի փնտրել Հարցերիս պատասխանները: Ինձ այն ժամանակ թվում էր, թե բոլորը կամ գրեթե բոլորն իրենց ուրույն Հավատն ունեն: Եվ ես արեցի ամենապարզ քայլը՝ գնացի եկեղեցի: Բայց, Հավանաբար, Հոգուս օտար եկեղեցի էի ընտրել: Զեղանից ոմանք գիտեն, թե ինչը նկատի ունեմ: Ներսում ավելի վատ էի գզում, քան դրսում: Գնացի առավոտյան, գնացի ցերեկը, գնացի երեկոյան... և՛ ընդունայն:

Առհասարակ ես շատ գործնական մարդ եմ, և երբ մի բանում չեմ Համոզվում, ձեռք եմ քաշում դրանից: Եվ ես խաչ քաշեցի կրոնի վրա:

Այդ ժամանակ ես մտածեցի. գուցե ամենազիլավորը Հասարակության մեջ երևելի դիրք գրավե՞լն է: Առաջնորդ դառնալ, պայքարել մի բանի Համար, նվիրվել այդ պայքարին, «դառնալ նշանավոր». գուցե ա՞յդ է կյանքի իմաստը:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Առաջին համալսարանում, որտեղ սովորել եմ, ուսանողական կազմակերպությունների ղեկավարները տնօրինում էին գրամագլուխները և շատ մեծ դեր էին խաղում համալսարանական կյանքում: Ես իմ թեկնածուությունն առաջագրեցի առաջին կուրսի ավագի ընտրությունների ժամանակ, և ինձ ընտրեցին: Այդ ամենը շատ հաճելի էր. համալսարանում բոլորն ինձ ճանաչում էին, բոլորն ինձ բարևում էին, ես որոշումներ էի ընդունում, տնօրինում համալսարանական և ուսանողական փողերը, սեփական հայեցողությամբ հրավիրում էի զանազան դասախոսների: Մի խոսքով՝ այդ ամենը շատ լավ էր, սակայն, նախորդ գեղամունքների պես, դա էլ հետզհետե սկսեց ծանձրացնել:

Երկուշաբթի առավոտյան ես արթնանում էի ուժեղ գլխացավով, որովհետև նախորդ օրն ուշ էի պառկել քնելու, և մտածում էի. վա՛յ, նորից հինգ օր պիտի սպասեմ: Ատամներս սեղմած՝ մի կերպ սպասում էի, թե երբ նորից ուրբաթ կլինի: Իմ ամբողջ երջանկությունն այդ երեք՝ ուրբաթ, շաբաթ ու կիրակի երեկոներն էին: Հետո նորից էր սկսվում արատավոր շրջանը:

Անշուշտ, ինձ հաջողվեց թող փչել բոլոր համալսարանականների աչքին, նրանք կարծում էին, թե ես բախտավորների բախտավորն եմ: Ընտրարշավների ժամանակ մենք նույնիսկ մի ցուցապաստառ էինք պարզում՝ «Երջանկություն - Ջոշ»: Ուսանողական փողերով ես անվերջ երեկույթներ էի կազմակերպում, իսկ նրանք այդպես էլ չէին հասկանում, որ իմ կոչեցյալ «Երջանկությունը» ոչնչով չի տարբերվում ցանկացած ուրիշ մարդու «Երջանկությունից»: Այն ամբողջովին կախված էր հանգամանքներից: Եթե ամեն բան հարթ էր ընթանում, ես երջանիկ էի, իսկ երբ գործերը վատ էին, վատ էր նաև հոգեվիճակս:

Ես կարծես մի նավակ էի ամեհի օվկիանոսի մեջ, որին դեսուզեն են նետում ալիքները՝ հանգամանքները: Աստվածաշնչում մի բառ կա, որը շատ հարմար է գալիս այդպիսի կյանքը նկարագրելու համար՝ դժոխք: Սակայն չգիտեի մեկին, որն ապրեր այլ կերպ, չկար մեկը, որ ինձ սովորեցներ ապրել ուրիշ ձևով և կյանքս փոխելու ուժ տար: Եվ ես սկսեցի մշտական անբավարարություն զգալ:

Չեմ կարծում, թե ամերիկյան համալսարաններում շատ կան այնպիսիք, որոնք ավելի անկեղծ են կյանքի կարևորությունը, ճշմարտությունն ու իմաստը փնտրելու իրենց փորձերի մեջ, քան ես եմ: Ես չէի գտնում այդ իմաստը, բայց սկզբում դա պարզապես չէի ըմբռնում: Մի անգամ նկատեցի, որ համալսարանում մարդկանց մի փոքր խումբ կա, որի կյանքը նման չէր մերին: Խմբում ութ ուսանող և երկու դասախոս էին:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

ԹՎում էր՝ նրանք գիտեին, թե ինչու են Հավատում իրենց Հավատացած բանին: Ես ուզեցի մտախիլաց ծանոթանալ նրանց հետ: Ինձ Համար կարևոր չէր նրանց՝ ինձ հետ Համաձայն լինել-չլինելը: Ես շատ բարեկամներ ունեմ, որոնք Համամիտ չեն իմ Համոզմունքներին: Բայց դա չի խանգարում մեր բարեկամությունը, ես միշտ Հարգում եմ Համոզմունք ունեցողին: Նման մարդիկ ինձ Հազվադեպ են Հանդիպել, բայց երբ Հանդիպել են, նրանցով շատ եմ հիացել: Այդ պատճառով էլ երբեմն ինձ անհամեմատ շատ ավելի լավ եմ գգում «ձախ» ակտիվիստների միջավայրում, քան՝ իմ եղբայրակից քրիստոնյաների: Քրիստոնյաներ կան, որ անակզունք են, մեկ նալին են խփում, մեկ՝ մեխին: Ես երբեմն ենթադրում եմ, որ նրանցից ոմանք պարզապես քրիստոնյա են ձևանում: Իսկ ահա այս փոքրիկ խմբի մարդիկ միանգամայն այլ տպավորություն էին թողնում. թվում էր՝ նրանք գիտեին, թե ինչ են անում: Ուսանողի Համար բավական անսովոր բան է:

Այդ մարդիկ սկսեցին ինձ լրջորեն հետաքրքրել. նրանք ոչ թե հենց այնպես էին խոսում սիրո մասին, այլ փորձում էին օգնել: Թվում էր՝ նրանք միշտ կարող են կտրվել, վեր կանգնել Համալսարանական կյանքի Հանգամանքներից: Տպավորությունս այնպիսին էր, թե մնացածները պարզապես թաղված են այդ Հանգամանքների մեջ: Մի շատ կարևոր բան էս, որ աչքիս էր ընկել. նրանք երջանիկ էին թվում, և նրանց երջանիկությունը կարծես կախում չուներ արտաքին Հանգամանքներից: Նրանք, ասես, բերկրանքի ինչ-որ մշտական ներքին աղբյուր ունեին: Նրանք զգվելու աստիճան երջանիկ էին: Պարզ ասած՝ նրանք ունեին այն, ինչ չունեի ես:

Յուրաքանչյուր ուսանողի նման ես էլ միշտ ուզեցել եմ ունենալ այն, ինչն ուրիշներն ունեն, իսկ ես՝ ոչ: Արդյոք դա չէ՞ պատճառը, որ ուսանողական կայանատեղիներում հեծանիվները կողպաշղթայով կապում են, որպեսզի չգողանան: Եթե կրթությունն ի գորու լինելու լուծելու բոլոր խնդիրները, ապա Համալսարանները կլինեին մարդկային ընկերակցությունների մեջ ամենաբարոյականը: Բայց իրականում բնավ էլ այդպես չէ: Եվ ահա որոշեցի բարեկամանալ այդ անհասկանալի մարդկանց հետ:

Այդ որոշումն ընդունելուց երկու շաբաթ անց մենք նստած էինք ուսանողական ակումբի կլոր սեղանի շուրջը՝ վեց ուսանող և երկու դասախոս: Զրույցն Աստծո մասին էր: Երբ դուք վստահ չեք ձեր գիտելիքներին, իսկ կողքիններդ Աստծո մասին են խոսում, Հաճախ ձգտում եք բոլորի մոտ ձեզ ցույց տալ ավելի խելացի, քան կաք: Ամեն կրթարան ունենում է մի մեծաբերան, որը միշտ ասում է. «Պա՛հ, քրիստոնեություն, հա՛, հա՛, հա՛: Դա տկարամիտների Համար է, իսկ մեզ՝ մտավորականնե-

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

րիս, պետք չէ»: Սովորաբար որքան մեծ է լինում բերանը, այնքան փոքր է լինում գլխի տարողությունը:

Մեր խոսակցության մեջ ինձ դիպչողական ինչ-որ բան կար: Այդ գգացումից ազատվելու համար հայացքս հառեցի խմբի մի սիրունատես աղջկա վրա (առաջ կարծում էի, թե բոլոր հավատացյալներն անճոռնի մարդիկ են), ապա, մեկնվելով աթոռին, որպեսզի նրանք չմտածեն, թե այդ ամենը ինձ շատ է հետաքրքրում, հարցրի.

- Լսե՛ք, այդ ի՞նչն է այդքան ազդել ձեր կյանքի վրա: Ինչո՞ւ ձեր ապրելակերպն այնպիսին չէ, ինչպես մյուս ուսանողներինը, ակտիվիստներին ու դասախոսներինը: Ո՞րն է ձեր կյանքի իմաստը:

Սիրունիկ ուսանողուհին իրոք գիտեր, թե ինչի է հավատում: Նա առանց ժպիտի նայեց ուղիղ աչքերիս և արտասանեց երկու բառ, որոնք չէի սպասում լսել համալսարանում՝ ի պատասխան կյանքի իմաստի մասին տվածս հարցի.

- Հիսուս Քրիստոսը:

Ես պատասխանեցի.

- Օ՛Ֆ, Աստծո սիրուն, վերջ տանք այդ ցնդաբանությունը: Ինձ զզվեցրել է կրոնը, զզվեցրել է եկեղեցին, զզվեցրել է Աստվածաշունչը: Կրոնի մասին խոսակցությունը զառամախտ է:

Նրա պատասխանն էր.

- Լսե՛ք, մի՛թե ես ասացի «կրոն»: Ես ասացի՝ «Հիսուս Քրիստո՛ս»:

Եվ նա խոսեց բաներ, որ մինչ այդ չէի լսել: Քրիստոնեությունը սոսկ կրոն չէ: Կրոնը մի ճանապարհ է, որը մարդիկ բարի գործերով փորձում են բացել առ Աստված: Իսկ քրիստոնեությունն այն է, երբ Աստված է գալիս մարդկանց մեջ Հիսուս Քրիստոսի միջոցով և նրանց համար ճանապարհ բացում առ Ինքը:

Համալսարաններում հավանաբար ավելի շատ, քան այլուր, թյուր պատկերացումներ են տարածված քրիստոնեության մասին: Վերջերս ես ծանոթացա մի դասախոսի հետ, որը պարապմունքի ժամանակ ուսանողներին ասաց.

- Ամեն ոք, ով մտնում է եկեղեցի, դառնում է քրիստոնյա: Ես առարկեցի.

- Ինչ է, երբ դուք մտնում եք ավտոտնակ, մեքենա՞ եք դառնում: Ի՞նչ կապ կա այստեղ: Քրիստոնյան Քրիստոսին հավատացողն է:

Իմ նոր բարեկամներն ինձ առաջարկեցին քննադատաբար վերլուծել հետևյալ պնդումները՝ որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է. որ մարդեղանալով՝ ապրել է սովորական մարդկանց մեջ և զոհվել է խաչի վրա

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

մարդկության մեղքերի համար. որ թաղվել և երրորդ օրը հարություն է առել մեռելներից. և որ Նա կարող է վերափոխել մարդու կյանքը նաև այսօր:

Ինձ թվում էր, թե այս ամենը դատարկ կատակ է: Անկեղծ ասած, այդ ժամանակ ես կարծում էի, թե քրիստոնյաները մեծավ մասամբ պարզապես ապուշներ են: Նրանցից ոմանց ես առաջ էլ էի հանդիպել: Պարապմունքների ժամանակ միշտ սպասում էի, թե երբ է նրանցից մեկը վեր կենալու և խոսելու, որ ջախջախի ու մեջքի վրա պառկեցնեն: Սակայն, ինչպես հետո պարզվեց, ես ուղղակի ոչինչ չէի հասկացել:

Այդ մարդիկ ինձ հանդիստ չէին տալիս, և վերջապես, ես «ընդունեցի մարտահրավերը»: Ճիշտ է, ես դա արեցի հպարտությունից դրդված՝ նրանց հերքելու համար: Բայց չգիտեի, որ գործ էի ունենալու փաստերի հետ: Չգիտեի, որ պիտի ծանոթանայի ապացույցներին և գնահատեի դրանց հավաստիությունը: Վերջի վերջո ես հանգեցի այն հետևությունը, որ Հիսուս Քրիստոսն իրոք Նա է, ում տեղը որ Իրեն դնում է:

Նրանց տված առաջին երկու գիրքը ես կարդացի քրիստոնեությունը հերքելու նպատակով: Դա ինձ չհաջողվեց: Եվ այդ ամենն ավարտվեց նրանով, որ հերքելու փոխարեն ինքս հարեցի քրիստոնեությանը: Եվ ահա արդեն քսան տարուց ավելի է, ինչ վավերական վկայություններով հաստատում եմ իմ այն համոզմունքը, որ Քրիստոսի հանդեպ հավատն ունի իր փաստարկված ու բանական հիմքը:

Սակայն այդ ժամանակ ես չփոթահար էի. բանականությունս ասում էր, որ ես առարկելու բան չունեմ, իսկ կամքս ինձ քաշում-տանում էր ետ:

Ես հայտնաբերեցի, որ քրիստոնեության ճանապարհը նորադարձ մարդու անձի համար հղի է ծանր փորձություններով: Հիսուս Քրիստոսն ուղղակի մարտահրավեր էր նետել իմ գիտակցական կամքին, Նա կոչ էր անում հավատալ Իրեն:

Այդ կոչը հնչում էր մոտավորապես այսպես. «Ահա ես դուան առաջ եմ և բախում եմ. եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, նրա մոտ կմտնեմ» (Հայտ. 3:20): Ինձ համար կարևոր չէր, թե Նա կարող էր կամ չէր կարող քայլել ջրի վրայով և ջուրը գիւնի դարձնել: Ինձ աճաբարներ պետք չէին: Բայց մի բան ինձ հանգիստ չէր թողնում: Բանականությունս ասում էր, որ քրիստոնեության մեջ է ճշմարտությունը, բայց հոգիս խռովքի մեջ էր մնում:

Ամեն անգամ, երբ հանդիպում էի իմ ողբչուն քրիստոնյա բարեկամներին, բախումնային իրավիճակ էր առաջանում: Եթե երբևիցե հանդիպել եք երջանիկ մարդկանց հոգեկան խռովքի ժամանակ, ապա կիմանաք, թե

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

ինչպես կարող է այդ պահին ձեզ բարկացնել ուրիշի երջանկությունը:

Նրանք այնքան երջանիկ էին, իսկ ես այնքան դժբախտ, որ երբեմն տեղիցս վեր էի թռչում և դուրս վազում սենյակից: Այն վիճակին հասա, որ անկողին էի մտնում երեկոյան ժամը տասին ու չէի կարողանում քուն մտնել մինչև առավոտյան ժամը չորսը: Արդեն պարզ էր, որ ես պետք է կարելվույն չափ շուտ մի բան վճռեմ, որ չցնդեմ: Նոր գաղափարներն ինձ համար շատ մեծ նշանակություն են ունեցել, սակայն դրանց պատճառով խելքս կորցնել չէի ցանկանում:

Եվ հենց այն պատճառով, որ գիրկս բաց էր նոր գաղափարների առաջ, 1959 թվականի դեկտեմբերի 19-ի երեկոյան 8.30-ին, համալսարանի երկրորդ կուրսում, ես դարձա քրիստոնյա:

Մի օր ինձ հարցրին.

- Իսկ ինչո՞ւ ես քրիստոնյա դառնալուդ հարցում այդքան վստահ:

- Որովհետև դրան ներկա եմ եղել, - պատասխանեցի ես, և ամբողջ կյանքս այդ պահից փոխվել է:

Այդ երեկո ես աղոթք արեցի: Ես աղոթքի խոսքեր չընջացի, որպեսզի ճանապարհ գտնեի դեպ հարություն առած՝ կենդանի Քրիստոսը, Որն այդ օրից ի վեր վերափոխել է կյանքս:

Նախ և առաջ ես ասացի.

- Տե՛ր իմ Հիսուս, շնորհակալ եմ Քեզնից, որ խաչի վրա մեռար ինձ համար:

Այնուհետև ասացի.

- Խոստովանում եմ քեզ այն բաները, որոնք քեզ տհաճ կլինեն, և խնդրում եմ ներս ինձ և մաքրես իմ հոգին (Աստվածաշնչում գրված է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմրի պես են, ապա ձյան պես ճերմակ կդարձնեմ»): Հետո ասացի.

- Այս պահին կարողացածիս չափ քո առջև բացում եմ իմ սիրտն ու կյանքը և հավատում եմ Քեզ որպես իմ Տիրոջ ու իմ Փրկչի: Քեզ եմ հանձնում իմ ողջ կյանքը: Փափագում եմ, որ Դու փոխես ինձ Հիմնովին: Ինձ դարձրու այնպիսին, որպիսին դու մտահղացել էիր ինձ արարելիս:

Եվ վերջում.

- Շնորհակալ եմ, որ Դու կյանքիս մեջ մտար հավատի միջոցով:

Իմ հավատն առաջացել է ոչ թե տգիտությունից, այլ խարսխված է վկայությունների, պատմական փաստերի և Աստծո խոսքի վրա:

Գուցե կրոնասեր մարդկանցից լսած լինեք, որ իրենք «չանթահարություն» պես բան են ապրել: Երբ աղոթքս ավարտեցի, ոչ մի նման բան ինձ չեղավ: Ոչ մի: Դեռ ավելին. այդ որոշումն ընդունելուց հետո ինձ ավելի

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻՆԵԼ

վատ զգացի: Ես վատ էի զգում Ֆիզիկապես, անգամ սրտխառնոց ունեցա: Շատ վատ էի: Մտածեցի. «Այս ի՞նչ արիր, ո՞րը ընկար, հիմա՞ ուր ես քշվելու»: Այնպիսի զգացողություն ունեի, կարծես խելակորույս նետով էի հորձանուտի մեջ: Կասկած չուներ, որ բարեկամներից շատերը հենց այդպես էլ մտածում էին իմ դարձի գալու մասին:

Միայն մի բան կարող եմ ձեզ ասել. անցավ կես տարի, հետո էլի մի տարի, և տեսա, որ ոչ մի հորձանուտ էլ չկա:

Իսկ կյանքս իրոք վերափոխվել էր:

Մի անգամ ես բանավիճում էի համալսարաններից մեկի պատմությունից մաթեմատիկայի վարիչի հետ: Ես ասացի, որ իմ կյանքը վերափոխվել է, բայց նա ինձ ընդհատեց.

- Մաք-Դաուել, դուք, ի՞նչ է, փորձում եք մեզ համոզել, որ Աստված իրո՞ք փոխել է ձեր կյանքը այս դարում. հետաքրքիր է ի՞նչ ձևով:

Անցավ քառասունհինգ րոպե, և նա ասաց,

- Դե լա՛վ, լա՛վ: Բավական է:

Ես մասնավորաբար պատմեցի, որ առաջ անդադրում ու անհանգիստ մարդ էի: Միշտ ինձ համար որևէ զբաղմունք էի փնտրում, մեկ վազում էի ընկերուհու մոտ, մեկ տղաների հետ նստած անվերջ լեզվիս էի տալիս, մեկ թրև էի գալիս համալսարանի բակում, իսկ ներսումս իսկական պտտահողմ էր: Ես պարզապես հակասությունների քայլող կծիկ էի: Փորձում էի պարսպել կամ հենց այնպես մտածել, բայց չէի կարողանում կենտրոնանալ: Եվ ահա քրիստոնյա դառնալուց մի քանի ամիս անց ես գտա իմ հոգեկան անդորրը: Ինձ ճիշտ հասկացեք. դա ամենեկին էլ չի նշանակում, որ իմ կյանքում այլևս հակասական վիճակներ չկային: Հավատարմով Հիսուսին՝ «ստացել» էի դրանք հաղթահարելու ունակությունը:

Ես այն չէի փոխի աշխարհի բոլոր դանձերի հետ:

Բացի այդ, ես ծանր բնավորություն ունեի: Մի խեթ հայացքն էլ բավական էր, որ պայթեի: Մարմնիս վրա տհաճ սպիներ են մնացել մի ծեծկուտոցից, երբ քիչ էր մնում մարդ սպանելի: Այն ժամանակ առաջին կուրսի ուսանող էի: Ընդ որում, վատ բնավորությունս այն աստիճան անբաժան էր իմ անձից, որ փորձ անգամ չէի անում ինչ-որ բան փոխելու: Եվ ահա մի օր, ընկնելով նման ճգնաժամային կացությունից, հանկարծ զգացի, որ իմ ամբողջ դուրբաբերությունը չքացել է: Տասնչորս տարվա մեջ միայն մի անգամ եմ համբերությունից ելել, այն էլ՝ վեցը տարի առաջ:

Եվս մի բան, որ ինձ պատիվ չի բերում: Ես այդ մասին խոսում եմ ուղղակի այն պատճառով, քանի որ շատերն են տառապում սույն արատից:

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

Խոսքս ատելության մասին է: Ես գտել եմ դրանից ազատվելու միջոցը, դա Հաղորդակցությունն է Հարություն առած, կենդանի Քրիստոսի Հետ: Պատանեկությանս տարիներին ես շատ բաներ եմ ասել: Իհարկե, ես աշխատում էի ցույց չտալ ատելությունս, բայց անվերջ այն զգում էի իմ ներսում: Ատում էի մարդկանց, իրերը, խոչընդոտները: Շատերի նման ես էլ չէի վստահում ուժերիս: Ինձնից որևէ բանով տարբերվող ամեն Հանդիպածի մեջ ինձ Համար վտանգ էի տեսնում:

Բայց կար մեկը, որին աշխարհում ամենաշատն էի ատում: Դա իմ Հայրն էր: Ես մահու չափ ատում էի նրան: Նա ինձ Համար պարզապես փողոցային Հարբեցող էր: Եթե դուք ծնվել եք փոքրիկ քաղաքում և տան մեջ Հարբեցող ծնող ունեք, կիմանաք, թե դա ինչ բան է: Այդ մասին գիտի ողջ քաղաքը: Դպրոցում ընկերներս կատակում էին, թե իմ Հայրն արդեն «ճոճվում է» ինչ-որ տեղ: Նրանք չէին Հասկանում, որ վիրավորում են ինձ: Ես ծիծաղում էի նրանց Հետ, բայց արի և Հարցրու, թե ի՞նչ էր կատարվում Հոգումս. սոսկալի տառապում էի: Երբեմն գոմ էի գնում և տեսնում, թե ինչպես է մայրս դաժանորեն ծեծված և ուժասպառ՝ ընկել թրիքի վրա: Երբ Հյուրերի էինք սպասում, Հորս Հանում էի տնից, կապկպում ու թողնում գոմի մեջ, իսկ նրա մեքենան Հեռացնում էի տան մոտից: Մեր բարեկամներին ասում էինք, թե Հայրս տեղ է գնացել: Չեմ կարծում, թե աշխարհում որևէ մեկը մարդուն ատեր ավելի ուժգին, քան ես՝ իմ Հորը:

Քրիստոսին Հավատարուս օրվանից մոտ Հինգ ամիս անցնելուց Հետո կյանքս լցվեց սիրով, որն Աստված էր պարգևել Հիսուս Քրիստոսի միջոցով: Այդ սերն ատելության Համար տեղ չթողեց: Եվ Հանկարծ ես կարողացա ուղիղ Հորս աչքերին նայել ու անկեղծորեն ասել.

– Հայրի՛կ, ես քեզ սիրում եմ:

Առաջվա արածներիցս Հետո սա ցնցեց նրան...

Երբ ես փոխադրվել էի մասնավոր Համալսարան, լուրջ ավտովթարի ենթարկվեցի: Ինձ տուն բերին Զարգված վզով: Երբեք չեմ մոռանա, ինչպես մոտեցավ ինձ Հայրս: Նա Հարցրեց.

– Տղա՛ս, մի՞թե դու կարող ես այսպիսի Հորը սիրել:

Ես պատասխանեցի.

– Հայրի՛կ, կես տարի առաջ ես ատում էի քեզ...

Այնուհետև ես սիրտս բացեցի նրան, թե ինչպես եմ Քրիստոսին դարձել.

– Պարզապես կյանքս բաց արի Քրիստոսի առաջ: Ես դեռ չեմ կարող լրիվ բացատրել այդ, բայց կարող եմ ասել, որ ձեռք եմ բերել կարողություն՝ սիրելու ոչ միայն քեզ, այլև բոլոր մարդկանց, ինչպես որ կան:

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

Քառասունհինգ րոպե անց ես ապրեցի կյանքիս ամենաուժգին ցնցումներից մեկը: Իմ մերձավորագույն արյունակիցը, որն ինձ գիտեր իր հինգ մատի պես, ասաց.

- Որդի՛ս, եթե Աստված կարող է այդպես փոխել նաև իմ կյանքը, ինչպես որ աչքիս առաջ քոնը փոխեց, ապա ես էլ եմ ուզում փորձել...

Եվ այդժամ Հայրս աղոթեց ինձ հետ և Հավատաց Քրիստոսին:

Սովորաբար մարդը փոխվում է օրերի, ամիսների, երբեմն էլ՝ տարվա ընթացքում: Իմ կյանքը փոխվել է մեկ ու կես տարում: Իսկ Հայրս փոխվեց մեկից՝ աչքերիս առաջ: Ասես մեկը ձեռքը պարզեց և միացրեց լույսի անջատիչը:

Երբեք, ո՛չ դրանից առաջ և ո՛չ էլ հետո, ես չեմ տեսել նման կտրուկ կերպարանափոխություն: Դրանից հետո Հայրս մեն՝մի անգամ ձեռքն առավ վիսկիի շիշը: Մոտեցրեց շուրթերին ու դրեց տեղը:

Դրանից ես հանգեցի միակ հնարավոր հետևություն. Հիսուս Քրիստոսի հանդեպ Հավատն իրոք հիմնովին փոխում է մարդու կյանքը:

Կարող են ծիծաղել քրիստոնեություն վրա, քամահերել և ծաղրել քրիստոնյաներին: Բայց նա գորություն ունի: Քրիստոսը կյանք է փոխում: Բայց նա գործուն գորություն ունի, Քրիստոսը փոխում է մարդու կյանքը: Եթե Հավատում եք Քրիստոսին, ապա փոխեք ձեր դիրքն ու միտքը. Հիսուսը վերափոխում է մարդու կյանքը:

Սակայն քրիստոնեությունը չի կարելի գոռով փաթաթել մարդու վզին: Դուք ձեր կյանքը ունեք, ես՝ իմը: Ես միայն կարող եմ ձեզ հաղորդակից դարձնել իմ սովորածին: Մնացյալը ձեր գործն է:

Գուցե իմ աղոթքը ձե՞զ էլ օգնի: Ահա այն.

Տե՛ր Հիսուս, քո կարիքն ունեմ, որովհետեւ ես մեղավոր մարդ եմ:

Շնորհակալ եմ, որ իսաչի վրա մեռար ինձ համար:

Առաքիլ ինձ փրկարար հավատդ:

Ների՛ր ինձ – մաքրի՛ր հո՞ւս:

Սիս այս պահից ընդունում եմ Քեզ որպես

իմ Փրկիչ ու իմ Տեր:

Դարձրու ինձ այնպիսին, ինչպիսին մտածել է, որ

լինեմ մեծդ Աստվածը՝

Հայրը, Որդին – Սուրբ Հո՞ւս:

Ամեն:

ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

**ԳՐՔՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ  
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

|                        |                        |
|------------------------|------------------------|
| Աբրահամ 72, 74, 78     | Գրինլիֆ, Սայմոն 52, 70 |
| Ադամ 80                |                        |
| Ալեքսանդր              | Դավիթ 54, 75           |
| Մակեդոնացի 63          | Դանիել                 |
| Ալթիաուս, Պաուլ 66     | Դարլին□, Լորդ 71       |
| Ալփեոս 46              | Դյուպոն, ժակ 58, 61    |
| Անանիա 49              | Դյուրանտ, Ուիլ 40      |
| Անանիա, աշակերտ 59, 60 |                        |
| Ջ.Ն. Անդերսոն 68       | Եսայի 15, 54, 74       |
| Անդերսոն, Ռոբերտ 17    | Եսավ 74                |
| Անդրեաս 46             | Եվա 80                 |
| Առնոլդ, Թոմաս 69       | Եվսեբիոս 42            |
| Արատես 58              |                        |
| Արիստոտել 36, 38       | Ջեքեդենու 46           |
| Աքվինացի, Թովմա 83     |                        |
|                        | Էդերսհայմ, Ալֆրեդ 55   |
| Բառնաբաս 48            | Էնդրյուս, Էլիաս 62     |
| Բարթողոմիոս 46         | Էպիմենիդես 58          |
| Բաուր 31               |                        |
| Բեռնուլ, Միլար 54      | Թադեոս 46              |
| Բ.Ֆ.Բյոբն              | Թեոփիլոս 42            |
| Ա.Բ. Բրյուս 55         | Թովմաս 46, 48          |
| Ֆ.Ֆ. Բրյուս 36, 40, 43 | Թուկիդիդես 36          |
| Բուդդա 9, 79           |                        |
|                        | Իսմայել 74             |
| Գամաղիել 17, 58        | Իսահակ 74              |
| Գարթնհոուս, Ջակոբ 54   | Իվան Ահեդ 29           |
| Գեյնոր 18              | Իրենայոս 42            |
| Գիբոն, Էդվարդ 49       |                        |
| Գոթշալք, Լուի 38, 42   | Լատուրեթ, Քենեթ        |
| Գրանտ, Ռոբերտ 40       | Սքոթ 7, 20, 51, 55     |
| Գրին, Մայքլ 49, 51     | Լեդ, Ջորջ Էլդոն 55     |
| Գրինլիին, Ջ.Հարոլդ 37  | Լեյք, Կիրստակ 67       |

## ՋՈՇ ՄԱՔ-ԴԱՌԻԵԼ

- Լեքի, Ռիլյամ 21  
Լիթթ, Փոլ 51  
Լինթոն, Էրվին 18  
Լիթլտոն, Լորդ 63,  
Ք. Ս. Լյուիս 19, 24  
Լյուսանիաս 39
- Կեսար 36  
Կեիաս, տե՛ս Պետրոս  
Կլաուսներ, Չոպեֆ 54  
Կլեանթես 58  
Կղեմես 63  
Կոնֆուցիոս 9
- Հաբեթ 74  
Հակոբ 74  
Հակոբոս 46  
Հակոբոս, Տիրոջ  
եղբայրը 46, 48, 49  
Հարցլեր, Հարոլդ Հ. 76  
Հեսսե 75  
Հերոդոտոս 36  
Հերովդես 39, 78  
Հիլլել 58  
Հիսուս, տե՛ս Հիսուս  
Քրիստոս  
Հիսուս Նապոլրեցի, տե՛ս  
Հիսուս Քրիստոս  
Հիսուս Քրիստոս 1-98  
Հովհաննես 39, 42, 43, 46,  
47, 49, 66, 80  
Հովհաննես Մկրտիչ 75  
Հովսեփոս Փլավիոս 49  
Զ.Չ. Հորտ 20  
Հուդա (մատնիչ) 74  
Հուդա Սահապետ 74  
Հուդա (Դամասկոսցի) 59
- Ղուկաս 35, 38, 39, 43, 51  
Մաթին՝ի, Հարոլդ 77  
Մահմեդ (Մուհամմեդ) 9, 79  
Լ. Մայեր 66  
Մայեր, Փոլ 36  
Մադաքիա 81  
Մատթեոս շձ, 46  
Մարթա 11  
Մարիամ 78  
Մարկոս 42  
Մաք-Բրայդ, Արչիբալդ 63  
Մաք-Գինլի, Լորենս 40  
Ա.Հ. Մաք-Նիլ 36  
Մելիսոս, Ծրեդ Չոն 76  
Մենանդրոս 58  
Մեսիա, տե՛ս  
Հիսուս Քրիստոս  
Մոնտ՝ոմերի, Չոն  
Ուորվիկ 38, 74  
Մովսես 77  
Մորիս, Լեոն 15  
Մորիսոն, Ծրանկ 70  
Նաթանայել 11  
Նապոլեոն 26, 49  
Գ.Ա. Նասեր 76  
Ներոն 46  
Հ. Նոթս 70  
Նոյ 74  
Նոյլ 26  
Շաֆ, Ֆիլիպ 24, 25, 66  
Ա. Շերվին-Ուայթ 43  
Շեքսպիր 29  
Շտրասուս, Դեյվիդ  
Ճրիդրիս 73

## ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ

- Որո՞հնեւ 56
- Չեստեր Բիտտ 34
- Չեյֆեր, Լյուիս Ափեր 16
- Պապիաս 42
- Պասկալ, Բլեյ 54
- Պետրոս, 11, 38, 39, 40,  
42, 46, 48, 52, 54, 69
- Պոլիկարպոս 42
- Պողոս 11, 17, 40, 42, 43, 48,  
49, 56, 58, 59, 61, 62, 63,  
65, 78
- Պոնտաօրի Պիղատոս 39
- Ջաստին 66
- Ջեք 61
- Ռոբրինսոն, Ջոն 35
- Ռայլանդ, Ջոն 34
- Ռամսի, Ուիլյամ 34, 35, 43,  
65
- Ռենան, Էռնեստ 7
- Ս. Ռոբերտսոն 14
- Ք. Սանդերս 37, 38
- Սեմ 74, 75, 84
- Սթոներ, Պիտեր 76, 77
- Սթորի, Ջոզեֆ 70
- Ս. Սթրոն 10
- Սիմոն 46
- Սողոս, տե՛ս Պողոս
- Ստեփանոս 12
- Ստրաբոն 62
- Վ.Բ. Սուլթ 17
- Ե.Ֆ.Սքոթ 57
- Տերտուղիանոս 56
- Տիբերիոս 42
- Վ.Ջ. Ուելչ 7
- Ուեսթ, Ջիլբերտ 63
- Ուեսքոթ, Բրուք Ջոն 69
- Ուիլքիհֆ 15
- Ուորքման, Վերբերտ 56
- Փեսոնս 40
- Փիլիպոս 39
- Փիլիպոս, առաքյալ 46
- Փինոք, Քլարկ Վ. 26, 48
- Քամ 74
- Քին՝ Մարտին  
Լյութեր 31, 76,
- Ջ. Քենեդի 76
- Քենյոն, սրբ Ֆրեդերիկ 37
- Քիսթմեյքեր, Սայմոն 36
- Քոլբ 26
- Քոնանտ, Ջեյմս 30
- Քրոուլ, Միլար 34
- Օլբրայթ, Ուիլյամ 34, 36, 37
- ձ.Ֆ. Ֆիշեր 26
- Ֆրի, Ջոզեֆ 43

ՋՈՇ ՄԱԲ-ԴԱՈՒԵԼ

MORE THAN A CARPENTER

by Josh McDowell

*ՋՈՇ ՄԱԲ-ԴԱՈՒԵԼ*

*ՈՉ ՄԻԱՅՆ ՀՅՈՒՄՆ*

*Ա Հրատարակություն*

*Երևան 1991 թ.*

*Բ Հրատարակություն*

*Երևան 1992 թ.*

*Գ Հրատարակություն*

*Երևան 2001 թ.*

*Դ Հրատարակություն*

*Երևան 2004 թ.*

*Մեզ կարող եք գրել հետևյալ հասցեով՝*

*Երևան-10, Փ/Ա.-118,  
«ՆՅՈՒ ԼԱՅՑ ԱՐՄԵՆԻԱ»  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ*

*Տպաքանակը՝ 23000, չափեր՝ 60x84 1/16  
Տպագրվել է «ԳԱՍՊՐԻՆՏ» տպագրատանը:*